ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Ի ԼՈՅՍ ԱԾԵԱԼ

ԲԱՂԴԱՏՈՒԹԵԱՄԲ ՁԵՌԱԳՐԱՑ

Ի ՁԵՌՆ

Գ. ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ, ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, ՍՏ. ԿԱՆԱՅԵԱՆՑ, Մ. ԱԲԵՂԵԱՆ,
Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԵՒ ԱՅԼՈՑ

ԸՆԴ ՎԵՐԱԿԱՑՈՒԹԵԱՄԲ

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ· ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ·

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՄՆԱԺՈՂՈՎ

ԷՋՄԻԱԾԻՆ—ՏՓՂԻՍ.

ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑՒՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ

Մ. ԱԲԵՂԵԱՆ ԵՒ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ.

ԾԱԽԻՒՔ ՏԵԱՌՆ ՍՈՒՔԻԱՍԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՊԱՐԶԵԱՆՑ.

Տ Փ Ղ Ի Ս

ԱՐԱԳԱՏԻՊ ՄՆԱՑԱԿԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 3.

1913.

3060

EX BIBLIOTHECA DR^IS. GOUSSEN
BONNAE (BIBL. UNIV.)

ՅԱՌԱՋԱԲԱՆ

I.

Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՏՊԱԳԻՐՆԵՐՆ ՈՒ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ.

1. Առաջին տպագիր, Ամստերդամ, 1695 թ.=*է*: *2.* Երկրորդ տպագիր, Լոնդոն, 1736 թ.—*ա*: Թոմաս Վանանդեցու բաղդատած ընթերցուածները=*ա¹*: Երրորդ տպագիր, Վենետիկ, 1752 թ. *3.* Չորրորդ տպագիր, Վենետիկ, 1827: Հինգերորդ տպագիր, հայ-ֆրանս. հրատ., Վենետիկ 1841: Վեցերորդ տպագիր, հայ-ֆրանս., Պարիզ 1345. Եօթներորդ տպագիր, Վենետիկ, 1843: Վենետկի «վեց անթերի օրինակների» բաղդատութիւնը: *4.* Ութերորդ տպ., Վենետիկ, 1865: Իններորդ տպ., Թիֆլիս, 1881 թ.=Վ.: *5.* Տասներորդ տպ., Վենետիկ 1881 թ.=*x*: Տասնումէկերորդ տպ., Թիֆլիս, 1910 թ.: *6.* Տպագիրների նշանակութիւնը ձեռագրական տեսակէտից: *7.* Կարենեանցի բաղդատութիւնները երկու ձեռագրի, Թիֆլիս, 1858 թ.: Երկրորդ ձեռագիրը=Կ²: Ն. Մառի եւ Գ. Տ.-Մկրտչեանի բաղդատութիւնը:

8. Խորենացու օրինակների երկու մեծ խմբերը. Ա=Ամստերդամի օրինակի խումբ. Տ=Վենետկի, սովորական Տպագրի խումբ: *9.* Խ=Խառնուրդ խմբի օրինակներ:

10. Ա խմբի ձեռագիրներ: *a* Ձ-ր: *11. b* Ձ-ր: *12. c* Ձ-ր: *13. d* Ձ-ր:

14. e. Ձ-ր: *15. f* Ձ-ր: *16.* Լայպցիգի Ձ-ր=Լ: *17.* Ա խմբի ուրիշ օրինակներ: *18. Տ խմբի ձեռագիրներ:* *n* Ձ-ր: *19. o* Ձ-ր: *20. p* Ձ-ր:

21. q Ձ-ր. *22 r* Ձ-ր: *23. s* Ձ-ր: *24.* Տ խմբի ուրիշ օրինակներ:

25. Խ. խմբի ձեռագիրներ: *g* Ձ-ր: *26. h* Ձ-ր: *27. i* Ձ-ր: *28. k* Ձ-ր:

29. l հնագոյն Ձ-ր, Խ խմբի օրինակների մայրը: *30. m* Ձ-ր. *31.* Կ¹ Ձ-ր:

32. y Ձ-ր: *33.* Աղթամարի Ձ-ր=Հ. *34.* Խ խմբին պատկանող ուրիշ օրինակներ: Պետերբուրգի Ձ-ր=Z. *35.* Խ խմբի Ձ-ների ծագումը: *36.* Վենետկի այժմեան հինգ Ձ-ները: *37.* Վենետկի բաղդատուած օրինակները, երկուսն՝ Ա խմբի, մէկը՝ Խ խմբի: 1843-ի տպագրի մէջ յիշուած երեք, եւ յետագայում ձեռք բերուած երկու Ձ-ները: *38.* Վենետկի այժմեան հինգ Ձ-ների ո՛ր խմբին պատկանելը: *39.* Երկրորդական խմբակցութիւններ: Խմբակցութեան փորձեր: *40.* Ա խմբի Ձ-ների երկրորդական խմբակցութեան պատկեր: *41.* Տ խմբի Ձ-ների երկրորդական խմբակցութիւն:

42. Բոլոր օրինակների խմբակցութեան ընդհանուր պատկերը: *43.* Ա եւ Տ խմբերի ծագման խնդիրը: Յովհաննէս կաթողիկոսի ձեռքին եղած օրինակը: *44.* Ուրիշ Ձ-ներ: *45.* Մեր համեմատութեան եղանակն եւ ուրիշ հանգամանքներ:

ՏՊԱԳԻՐՆԵՐ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԱԾ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՆԵՐ

1. Մովսէս Խորենացու Հայոց Պատմութեան առաջին տպագրութիւնն եղել է Ամստերդամում 1695 թուին։ Այս հրատարակութիւնն ունի հետեւեալ ճակատը. «Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան յօրինեցեալ ի Մովսիսէ Խորենացւոյ յեռամեծ վարդապետէ և յոգներախտ Քերթողահօրէ, ի խնդրոյ Պայազատապետի Սահակայ Բագրատունւոյ... ի լոյս ածեալ տպիւք և ծախիւք Թովմայ Վանանդեցւոյ, վեհափայլի եպիսկոպոսի և բազմաջան վարդապետի։ Ի հայրապետութեան սրբոյ Էջմիածնի Տեառն Նահապետի ամենայն Հայոց կաթուղիկոսի։ Յամի մարդեղութեան բանին 1695, Յամստէլօդամի»։

Յառաջաբանից, որ կոչւում է «Առ ամենայն ընթերցօղս Հայաստանեայց», կարևոր եմ համարում դնել հետևեալը. «Քաջավարժից և հմտագունից հայց և եղբարց ուսումնասիրաց բացայայտութիւն սակաւուք սակս առաջի կացելոյ գրոյս առնս մեծի Մովսէսի Խորենացւոյ, զորոյ զգտանելն ամենայն ուրեք սուղ և պակաս... ուստի և իմ նայելով յայսպիսի աղէտ անբերելի բարւոք վարկայ տպագրել թուովք նուագիւք, վասն անձեռնտու գոլոյ տեղւոյս... Ուստի ես անպիտան... Թովմաս ծառայ ծառայից Աստուծոյ, ի վայելուչ քաղաքէ Վանանդու Գողթնեաց, ձեռնամուխ եղեալ տպեցի զգեղեցկաշար պատմութիւնս»...

Յառաջաբանի վերջում կայ հետևեալ ոտանաւորը.

«Ընծայէ ծաղիկ բերկրութեան
Ցանկալի ազգին Արամեան
Եռամեծն Վանանդեան
Թովմաս Նուրիջանեան։
Սորին մօրեղբօր որդի
Ես Մատթէոս շարեցի»։

Անվերնագիր մի վերջաբանի մէջ տպուած է։ «Ես... Թովմաս եպիսկոպոս, ի գաւառէ Գողթնեաց ի մասնէ Վանանդու, տպագրական հողմավարութեամբ անցի ի կալուածս Եւրոպէու, և մեծաջան աշխատութեամբ փութացայ ժամանել ի գեղեցկագիր... քաղաքն յԱմստրդամ, առ ի յօրինել և հոգալ զբուն գործիոն տպագրութեան և զտախտակն պղնձեաց վասն փորագրելոյ զգիրս համայնից գաւառաց, զորս երկամբք բազմօք և յոգնակի ծախիւք կատարեցաք ընդ Մատթէոսի, որ է որդի եղբօր մօր իմոյ, զոր նախ յղեցի ի նոյն քաղաք, սակս պատրաստելոյ զպարագայս առաջիկայ գործոց մերոց, և զկնի կազմելոյ և յօրինելոյ զոր պարտն էր և պատեհ, հաճեցայ տպել զՎիպագրութիւն բազմերախտ առն Մովսիսի Քերթողահօրն, իբր առաջին պտուղ երախտեաց՝ իմոց աշխատութեանց, և իմովք ծախիւք... Եթէ գտանիցի ի սմա սխալումն ինչ, ներել մաղթեմ. զի ոչ հաւանութեամբ մերով եղան այն-

քին, այլ յօրինակէն լեալ ընկալջիք. զի զմի՛ միայն ունէաք օրինակ, եւ այն նօտր գրով և ա. վասն որոյ կարեկցութեան սիրով հայցեմ ներել մեզ... Նաև յիշել մաղթեմ զհարազատ և զձեռնասուն գործակալս իմ զՄատթէոս զկատարեալ հմուտն յարուեստ տպագրութեան, որ է որդի եղբօր մօր իմոյ, և զեղբօր որդի իմ զՂուկաս փիլիսոփա, որ է վարժ զանազան լեզուաց»:

Այս հրատարակութիւնը, ինչպէս մէջ բերած հատուածից երևում է, կատարուել է մի Նոտրագիր օրինակից, որի Թուականը չի յիշատակւում: Հրատարակիչը յայտնում է, թէ իր կողմից փոփոխութիւն չէ մտցրել բնագրի մէջ. և մեր կատարած մանրամասն համեմատութիւնը ուրիշ օրինակների հետ՝ ցոյց է տալիս, որ Խորենացու անդրանիկ տպագրութիւնը, որ և մեր հին պատմագիրների տպագրութեան մէջ անդրանիկն է՝ եղել է ճշտութեամբ: Յատուկ անունների մէջ սակայն, ինչպէս երևում է, երբեմն չէ հետևած ձեռագրին. Տաչիտոս, Լիչինիոս, Զիչիլիա, Զէլէնտինոս, Եփեսոս, Կեփաղիոն, Հեփեստոս, Դիոկլեցիանոս, Սամիրամ եւլն ձևերն անշուշտ ձեռագրից չեն ծագում: Բացի այդ՝ պէտք է կարծել, որ տպագրողը որոշ փոփոխութիւններ մտցրել է նաև գլխակարգութիւնների մէջ: Ա. գրքի Ա. գլուխը, որ վերնագիր ունի «Մովսէս Խորենացի Իսահակայ Բագրատունւոյ խնդալ», գլխակարգութիւնից դուրս է ձգած: Բ. գլուխը վերնագիր ունի՝ «Հատոր առաջին Պրակ ա. 1»: Գ. գլխի համար դրած է «Պրակ բ. 2», և այսպէս շարունակաբար: Նոյն ձևով «Պրակ ա. 1, Պրակ բ. 2» եւլն, վերնագիրներ ունին նաև Բ. և Գ. գրքերի գլուխները:

Ամբողջ գիրքը չունի գլխակարգութեան ցանկերը. միայն գրքի վերջում, անվերնագիր յիշատակարանից առաջ, դրուած է, երևի, արտագրողի յօրինած, մի այբբենական «Համառօտ ցանկ և ցուցակ իրաց գլխաւորաց, որք պարունակին յայսմ գրքոջ Պատմութեան: Թիւքն ցանկոջս զԹղԹահամարն ցուցանեն»:

Ամեն մի հատորի սկզբում կան մի մի խորհրդաւոր պատկերներ, որոնք ձեռագրից չեն ծագում հաւանաբար. բայց կան ձեռագիրներ, որոնք նոյն տեղում ունին պատկերներ: Գրքի նկարագրի համար կարևոր է յիշատակել և այն, որ ճակատից յետոյ յաջորդ Թերթի առաջին երեսին կայ քսան տող ուԹ վանկանի ոտանաւոր Մ. Խորենացու և իր Պատմութեան վրայ, «Թորգոմազնեայս այր պատուական» եւլն: Նոյնպիսի ոտանաւորներ կան նաև Բ. հատորի սկզբում (12 տող) և վերջում (10 տող) և Գ. հատորի վերջում: Այս ոտանաւորները, բացի առաջինից, կարող են և հրատարակչինը չլինել, այլ ձեռագրից ծագած լինել Թեթև փոփոխութիւններով: Վերջին ոտանաւորի համար հաստատ կարելի է ասել, որ ձեռագրից է ծագում, քանի որ նոյնը անփոփոխ եղել է և Կարենեանի ունեցած երկրորդ ձեռագրի մէջ (տես ներքևը § 7): Այդ ոտանաւորն է—

«Երրեակ հատածք սոյն մատենի վիպագրութեան
է Մովսէսի Խորենացւոյ գերալրական,
Յորս և պատմէ զգործոց քաջաց մեր նախնական
առ ի Նոյէ սերունդք զարմից Յաբեթական:

Որք տէրութեամբ ընկին Հայկայ զաշխարհս կալան,
մինչև ց՚Արշակ արքայ հզօր Պարթևական.
Որդի ըղձայր փոխանակեալ հետևական,
բարեբախտեալ Թողին զանուն յաղթողական»։

Այս առաջին տպագրութիւնը ներկայ հրատարակութեան ծանօթութիւնների մէջ նշանակուած է t տառով։

2. Երկրորդ տպագրութիւնն եղել է Վիստոն եղբայրների ձեռով 1736 թուին Լոնդոնում։ Վերնագիրն է՝ «Մովսիսի Խորենացւու պատմութիւն և աշխարհագրութիւն»։ Պատմութիւնից յետոյ տպուած է. «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւու» և այլ, իբրև յաւելուած, «Թուղթ Կորընթացւոց առ Պօղոս առաքեալն»։ Երկուքն ևս հայերէն բնագրի հետ զոյգ ունին լատիներէն թարգմանութիւնները, բազմաթիւ ծանօթութիւններով։

Հայոց պատմութեան այս հրատարակութիւնն արտատպութիւն է Ամստերդամի տպագրից, որն այս երկրորդ հրատարակիչները սխալաշատ են համարում, մէկ՝ նրա համար, որ խօսքի կազմութիւնը յաճախ այնպիսի է, որ անհեթեթութիւններ է առաջ բերում, մէկել՝ որ արևելագէտ Լա-Կրոզը հաղորդել է նրանց, թէ ինքը բնագիրը բաղդատելով Լայպցիգի գրադարանում գտնուած մի ձեռագրի հետ՝ մի քանի տարբեր ընթերցուածներ է գտել։ Հրատարակիչները սակայն չեն կարողացել Լա-Կրոզի նկատողութիւններն աչքի առաջ ունենալ և ոչ Լայպցիգի օրինակի տարբեր ընթերցուածները ձեռք բերել։ Այս պակասութիւնը լրացրել է մասամբ Շրեօդերը, հաղորդելով նրանց շատ ուղղումներ, որ Թոմաս Վանանդեցին, իր Խորենացու հրատարակութիւնից յետոյ, արել է մասամբ, ինչպէս կարծում են, իբրև ենթադրութիւններ, մասամբ օգտուելով մի ուրիշ ձեռագրից։

Թոմաս եպիսկոպոսի նշանակած ընթերցուածներն ահա այս երկրորդ հրատարակիչները մէջ են բերում, իբրև ծանօթութիւն դնելով տակին, կամ թէ այդ ընթերցուածներից օգտւում են բնագիրն ուղղելու համար, և այն ժամանակ Ամստերդամի տպագրի ընթերցուածները դնում են իբրև ծանօթութիւն։ Ձեռագրական տարբեր ընթերցուածները հասնում են մինչև Բ. գրքի ԶԵ, մեր այս հրատարակութեամբ ԶԹ. գլուխը, իսկ Գ. գրքից ընթերցուածներ կան միայն ԿԲ («Ի վարդապետսն, յինքն» եայլն) գլխի համար։

Երկրորդ տպագրութիւնը մեր այս հրատարակութեան ծանօթութիւնների մէջ նշանակուած է w տառով, իսկ Թոմաս Վանանդեցու ձեռագրական ընթերցուածները w^1 ձևով։

Երրորդ տպագրութիւնն եղել է Վենետիկում 1752 թ.։ Այս հրատարակութիւնը մեր ձեռը չի ընկած. ըստ Միհրան Գ. Տ. Մկրտչեանի (Հայկականք, Վաղարշապատ 1894 եր. 41, նոյն և 1894 թ. «Արարատի» մէջ) արտատպութիւն է 1695 թուի առաջին տպագրութեան։ Հ. Ա. Ղազիկեանի «Հայկական Նոր Մատենագիտութիւն և Հանրագիտարան» գրքից կարևոր ենք համարում դնել հետևեալը։ Գրքի վերնագիրն է. «Ազգաբանութիւն առհմին Յաբեթեան յօրինեալ ի Մովսէսէ Խորենացւոյ Յեռամեծ Վարդապետէ, և Յոգնեբախտ

Քերթողահօրէ. Ի խնդրոյ Պայազատապետի Սահակայ Բագրատունւոյ։ Տպագրեցեալ երկասիրութեամբ Սարգսի վարդապետի և Արքեպիսկոպոսի Կոստանդնուպօլսեցւոյ... Յամի տեառն 1752, ի մայիսի 12։ Ի Վէնէտիկ...։ Յառաջաբանի մէջ ասուած է «...Կամեցաք ի միասին տպել և զհամառօտ Աշխարհացոյցն՝ արարեալ... Մովսէսի Խորենացւոյ... Եւ յաղագս չունելոյ մեր աստ զձեռագիր գաղափար, միայն ի Ցամստելօդամ տպագրեցելոյն օրինակեցաք...»։

3. Չորրորդ տպագրութիւնն եղել է Վենետիկում 1827 թուին, «Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց» վերնագրով։ Սա Մխիթարեան փոքրադիր տպագրութիւն է, պատկերազարդ ճակատով։ Ազդից իմանում ենք, որ տպագրութիւնը կատարուել է չորս Ձ-րի բաղդատութեամբ (ՋԾԲ, ՌՃԻ, ՌՃԼԲ Թ. և մինը անթուական), հետեւելով «բազմաց» ընթերցուածներին։ Սակայն երբեմն, երբ աղաւաղութեան կասկած է եղել կամ Ձ-ները երկպառակ են եղել՝ հրատարակիչները հետևել են ընտրութեամբ մի կամ երկու Ձ-րի, միւսների ընթերցուածներից կարևորներն ու պիտանիները զետեղելով գրքի վերջում. (Այլ ընթերցուածք, եր. 557—565)։ Այս տպագրութիւնը ուշ հասնելով մեր ձեռքը՝ հնար չունեցանք բաղդատելու միւս տպագրութիւնների հետ և նրա մասին հաշիւ տալու։

Հինգերորդ տպագրութիւն, հայ բնագիրը և ֆրանս. թարգմ. Ֆլորիվալ. Վենետիկ 1841 թուին։

Վեցերորդ տպագրութիւն Ֆլորիվալ երկր. անգամ. Պարիզ 1845։

Եօթներորդ տպագրութիւնն եղել է դարձեալ Վենետիկում 1843 թուին, «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք» ընդհանուր վերնագրի տակ, որի մէջ մտնում են՝ Պատմութիւն Հայոց, Թուղթք, Պատմութիւն Հռիփսիմեանց և ճառք, Յաղագս Պիտոյից և Աշխարհացոյց։ «Զեկուցումից» բերում ենք մեզ կարևորը. «Պատմութեանն Հայոց օրինակք անթերի վեց էին, և հատուածք այլ և այլ ի ծառընտիրս, և թուական գրութեան նոցին ՋԾԲ. ՌՃԹ. ՌՃԻ. ՌՃԼԲ», ուրեմն փրկչի 1303, 1660, 1671 և 1683 թուականները։ Մինչդեռ Աշխարհացոյցի համար յայտնած է, թէ «ի համեմատութենէ վեցից գրչագիր օրինակաց ընտրեալ զհարազատ ընթերցուածս ուր բազումք միաբանէին և կամ ընտիրքն և հինք, զայլս ի կարևորաց խնամով ի ստորեւ ամփոփեցաք», — Հայոց պատմութեան համար ոչինչ չկայ ասած։ Մեր կատարած մանրամասն համեմատութիւնից երևում է, որ հետևել են ընդհանրապէս մի ձեռագրի, բայց և, ինչպէս կարծում եմ, երբեմն լռելեայն ուղղումներ են մտցրել ուրիշ օրինակներից։

Այս տպագրութիւնն այն մեծ առաւելութիւնն ունի, որ միւս օրինակների տարբեր ընթերցուածները—ոչ բոլորը, այլ կարևոր համարուածները—ներքևում գրուած են իբրև ծանօթութիւն անորոշ ձևերով՝ «մի օրինակ, երկու օրինակ, այլք, այլ օրինակ, ամենայն օրինակք» եւն։ Մեր այս հրատարակութեան մէջ մեծ մասամբ առնուած են այդ ընթերցուածները ծանօթութիւնների մէջ վ, վ^2, վ^3, վվ, ձևերով, որ նշանակում են՝ Վենետիկի մի օրինակ, երկու օրինակ,... բոլոր օրինակները։

Տաշեանը յիշում է մի տպագրութիւն եւ Վիեննայում 1849 թ.(?)։ Այս տպագրութիւնը մենք չենք տեսած։ Ղազիկեանը չունի։

4. *Ութերորդ տպագրութիւնը* եղել է դարձեալ Վիեննայում 1865 թուին։ Դա նոյն տեղի 1843 թ. «Մատենագրութիւնք»-ի անփոփոխ արտատպութիւն է, «Ջեկուցումով» և ծանօթութիւններով հանդերձ։

Վիեննայի այս հրատարակութիւնից արտատպուած է Հայոց Պատմութեան *իններորդ տպագրութիւնը* Թիֆլիսում 1881 թուականին, առանց ընթերցուածների։ Այս վերջին տպագրութիւնը, իբրև իր ժամանակին մի մատչելի հրատարակութիւն, ձեռի տակ ենք ունեցել մեր կատարած համեմատութիւնների ժամանակ։ Մեր այս հրատարակութեան ծանօթութիւնների մէջ դա նշանակուած է Վ տառով, իբրև Վիեննայի տպագիր, որ և Խորենացու Հայոց Պատմութեան ամենից շատ տարածուած ու յայտնի օրինակն է, մի քանի անգամ տպագրուած լինելով Վիեննայում և Թիֆլիսում։

5. *Տասներորդ տպագրութիւնն* եղել է Վիեննայում 1881 թ.։ Այս փոքրադիր հրատարակութեան առաջին երեսին դրած է նոյն տեղի 1827 թ. փոքրադիր տպագրի ճակատը պատկերով հանդերձ. սակայն այս տպագրութիւնն անփոփոխ արտատպութիւն չէ նախորդ տպագիրներից։ Յառաջաբանից գտնում ենք կարևորը. «Այս և եթ է խտիր ընդ այս հրատարակութիւն և ընդ առաջինսն, զի յայսմ՝ առաջնորդ կալաք այլ իմն օրինակ ձեռագրի, կամ լաւ եւս ասացից՝ ուրեք ուրեք փոփոխութիւնս մուծաք ըստ այլում օրինակի, որ ընտրելագոյն եւ թուեցաւ մեզ»։ Մեր արած մանրամասն համեմատութիւնը ցոյց է տալիս, որ այս հրատարակութիւնը, որ մեր ծանօթութիւնների մէջ նշանակած է x տառով, խսկապէս Վիեննայի սովորական տպագիրն է, միայն տեղ տեղ բնագրի մէջ մտցրած են ուրիշ ձեռագրի ընթերցուածներ։

Տաշեանն ունի մի տպագրութիւն Վիենն. 1880. թւում է տպագրական վրիպակ, փոխանակ 1881։

Տասնումէկերորդ տպագրութիւնն եղել է Թիֆլիսում 1910 թ. սա արտատպութիւն է նոյն տեղի 1881 թուականի տպագրի։

6. Խորենացու Հայոց Պատմութեան մեզ ծանօթ տպագրութիւնները վերևում դրած տասնումէկն են։ Դրանց նշանակութիւնը ձեռագրական տեսակէտից, չհաշուած իբրև ծանօթութիւն դրուած ընթերցուածները՝ շատ մեծ չէ. հրատարակիչները մեծ մասամբ արտատպել են կամ Ամստերդամի (t), կամ Վիեննայի (Վ) տպ.։ Վիեննայի 1849 (?) թ. տպագրութեան համար միայն չենք կարող այդ հաստատ ասել։ Այս հրատարակութիւնների մէջ սակայն կան վեց ձեռագրի ընթերցուածներ, մի ձեռագրինը (ա¹) Լոնդոնի տպագրութեան մէջ, միւս հնգինը Վիեննայի 1843 թ. (նոյն և 1865 թ.) տպագրի մէջ. այս վերջինների մէջ պիտի հաշուել և Վիեննայի 1881 թ. հրատարակութեան մէջ կատարած ուղղումներն «ըստ այլում օրինակի»։ Բոլոր տպագիրներն իրենց ընթերցուածներով ուրեմն ունին ութ ձեռագրի նշանակութիւն։

7. Բացի վերոյիշեալներից մեր այս հրատարակութեան համար ի նկատի ենք ունեցել նաև ուրիշ երկու ծեռագրի ընթերցուածները, որ հրատարակուած են Թիֆլիսում 1858 թուին. «Բաղդատութիւն Պատմութեան Մովսէսի Խորենացւոյ տպագրելոյն ի Վէնետիկ ընդ երկուց ձեռագրաց. երկասիրութիւն Յակովբայ վարժապետի Կարենեանց»։ Այս բաղդատութիւնը եղել է Վենետիկի 1843 թ. տպագրի հետ, ուրեմն սովորական (Վ) օրինակի հետ։

Այդ ձեռագիրներից երկրորդը յայտնի չէ թէ այժմ որտեղ է, նոյնպէս յայտնի չէր և առաջին ձեռագրի որտեղ լինելը. բայց այս աշխատութիւնն արդէն պատրաստ էր, որ Ստ. Կանայեանից ստացայ Աբգար Յովհաննիսեանի մի ձեռագիրը, որ պիտի տրուէր Էջմիածնի գրադարանին, և յայտնուեց որ այդ ձեռագիրը Կարենեանցի բաղդատած առաջին ձեռագիրն է, որ մեր այս հրատարակութեան ծանօթութիւնների մէջ նշանակուած է Կ^1 ձևով։ Որովհետև այս ձեռագիրն այժմ յայտնի է, ուստի այստեղ այլ ևս չեմ դնում Կարենեանցի նկարագիրը. դրա նկարագիրը կը տրուի ձեռագիրների շարքի մէջ։

Երկրորդ ծեռագիրը, որ մեր այս հրատարակութեան ծանօթութիւնների մէջ նշանակուած է Կ^2 ձևով, այսպէս է նկարագրում Կարենեանցը։ «Գրքի երկայնութիւնն է մի թիզ և երեք մատնաչափ, լայնութիւնը մի թիզ, թանձրութիւնը երեք մատնաչափ. մի միայն Խորենացւոյ Հայոց պատմութիւնն է... գրչութիւնն ընտիր բոլորգրով, սկզբից մինչև վերջը մի ձեռով և համարեա թէ մի գրչով է գրած. առաջին գլխոյ առաջին և չորրորդ թղթերը պատուական բարակ և սպիտակ մագաղաթ են, միացեալքը դեղնագոյն բամբակեայ թուղթ... բոլոր գիրքն է 432 երես. միայն մի թուղթ հանած կամ ընկած է»։

Կարենեանցն իբրև յիշատակարան բերում է ամենից առաջ տասներկու տող մի ոտանաւոր, որի առաջին ութ տողը բոլորովին նման ձևով կայ և Ամստերդամի (t) տպագրի մէջ Գ. գրքի վերջում և որ դրուեցաւ վերևում (§ 1)։ Այդ ութ տողերին Զ-րի մէջ յաջորդում են հետևեալ չորս տողերը, որ Թովմաս Վանանդեցին իր տպագրութեան մէջ դնելը, թէկուզ «Մովսէս» անունը «Թովմաս» դարձնելով, անյարմար է համարել.

«Սոյն մատենի եղէ ստացօղ ըստ փափագման
պիտակ անուն Մովսէս ի դասս ուսուցչական.
Առ ի դրօսանս մտաց իմոց զուարճական
և յետ մեր որք գայս վայելեն ունակական»։

Ապա գալիս է հետևեալը. «Յամի հազար երրորդի հարիւր երրորդի և քսան երրորդի թուականութեան հայկայինս տոհմի (=փրկչ. 1671 թ.)։ Ես պիտակ անուն Մովսէս, հուսկ վերջինս ի խումբս ուսումնականաց և երկրորդս ի պարս քարոզչաց։ Ստացայ զգիրս պատմութեանց Մովսիսի Խորենացւոյ... Բայց օրինակ և նախագաղափար յորմէ ածանցեցաւ սոյն այս մատեան, գտաւ հնագոյն գծագրութեամբ եղեալ յաղագս Ներսեսի Լամբրոնացւոյ արք Եպիսկոպոսի սրբոյ՝ Տարսոնի քաղաքի՝ զոր և ընտրեալ մեր՝ օրինակել տուաք ուրումն գրչի, և սրբագրեցաք

բառ կարի մերում, սակս առ ուրեք ուրեք տարածանելոյ»… Ապա կան երկու ուրիշ յիշատակարաններ. «ընդ որս և գիս Յովհաննէս սպասաւոր վեհիս մեծի՝ սակաւ աշխատող և կազմող այս մատենի յիշեսջիք համ-դերձ ծնողօք»: «Զվերջին ստացող սորին պաշտեկի վերոյգրելոց Տեառն Մովսիսի, լով անուն Մեսրոպս յիշել մաղթեմ… որ և զկնի մահուան սորին ստացողի առաջնոյ, բազում փափագանօք ստացայ զսա ի հալալ արդեանց իմոց, և յետ սուղ ինչ ժամանակաց ետու… ի դուռն սրբոյ Առաքելոյն Թումայի: Եւ ի ձեռն Տեառն բազմաշխատ և քրտնաջան Յովհաննու քաջահանճար բաբունեաց պետի զոր և ներ յայսպիսում վշտաշատ ժամանակի շինեաց զեկեղեցիս զանկակատանովն հանդերձ, որում և յամենայն տեղեաց ամենայն ոք ընծայաբերք լինէին նորաշէն եկեղեցեացս, որ և ես նուաստ… Մեսրոբ յետնեալ ամենից աշակերտ Տեառն Յովհաննու… բաբունւոյ… արկի զսա ի գանձանակ Տեառն… իբրու… ընծայ նորաշէն եկեղեցւոյս… Եւ այս եղև ի թուականութեանս հայոց ՌՃԽԳ (=փրկչ. 1694):

Այս ձեռագիրը, Կարենեանցի ասելով, պատկանել է Թիֆլիսի Սուրբ Կարապետ եկեղեցու Տէր Յակոբեան Խաչատուր ծերունի աւագ քահանային, որի պապերն են յիշատակ տուած եղել Թոմայ առաքեալի վանքին, բայց Նադիր շահի գալու ժամանակ հետները բերել են Թիֆլիս: Յետագայում սոյն Ձ-րն անցել է Գիւտ քահանայ Աղանեանցին, որ տուել է Թիֆլիսեցի Միքայէլ Թամամշեանին, և վերջինիս մահից յետոյ, Տ. Գիւտի ասելով, մնացել է նրա ժառանգների մօտ:

Կարենեանցը երկու Ձ-րի էլ բաղդատութիւնը լրիւ չէ արել, այլ բերել է «միայն այն զանազանութիւնքը, որոնք մտքին փոփոխութիւն կը տան, տեղ տեղ ևս այն բառերը և բառերը, որոնք քերականութեան ճիշտ կանոնները պահպանելուն ապացոյց կարեն լինել»: Առաջին ձեռագրից (Կ[1]) շատ աւելի քիչ ընթերցուածներ են բերուած, քան երկրորդից (Կ[2]):

Բացի վերևում դրածից՝ Ն. Մառի և Գ. Տ.-Մկրտչեանի ձեռով համեմատած և Մառից հրատարակուած են նաև մի ուրիշ ձեռագրի (Սանահնի օրինակ) ընթերցուածները: Այս մասին սակայն յետոյ, քանի որ այս Ձ-րն ևս (=Է Ձ-ր) այժմ Էջմիածնի Մատենադարանում է, և մենք էլ նոյնն ունեցել ենք ձեռի տակ:

Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր.

8. Ձեռագիրների նկարագրից առաջ՝ յարմար եմ համարում դնել այստեղ մեր եզրակացութիւնը Ձ-ների մեծ խմբերի մասին:

Մեր բանեցրած տպագիրները, տպագրուած ընթերցուածներն և բոլոր ձեռագիրները, ինչպէս մանրամասն համեմատութիւնից երևում է՝ բաժանւում են երկու մեծ խմբի, որ նշանակել ենք Ա և Տ տառերով, իբրև Անտիպի և Տպագրի խմբեր: Այսպէս կոչել էինք, կարծելով թէ Ա խմբի Ձ-ներից հրատարակութիւն չէ եղել. բայց գործի տպագրութեան սկզբում ձեռք բերելով Ամստերդամի և Լոնդոնի հրատարակութիւնները՝

գտանք որ Խորենացու Պատմութեան առաջին և երկրորդ տպագրութիւններն Ա. խմբին են պատկանում, որով և Ա. ու Տ կոչումներն անյարմար էին: Տառերի փոփոխութիւն սակայն չուզեցինք անել, լաւ իմանալով որ այսպիսի աշխատանքի մէջ ամէն նոր արտագրութիւն և տառերի շրջում նորանոր սխալների պատճառ պիտի դառնար: Ա. խմբի մէջ պէտք է հասկանալ ուրեմն Ամստերդամի անդրանիկ տպագրին պատկանող օրինակներ, իսկ Տ խմբի մէջ մտնում են այն օրինակները, որոնք պատկանում են Վենետիկի սովորական դարձած Տպագրին:

Ա. և Տ խմբերի բաժանման արտաքին նշաններից մէկն այն է, որ Բ. գրքի Է. և Ը. գլուխները Ա. խմբի բնագրի մէջ կազմում են մի մեծ գլուխ կամ, ինչպէս Խորենացին ասում է նոյն գլխի սկզբում՝ «Դրուագ մեծ», որի ընդհանուր վերնագիրն է «Յօրինուած Թագաւորութեանն և Թէ ուստի զնախարարութիւնն կարգեաց. որպէս և զկարգ կենցաղավարել հրամայեաց». յաջորդ գլուխն է Թէ ցանկի և Թէ բնագրի մէջ «Յաղագս մերոյ Արշակայ առաջնոյ և նորին գործոց»: Տ խմբի մէջ Ա. խմբի այս մեծ դրուագը բնագրում բաժանած է երկու գլխի, որ են՝ մի գլուխ նոյն վերնագրով որ ունի Ա. խմբի մեծ դրուագը՝ «Յօրինուած Թագաւորութեանն» ևլն, և մի երկրորդ գլուխ վերնագրովս՝ «Երկրորդ Թագաւորութեան լինել ի զաւակէ Աժդահակայ Մարաց Թագաւորին», և յաջորդ գլուխն է «Յաղագս մերոյ Արշակայ» ևլն:

Գլխակարգութեան այս տարբերութիւնը կայ Ա. և Տ խմբերի բոլոր Ձ-ների բնագրի մէջ, գլխահամարները սակայն այս կամ այն Ձ-ների մէջ, Թէ ցանկում և Թէ բնագրում, երբեմն զանազան են. բայց դա Ձ-ների առանձնայատկութիւն է և ոչ խմբերի: Արտագրողները յաճախ բաց են Թողնում գլխահամարները կամ սխալ են նշանակում և սխալը շարունակւում է միւս գլուխների մէջ ևս: Օրինակ՝ Բ. գրքի ցանկի մէջ af Ձ-ները բաց են Թողել առաջին գլխի գլխահամարը. երկրորդ գլխի համարը a Ձ-ը նշանակել է ուղիղ՝ Բ., իսկ f Ձ-ը, որին միացած և d Ձ-ը, սխալը շարունակել է, այսինքն Բ. գլխի համարը դրել է Ա., երրորդ գլխինը Բ. ևլն., որով af Ձ-ները, որոնք Ա. խմբի մէջ են, Թ. գլխի համար ունին Է. փոխանակ Ը.-ի: Բնագրի մէջ սակայն այսպէս ունի միայն d ձեռագիրը: Հասկանալի է, որ Ա. և Տ. խմբերին պատկանելը որոշելու համար ոչ Թէ գլխահամարը նկատի պիտի ունենալ, այլ գլխի վերնագիրը՝ «Երկրորդ Թագաւորութեան լինել»...

Այս վերնագրով գլուխը Տ խմբի մէջ անպայման նախնական բնագրից չի գալիս. բայց մենք այս հրատարակութեան մէջ գլխակարգութիւնը պահեցինք ըստ Տ խմբի Ձ-ներին, որովհետև Վ (Վենետիկի) տպագրով բազմաթիւ վկայութիւններ կան: Թէ այդ գլուխն իր վերնագրով նոր է առաջացած՝ երևում է նախ նրանից, որ վերնագիրը չի համապատասխանում գլխի բովանդակութեանը, մինչդեռ նախորդ գլխի վերնագիրը, «Յօրինուած Թագաւորութեանն»..., համապատասխան է Տ խմբի երկու գլխի բովանդակութեանն ևս միասին: Բացի այդ՝ Տ խմբին պատկանող Ձ-ներից, որոնք ցանկեր ունին, lo Ձ-ները (l Ձ-րն այս մասում Տ խմբին է պատկանում) ցանկի մէջ դեռ չունէին այդպիսի

վերնագրով գլուխ, մինչդեռ նոյն խմբին պատկանող ղ Ձ-իրը ցանկն ևս արդէն համեմատ է դարձրած փոխուած բնագրին. բայց այդ գլուխը ցանկի մէջ իր տեղումը չէ գրած, այլ մի առանձին նշանով աւելացրած է երեսի տակին։ Թէ յետագայում արտագրողները կարող էին ցանկը համեմատ դարձնել փոխուած բնագրին՝ դրա համար մի օրինակ ունինք կ[1] Ձ-իրը, որ ծագում է ղ Ձ-րից. բայց մինչդեռ ղ-ի մէջ ցանկում չկայ այդ նոր գլուխը՝ կ[1] Ձ-իրն ունի նոյնը։

Այսպէս ուրեմն յետագայում Բ. գլխի Է գլուխը, «մեծ դրուագը», բաժանած են երկուսի, դուցէ առաջնորդուելով Խորենացու մի ուրիշ տեղում ասած խօսքից—«ի բազում ճառս կտրեցաք, զի մի երկայնութիւն բանից տաղտկութիւն ընթերցողացն լինիցի»։ Բայց այս բաժանումը կարող է և պատահաբար առաջացած լինել բնագրի մէջ, որին համապատասխան են դարձրել յետոյ և այս կամ այն Ձ-րի մէջ նաև ցանկի մէջ գլխակարգութիւնը։ Պատահական լինելը հաւանական եմ համարում այն պատճառով, որ S խմբի բոլոր Ձ-իրներն էլ, որոնք ունին «Երկրորդ Թագաւորութեան լինել ի զաւակէ Աժդահակայ Մարաց Թագաւորին» վերնագիրը՝ բնագրի մէջ չունին այս նոր գլխի սկզբի հետևեալ հատուածը. «Երկրորդ Թագաւորութեանն լինէր ի զաւակէ Աժդահակայ Մարաց եղելոյ Թագաւորի» (եր. 112 տ. 14—15). պէտք է կարծել, որ S խմբի Ձ-ների մայր Ձ-րի մէջ այս հատուածը մոռացմամբ չի գրուած եղել և ապա վերևում կամ լուսանցքում աւելացրած է եղել, բայց արտագրողներից ըմբռնուած է իբրև առանձին գլխի վերնագիր։ Այսպիսի ծագումով կարելի է բացատրել այն, որ Ձ-ների մի մասն այդ վերնագրի համար կամ գլխահամար չունին, կամ Է են նշանակում, և որ S խմբի բոլոր Ձ-ների մէջ վերոյիշեալ հատուածը չկայ գլխի սկզբում բնագրի մէջ։ Վենետկի տպագիրը (Վ) միայն ունի թէ գլխի վերնագիրը և թէ գլխի սկզբի պակասած հատուածը. պէտք է կարծել, որ այս օրինակի գրիչը զգալով բնագրի թերին՝ ինքն ուղղած լինի, այսինքն բնագրի մէջ նոյնն աւելացրած (տես նաև § 37)։

Բացի Բ. գրքի Ը գլխից՝ Ա և S խմբերին պատկանելը որոշելու համար իբրև մի յատկանիշ կարելի է առնել նաև հետևեալը։ Բ. գրքի ԼԱ և ԼԲ գլուխներն ևս («Թուղթ Աբգարու առ Փրկիչն», «Պատասխանի Թղթոյն Աբգարու»...) չկան Ա խմբի Ձ-ների ցանկի մէջ. մինչդեռ S խմբի ցանկի մէջ կան, միայն դարձեալ տարբեր ձևով։ S խմբից Վ. տպագիրն և ղ Ձ-րն այդ երկու գլուխն էլ ունին ցանկում ԼԱ և ԼԲ գլխահամարներով, որով բոլոր գլուխների թիւը (Ը գլուխն էլ հետը) հասնում է մինչև ՂԲ (92), թէ ցանկի և թէ բնագրի մէջ. իսկ lo Ձ-ները ԼԱ և ԼԲ գլուխների վերնագրերն ունին ցանկում, միայն առանց գլուխ հաշուելու և գլխահամարների, որով գլուխների թիւն է թէ ցանկի և թէ բնագրի մէջ ՁԹ (89), քանի որ դրանք Ը. գլուխն էլ չունին ցանկի մէջ։ S խմբից pqrs Ձ-ները ցանկ չունին. դրանց բնագրի մէջ գլուխների համարները տեղ տեղ խառնած են, բայց pq Ձ-ները ԼՁ գլխահամարի փոխանակ ունին ԼԳ և ապա յաջորդը ԼԴ են, իսկ rs Ձ-ներն ԼԴ գլխահամարի փոխանակ ունին ԼԱ, ապա յաջորդը ԼԲ են. որով և pqrs Ձ-ներն իրենց գլխահամարներով վերջը նոյնանում են lo

Զ-ներին և ունին բոլոր գլուխների թիւը ՁԹ (89), ինչպէս որ Ո Զ-ների մէջ։ Այս ցոյց է տալիս, որ Տ խմբի Զ-ների մէջ նախ բնագրում առաջ են եկել ԼԱ և ԼԲ գլուխները, այսինքն Թղթերի վերնագրերն առնուել են իբրև առանձին գլուխներ, ապա բնագրից անցել են նաև ցանկին և վերջը այս կամ այն Զ-րի մէջ նոյն-իսկ առանձին գլխահամարների տակ նշանակուել։ Կ^{1} Զ-իրն այստեղ ևս տարբերւում է իր մայր Ո Զ-րից. նրա մէջ թէ ցանկում և թէ բնագրում առանձին ԼԱ և ԼԲ գլուխներ են այդ Թղթերը, որով բոլոր գլուխների թիւն է ՂԲ (92)։

Ա և Տ խմբերի այս բաժանումն անհերքելի կերպով հաստատւում է մանրամասն համեմատութիւնից ստացած բազմաթիւ ընթերցուածների նոյնութեամբ, որ ցոյց է տալիս, թէ այս երկու խմբերի մայրերը տարբեր են եղել, մինչդեռ միևնոյն խմբին պատկանող Զ-ները մի ընդհանուր մայր են ունեցել։ Կան ի հարկէ այս կամ այն Զ-ներին կամ դրանցից փոքրիկ խմբերին յատուկ ընթերցուածներ ևս, որոնք բնականաբար ժամանակի ընթացքում առաջացած փոփոխութիւններ են։

9. Ա և Տ խմբերի խառնուրդ են կազմում մի շարք Զ-ներ, որ նշանակել ենք Խ տառով, որոնց ընդհանուր մայրը Էջմիածնի գրադարանի հնագոյն Զ-իրն է, որ մեր ծանօթութիւնների մէջ անուանուած է Ո տառով։ Սրա հին մասը պատկանում է Ա խմբին, իսկ 1567 թուին նորոգուած մասն արտագրուած է Տ խմբի մի Զ-րից. դրա համար և Խ խմբի Զ-ների ընթերցուածները երբեմն Ա խմբի հետ են միանում, երբեմն Տ խմբի հետ։

Դրսի Զ-ների այս Խ խմբին պատկանելը որոշելու համար՝ իբրև մի յատկանիշ կարելի է առնել այն, որ Բ. գրքի վերօյիշեալ Ը գլխի վերնագիրը («Երկրորդ Թագաւորութեան լինել»...) կայ այս խմբի Զ-ների բնագրի մէջ, որովհետև այդ մասը Տ խմբից է արտագրուած։ Բայց այսքանը միայն բաւական չէ. հարկաւոր է միաժամանակ Ա խմբին պատկանող մասից ևս մի յատկանիշ առնել. իբրև այդպիսին կարելի է բերել այն, որ Խ խմբի մայրը, Ո Զ-իրը, Գ. գրքի ցանկի վերջում, որ Ա խմբին է պատկանում, ունի մի յաւելուած—«Տաղք չափաւյինք և ի Սահակ Բագրատունի», որ միայն այս խմբի յատկանիշն է։ Սակայն կան Զ-ներ, ինչպէս ՊԿ^{1}, որոնք Ո-ից են ծագում, բայց ցանկի վերջում չեն արտագրած այդ յաւելուածը. ուստի եթէ դրսի մի Զ-իր ունի վերօյիշեալ Ը գլխի վերնագիրը, բայց չունի Գ. գրքի վերջում «Տաղք չափաւ»... յաւելուածը՝ կարող է և՛ Տ և՛ Խ խմբից լինել. հետևաբար այս երկու խմբից ո՛րին պատկանելը որոշելու համար պէտք է նկատի ունենալ Ո Զ-րին առանձնայատուկ մի քանի ընթերցուածներ Ա խմբին պատկանող մասից։ Ինչպէս են օրինակ՝ եր 76, տ. 8ծ. «գեղեցկաւք և բազմագունիւք զարդարեալ շատրուանաւք». որ Ա խումբն ունի «գեղեցկօք և բազմագունիւք յօրինեալ շատրուանօք», (կամ շատրուանովք), իսկ Տ խումբն ունի «գեղեցիկ և բազմագոյն շատրուանօք զարդարեալ»։ Եր. 77, տ. 2 «Ի քրտան սաստկութեան յայսպիսւոյ եղեալ տագնապէ՝ փախեաւ», որ Ա խումբն ունի. «ի քրտան սաստկութեան յայսպիսում եղեալ վտանգէ՝ փախեաւ», իսկ Տ խումբն ունի.

«ի քրտան սաստիկ վտանգի եղեալ (կամ ելեալ) փախեաւ»։ Այսպէս և եր. 77, տ. 9. եր. 78, տ. 2 (այնմ փխ. այժմ). եր. 79, տ. 7. 80, 5. 81, 17. 82, 5 (իբր հեղեալ). 82, 17. 83, 5. 83, 7. 84, 6 եւն եւն։

Խմբերի այս մեծ բաժանումից յետոյ՝ տեսնենք այժմ ամեն մի Ձ-իր առանձին, սկզբից դնելով այն տառերը, որոնցով նշանակուած են մեր համեմատութիւնների մէջ։ Սկզբում դրուած թուերն Էջմիածնի գրադարանի այժմեան թուահամարներն են ցոյց տալիս, իսկ փակագծում դրուածները Կարենեանցի տպագրուած ցուցակի համարներն են, ըստ Յ. Մանանդեանի հին և նոր թուահամարները դէմուդէմ դնելուն (Հանդէս Հայագիտութեան II, Bd. I. H. Marburg 1903)։

Ա (ԱՄՍՏԵՐԴԱՄԻ) ԽՄԲԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ.

10. a. Էջմիածնի գրադ. № 1671 (Կար. ց. 1629)։ Մեծութիւն 28,5 ×20 հրդմ։ Կաշեկազմ, թուղթ, բոլորագիր, միասիւն։ Սկզբից հինգ թերթ առանց գրելու թողած։ Բովանդակութիւն—1) Տեառն Միխայիլի պատրիարքի ասորւոց համառօտ ժամանակաց գրոյցք քաղուածոյ արտաբեալ յոլովից պատմագրաց. 2) Վասն թագաւորացն Հայոց զոր կարգեաց Մովսէս Խորենացին.—մէջը նաև Բագրատունիք և Ռուբինեանք. վերջը մի ոտանաւոր, որի տողերի սկզբնատառերը կազմում են «Մովսէսի է սա». 3) Ցաղագս աստիճանաց եկեղեցւոյ.... 4) Անանիայի Շիրակունւոյ համարակալի թիւք որչափութեանց հին կտակարանաց. 5) Սամուէլի քահանայի Յանեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ. 6) Պատմութիւն Հայրապետաց թէ որքան թիւ են Հռոմայեցւոց եւն թագաւորացն. 7) Խրատք իմաստասիրաց պէս պէս. 8) Մովսէս Խորենացի Հայոց Պատմութիւն։

Խորենացին չունի վերնագիր և ոչ Ա գրքի ցանկը. սկզբից չորս թերթ մաքուր է թողած։ Սկսւում է «Զանսպառ խաղացմունս»... երեսի տակին նոտրագրով. «Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն ժամանակաց և ազգիս Հայոց աշխարհիս»։ Ա. գրքի Ի գլխի («Համեմատութիւն ծննդաբանութեան...») վերնագրի տակին յիշատակւում է սուացող Մինաս վարդապետ առաջնորդն «յեւդոկիոյ քաղաքիս» և գրութեան թիւը ՌՃԼԶ (=1687 թ.)։ Նոյնը յիշատակւում է նաև Բ. գրքի և սրա ցանկի վերջում։ Ընդարձակ յիշատակարան կայ գրքի վերջում։ «Յիշատակարան երից պատմագրացս Միխայիլի պատրիարքի Ասորւոց և Սամուէլի Յանեցւոյ և տեառն Մովսիսի Խորենացւոյ։ Փառք փառաւորեալ... և եղան երեքին գիրքս ի միում տփի հրամանաւ ստացողի սորին տէր Մինաս սատուածարանի և մեծ բաբունւոյ Յամթեցւոյ՝ արհեպիսկոպոսի և վերատեսչի յեւդոկիայ քաղաքի...՞ ի թուահաշուութեանս հայկազուն սեռի ՌՃԼԶ (=1687) հոկտեմբերի երեք եղև սկիզբն գծութեան սորին... եղև աւարտումն գրոյս պատմութեան ի թվականիս հայոց ՌՃԼԷ (=1668) յունուարի ԺԳ ձեռամբ Մկրտում... Զուղայեցւոյ ի Թոխաթ քաղաքի որ Թաղթիղալաւ կոչեցեալ յեկեղեցին սրբոյն Սարգսի

առ ոտն տեառն իմոյ Մինաս վարդապետի, որ ստացաւ զգիրքս ի վայելումն անձին իւրոյ... և յետ աստեացս ելանելոյն ի մարմնոյն՝ մնալ յիշատակ ի դուռն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի»։ Մինաս վարդապետի յիշատակութիւններ և նրա կնիքները կան գրքի մէջ շատ տեղերում։

11. ն. Էջմ. № 1672 (Կար. ց. 1630)։ Մեծ. 28,25×20 հրդմ. Թղթակազմ, Թուղթ, բոլորագիր, երկսիւն։ Բովանդակութիւնը նոյն է ինչ որ նախորդ a Զ-րինը, միայն մէջը կան նաև աւելի բաներ. 1) Միխայէլ Ասորի. 2) Յաղագս քահանայական կարգաց. 3) Խրատք ժամակարգութեանց աղօթից և ծնրադրութեանց. 4) Վասն Թագաւորացն Հայոց.... 5) Յաղագս աստիճանաց.... 6) Անանիայի Շիրակունւոյ.... 7) Սամուէլ Անեցի (վերջը մի փոքր տարբեր № 1671-ից). 8) Պատմ. Հայրապետաց.... 9) Վասն ժամանակաց գրոց ամացն յադամայ.... 10) Վասն կատարածի աւուր. 11) Յաղագս կշռոց. 12) Առակաւորք Ղուկասու. 13) Հարցմունք զանազանք և պատասխանիք. 14) Թղթի առաջք կաթողիկոսի, վարդապետի, փիլիսոփայի, պատրիարգի ևն. 15) Եպիփանեան եպիսկոպոսի Կոստանդեա քաղաքի ասացեալ վասն երկոտասան ականց.... 16) Այս է պատմութիւն Փարէս քաղաքին. 17) Մի քանի տաղեր. 18) Դաշանց Թուղթ. 19) Հարցմունք Տաճկաց և պատասխանիք մերոց վարդապետաց ընդդէմ նոցա. 20) Թուղթ տեառն Գրիգորի կաթողիկոսի հայոց՝ գրեալ եղբօր Նորին Ներսեսէ... ի Միջագետս Ասորւոց. 21) Թուղթ խոստովանութեան և հաւատոյ եկեղեցւոյ գրեալ տեառն Ներսեսի... զոր խնդրեաց... Թագաւորն Յունաց Մանիլ. 22) Պատասխանի Թղթոյ մեծ Թագաւորի Հռոմոց կէռ Մանուէլին. 23) Մովսէս Խորենացւոյ Պատմութիւն։

Գրքի մէջ, Թերթ 180 բ., կայ այս յիշատակարանը. «Զփծուն գրիչս մեղապարտ յովանէս յիշեցէք... ՌՃԺԵ» (=1666 Թ.). իսկ Խորենացու մէջ Ա. գրքի Ի. գլխի վերնագրի տակին. «Սքանչելի պաշտօնէից սրբոյ եկեղեցւոյ մաղթեմ զանարհեստ ձեռագիրս ընկալարուք ի սոյնս յիշատակի առ հաւատչեայ տառապելոյ, Յովանէսի մեղսասիրի։ Աղաչեմ զուրբսդ։ Թվ ՌՃԻԵ» (=1676)։ Վերջի Ե տառի գլուխը ջնջած է, այնպէս որ կարող է գ կամ դ ևս կարդացուել. այն ժամանակ կլինի 1674 կամ 1675 Թ.։ Երրորդ գրքի վերջում. «Ճշմարտութեամբ և զըստացող սորա զյովանէս սարկաւագս և զհայրն իմ մահդեսի և զմայրն խանումն որ փոխեցաւ յայս կենացս Թվականիս մերում հազար հարիւր քսան»... (=1671 Թ.)։ Ապա ուրիշ Թանաքով. «Եւ ՌՃԼ Թուականից (=1681 Թ.) հայրն իմ գնաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ կրկին անգամ»... Կան ուրիշ տեղեր ևս անԹուական յիշատակարաններ։

12. շ. Էջմ. № 1665 (Կար. ց. 1623)։ Մեծ. 19,5×15,5 հրդմ. կաշեկազմ, նոտրագիր, միասիւն։ Բովանդակութիւն—1) Խորենացու Հայոց Պատմութիւն. 2) Աշխարհացոյց Վարդան վարդապետի. 3) Մովսէս Խորենացի յաղագս աշխարհագրութեան. 4) Աշխարհագրական տեղեկութիւններ «Ի Ֆրանկաց ի մերս Թարգմանեալ ի Թւականիս Հայոց ՌԿԵ» (=1616 Թ.)։

Խորենացու Գ. գրքի ԿԸ գլուխն ամբողջ չկայ. Թերթ ու կէս դատարկ է թողած: Գ. գրքի ԿԷ գլխի վերջում. «Եւ զայս Մովսէս Խորենացոյ պատմագիրքս է Անդրիանու Պօլսոյ առաջնորդ Եփրեմ վարդապետին ի վայելումն իւրում անձին հազար հարիւր քառասուն հայոց թուականին» (=1691 թ.): Մի քանի տեղ յիշւում է «գրչակը» առանց թուականի: Խորենացու աշխարհագրութիւնից յետոյ՝ «Որք հանդիպիք և ընթեռնուք՝ զներսէս անուն սարկաւագն յիշեցէք»:

13. d. էջմ. № 1669 (Կար. ց. 1627): Մեծ. 19,5×12,5 հրդմ. կաշեկազմ, թուղթ, բոլորագիր. միասիւն: Բովանդակութիւն—1) Խորենացու Պատմութիւն. 2) Տոմարական.... 3) Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ. 4) Բացատրութիւն սուսերաչափ գործիքի և եղանակի (նոտրագիր). 5) Փոնցիանոս թագաւորի պատմութիւն (նոտրագիր):

Խորենացու Ա. գրքի վերջում. «Գծեցաւ ձեռամբ յոգնամեղ Գրիգորի Երևանցւոյ ի թուին ՌՃԻԵ» (=1676): Նոյնը նաև Բ. և Գ. գրքերի վերջում: Փոնցիանոս թագաւորի պատմութեան վերջում... «յանգ եղեալ աւարտեցաւ պատմութիւն եօթն իմաստասիրաց ի յերկիրն Ամասիոյ ի խնդրոյ տէր Մովսէս... վարդապետի... Մարտիրոս երեց գրեցի... զառաջին երկու տետրերն Մկրտիչ գրեց և մարմինն ակարացաւ, երեր առ իս թէ աւարտէ և ես անարժանս աւարտեցի»: Մի ուրիշ յիշատակարանից. «Յիշատակ է գիրքս Յովհաննէս վարդապետին առաջնորդի Սուրբ Կարապետիս, որ է Յովհաննու վանք ի Նահանգին Կողբայ յոր ոտին արագածն ի վերայ քասաղ գետոյ... որ ստացաւ զսա յովհաննէս վարդապետն և եդ յիշատակ ի դուռն նոյն վանացն յօհաննու ի հազար և ի հարիւր և քսան և յինն թուին (=1680 թ.):

14. e. էջմ. № 1686 (Կար. ց. 1644): Մեծ. 24,5×19. կաշեկազմ, թուղթ, բոլորագիր, երկսիւն: Բովանդակութիւն—1) Եղիշէ. (վերջում Թոմայ Արծրունուց մի գլուխ). 2) Պատմութիւն Ղևոնդայ մեծի վարդապետի. 3) Երկրորդ հատոր մեկնութեան սրբոյ Աւետարանին Մարկոսի, ասացեալ Բարսղի վարդապետի. 4) Խորենացի. 5) Դաշանց թուղթ:

Եղիշէի վերջում. «Կատարեցաւ բան պատմագրութեանց սրբոյ Եղիշայի հայոց վարդապետի: Ձեռամբ ամենաթշուառ Մարկոսի սպասաւորի»: Ղևոնդի վերջում. «Գրեցաւ ձեռամբ ամենավրէպ և բէյնուայ Մարկոսի բանի սպասաւորի ի ՌՃԻԴ թուոջ (=1675 թ.): Խորենացու երեք գրքերի վերջում էլ յիշւում է Մարկոս գրիչ. «զիս զծրող սորին զմարկոս իբրու բանին սպասաւոր»: Խորենացու գրութեան թուականը չէ յիշւած, բայց որովհետև գրիչը մէկ է՝ գրուած պիտի լինի կամ նոյն 1675 թ., երբ գրուած է Ղևոնդը, կամ մի երկու տարի յետոյ: Մարկոսի աւետարանի մեկնութիւնն ուրիշ ձեռքով է գրած «ի Շաւշ քաղաքն, որ կոչի Իսպահան, ի գեղջն Ջուղայ, ի դրանս սուրբն Ստեփանոսի ի հայրապետութեան Տէր Խաչատուր արի և քաջ վարդապետին, և սուտ անուն Հայրապետ գրիչս յիշեա»...

Խորենացու Բ. գրքի ԺՁ գլխի վերնագրի «և խոյս տալ Գաբրիանոսի» (եր. 130, տ. 12) մասից սկսած մինչև նոյն գրքի ԽՁ գլխի

վերջը (եր. 173, տ. 15) կտրած հանած է և ապա նոտրագրով, տարբեր թղթի վրայ, գրած և միացրած է։ Այս նորոգած մասը, ուրեմն ԺՁ—ԽԶ գլուխները, պատկանում է Տ խմբին։

15. *ք.* էջմ. № 616 (Կար. ց. 602)։ Մեծ. 14,5×10. կաշեկազմ, թուղթ, նոտրագիր, միասիւն։ Բովանդակութիւն՝—Խորենացու պատմութիւն։ Գրիչ, գրութեան տեղ և թուական անյայտ։ Գ. գրքի վերջին ԿՀ գլուխը չկայ։ Վերջից ուրիշ ձեռքով. «Յիշատակ է տէր Յոհաննիսին Առաքելին»։

16. Ա խմբին պատկանում է նաև Լայպցիգի քաղաքային մատենադարանում եղած Զ-իրը, որ նշանակում ենք Լ տառով. «Մովսիսի Խորենացւոյ մականուամբ քերթողի... Պատմութիւն Հայոց ընդօրինակեալ ի Լէօպօլիս Ռուսաց յամի տեառն ՌՃԼԶ» (1696 թ.)։ Այս Զ-րի յիշատակարանի մէջ Խորենացու համար գրուած է. «Որ շուրջ գքառերիւր ամաւ Տեառն ծաղկեցաւ և երկարակեաց եղև մինչև ցամս հինգ հարիւր եօթանասուն շուրջանակի»... Ձեռագրի երկրորդ երեսի մէջ»... Մովսէս... երկարակեաց լեալ իբր ամս հարիւր տասն և հինգ վախճանի ի խորին ծերութեան» (Իս. Յարութիւնեան, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892. եր. 10, 184)։ Այս ձեռագրից մենք ընթերցուածներ չունենք. Ա խմբի մէջ դնում ենք հիմնուելով Ա. Բաումգարտների վկայութեան վրայ, որ այս Զ-րը Վանանդեցու օրինակի (Ամստերդամի տպագիր, *t*) տեսակից է համարում (A. Baumgartner, Ueber d. Buch «Die Chrie», Leipzig 1886. եր. 482—489. արտատպ. Zeitschr. der Deutsch. Morg. Gesell. Bd. XL)։

17. Բացի վերևում դրուած եօթը ձեռագիրներից, ինչպէս մեր կատարած մանրամասն բաղդատութիւնից երևում է՝ Ա խմբին պատկանում են նաև՝ 1) *t*, Ամստերդամի տպագրութիւնը Թոմաս Վանանդեցու ձեռքով. 2) $կ^2$, Կարենեանցի բաղդատած երկրորդ Զ-րը, որ այժմ յայտնի չէ թէ ուր և ում մօտ է (տ. § 7)։ Ապա Վենետկի օրինակներից երկուսը, որոնց մասին առանձին։

Տ (ՏՊԱԳՐԻ) ԽՄԲԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ.

18. *ռ.* էջմ 611 (Կար. ց. 597)։ Նկարագրուած «Պատմագիրք Հայոց» հրատարակութեան մէջ Ղազար Փարպեցու յառաջաբանում (էջ Ե-Զ) և Ագաթանգեղոսի յառաջաբանում (եր. ԺԴ. 8)։ Մանրամասն նկարագրուած Գ. Տ.-Մկրտչեանի «Խորեն. պատմ. ուսումնասիրութեան» մէջ (Արարատ 1896. էջ 542—549. առանձին արտատպ. 1896. Վաղարշապատ. գլ. Դ)։ Աւելի համառօտ՝ «Ղազար Փարպեցու ձեռագիրը» յօդուածում B տառի տակ (Արարատ 1901-նոյեմբ.—դեկտ.)։ Այստեղ դնում ենք միայն կարևորը.

Մեծադիր, 19×25, կաշեկազմ, թուղթ, բոլորգիր, երկսիւն։ Ստացող Վարդան վարդապետ Բաղիշեցի։ Գրիչ Պօղոս երէց Գաւըռցի։ Գրու-

թեան տեղը Բաղէշ, սուրբ ուխտ Յովհաննու Մկրտչի—Ամրդօլու վանք: Թուականը ՌՃԻԱ (=1672): Պատմագիրների մեծ ժողովածու է և բովանդակում է Ագաթանգեղոս, Դաշանց Թուղթ, Մեծին Ներսէսի Վարքը, Պատմութիւն Մովսէսի Խորենացւոյ, Եղիշէ, Ղ. Փարպեցու Պատմութիւն, և Թուղթ, Սեբէոս, Կորիւն:

Խորենացու պատմութեան սկզբում գրուած է մի պատկեր, որ ներկայացնում է Խորենացուն և Սահակ Բագրատունուն: Առաջին գրքի ցանկը չկայ:

19. օ. էջմ. № 1664 (Կար. ց. 1622): Մեծ. 21×15, կաշեկազմ, Թուղթ, նոտրագիր, միասիւն: Խորենացու Բ. գրքի վերջում. «Զմեղուցեալ... գծող պատմագրիս, զորդի Նիկողայոս Բարունւոյ, զԱրիստակէս երէցս, յիշեցէք ի Քս... Թուին ՌՃԽԸ (=1699): Գ. գրքի վերջում. «Զնուազեալս ի լուսոյ աչաց զԱրիստակէս էրէց, զորդի Նիկողայոս Բարունւոյ, որ առաջնորդ էր Թէքֆիւրտաղոյ յիշեսջիք... որ բազում ջանիւ յաւարտ հանի գծագրելով, ի Թվին Քսի ՌՈՂԹ (1699) յունիսի ժ. օրն շաբաթ»:

Վերջում դատարկ թերթերի վրայ՝ 1) Մեսրոպ եպիսկոպոս Սմբատեանի գրած յիշատակարան Գէորգ Դ. Կաթողիկոսի մասին. 2) Պատմ. Յովակիմայն և Աննայ Ծնօղացն Ս. Աստուածածնին. 3) Յաղագս սրբոյ աթոռոյն Էջմիածնի զոր ինչ անցք անցանեն ի ժամանակ հայրապետութեան Տ՛ն Եփրեմի,—գրած Նախավկայի վանքի առաջնորդ Ջուղայեցի Սարգիս վարդապետից. 4) Պատմութիւն անցից պատերազմին Ռուսաց ընդ Տաճկաց Օսմանցւոց սկսեալ 1853 ամէ ց1856 ամ: Վերջում երկու երգ, որոնցից երկրորդն Աշըղ Շիրինի՝ «Երբ իշխան Բէրութեանցը սկսեց յաղթութիւնը»...

20. բ. էջմ. № 1666 (Կար. ց. 1624): Մեծ. 19,5×15 հրդմ. կաշեկազմ, Թուղթ, նոտրագիր, երկսիւն: Բովանդակութիւն—1) Յաղագս Պիտոյից (բոլորգիր). 2) Խորենացի (նոտրագիր). 3) Յաղագս վեցօրեայ գործոց արարչութեան (նոտրագիր):

Խորենացու պատմութիւնը ոչ մի գրքի ցանկ չունի. Ա. գրքից ունի միայն այսքանը. «Մովսէսի Խորենացւոյ յաղագս մերոյս յիսկզբան յայսմ բանիցս ի Սահակայ Բագրատունեայ խնդրոյ»: Խորենացու յիշատակարան Գ. գրքի վերջում. «Յիշեցէք ի Քրիստոս զսրբագրօղ սորա զտէր Աղէքսանդր բանի սպասաւոր զհոգևոր որդեակն իմ զտէր յոհաննէս, նորաբողբոջ և դեռաբուսիկ կուսակրօն քահանայ, զի յոյժ աշխատ եղաք ի սրբագրելն, զի յոյժ էր սխալ: Եւ նախկին ծրողի սորա մի յիշեսցէ տէր զյանցանս: Ի Թուին ՌՃԼԹ (=1690) յունվար ԻԴ»:

21. գ. էջմ. № 1667 (Կար. ց. 1625), Մեծ. 20×14 հրդմ. կաշեկազմ, Թուղթ, նոտրագիր, միասիւն: Բովանդակութիւն—Խորենացի, Եղիշէ, Փաւստոսից հատուածներ, Յաղագս վարուց և գործոց մեծին Դանիէլի, Քարոզներ Յովհաննու Որոտնեցւոյ ևլն:

Խորենացու պատմութիւնը ոչ մի գրքի ցանկ չունի: Յիշատակա-

բանը Բ. գրքի վերջում. «Ստացող պատմագրիս և զքաջ և իմաստուն Սահակ վարդապետ Ջուղայեցիս յիշեցէք, որ փափագանօք ետ գրել։ Եւ ես նուաստ և անպիտան սուտանուն Ռոմանոս գրիչս յիշեցէք ի թվականիս Հայոց ՌՂ (=1641 թ.) ամին գրեցաւ»։

22. ր. էջմ. № 1662 (Կար. ց. 1620)։ Մեծ. 25×19 հրդմ. կաշեկազմ, Թուղթ, բոլորագիր, երկսիւն։ Բովանդակութիւն—Ժողովումն մեկնութեան սրբոյ աւետարանիս որ ըստ Մատթէոսի—Շնորհալւոյ (նոտրագիր), ապա բոլորագիր՝ Խորենացու Պատմութիւն, Եղիշէ, Թոմայից հատուած Բարծումայի մասին. ապա նոտրագիր՝ Հարցումն եթէ զինչ է աստեղաբաշխութեան հանճարոյն շահն։

Խորենացին ոչ մի գրքի ցանկ չունի։ Գ. գրքի ԼԶ գլխի «զնախաբարքն նուաճելով» բառերից սկսած (եր. 301, տ. 12). ուրիշ ձեռքով և ուրիշ թանաքով է գրած։ Յիշատակարան չունի։

23. ս. էջմ. № 615 (Յակ. Թոփչեան, Ցուցակ Ջ-րաց Խաչիկ վարդ.-ի Դադեան, Վաղարշ. 1898. № 80. ուր և մանրամասն նկարագիր)։ Մեծ. 16×11 հրդմ. նորագոյն ձևի կազմ. Թուղթ, բոլորագիր, միասիւն։ Բովանդակութիւն—Խորենացի, Եղիշէ, Թոմայից հատուած Բարծումայի մասին։

Խորենացին ոչ մի գրքի ցանկ չունի։ Գ. գրքի վերջում կայ մի յիշատակարան առանց թուականի. «Ողջ լեր ծառայդ Աստուծոյ հեզահոգի տէր Յովհաննէս և յամենայն ժամ յիշեա և զիս զտառապեալ Մարգարս»։

24. Բացի էջմիածնի վերևում դրած վեց ձեռագիրներից՝ Տ խմբին պատկանում են նաև՝ ա^1, այն Ջ-րը, որից ծագում են Թոմաս Վանանդեցու ընթերցուածները Լոնդոնի հրատարակութեան մէջ (տ. § 2), և Վենետիկի օրինակներից երեքը, որոնց մասին յետոյ առանձին։

Խ (ԽԱՌՆՈՒՐԴ) ԽՄԲԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ.

25. ց. էջմ. № 1663 (Կար. 1621)։ Մեծ. 25,5×19 հրդմ. կաշեկազմ, Թուղթ, բոլորագիր, երկսիւն։ Բովանդակութիւն—Խորենացու Հայոց Պատմութիւն և Աշխարհագրութիւն։

Ջ-րի էջ 26 ա. և 72 բ. «Գիրք յիշատակ է Մարտիրոս վարդապետին»։ Աշխարհագրութեան վերջում, էջ 157 բ. «Փառք անհասանելի... որ կարողացոյց զիս... զեղկելի... Կարապետ սուտ անուն ծրագրել զպատմութիւն Թագաւորացն մերոց։ Աղաչեմ... յիշելոյ... զՄարտիրոս վարդապետն զքաջ հռետոր և զանյաղթ փիլիսոփայն»։ էջ 158 բ. «Գրեցաւ պատմագիրքս ի յերկիրս Մոկաց ի Գեղս որ կոչի Սուրբ ընդ հովանեաւ սուրբ Յովհաննու Մկրտչին և սուրբ Գէորգեա զօրավարին ձեռամբ սուտ անուն Կարապետիս և որդւոյն իմոյ տէր Յոհանէսին ի թըւականիս մերոյ ՌՁԸ» (=1639)։ Պատմութեան վերջում կայ Ստ. Ասողիկից ցանկի մի փոքր հատուած, որ նոյնն է, ինչ որ Ղ Ջ-րի մէջ։

վերջը աւելացրած է. «Վա՜յ ինձ հազար բերան գծողիս անարժան, զի օրինակն ցանկ չկէր, և այս միայն էր, անմեղադիր լերուք»։

26. ի. էջմ. № 248 (Կար. 241)։ Մեծ. 19×12,5 հրդմ. կաշեկազմ, թուղթ, նոտրագիր, միասիւն։ Բովանդակութիւն—Խորենացու Հայոց Պատմութիւն և Աշխարհագրութիւն, Ստ. Ասողիկ, Լաստիվերտցի։

Ասողիկի վերջում, Ձ-ր էջ 354 յիշատակուած է Գրիգոր գրիչ։ Լաստիվերտցու վերջում, Ձ-ր էջ 443 բ. կայ մի ոտանաւոր, որից դնում ենք հետևեալը.

Յորոց և մի հայկազնէին
Մովսէս քերթօղն Խորենացին,
Ճըշգրտախօս վիպասանին,
Յոլով ամաց մատենագրին,
Նախահաւր շարադրողին,
Ընդ արուդիմայն և զմարաբին։
Ըստ որում և նոյնք երկրորդողին
Եղեալ են բանք Ըստեփաննոսին,
Տարօնեցւոյ պատմաբանին,
Նաւարոհեալ սարաս նմին։
Ընդ որս պատմիչ սըգացողին
Արիստակեայ մեծ զուժկանին...
Ցանկացողի գրոց սոցին,
Ծախիւք ստացող տենչմամբ սրտին
Մատաթեայ օթձօղ բանին...
Յարարածոց թուականին
ԻՁՁ. ին
Եւ ի ծնընդենէ մերոյ Փրկչին
ՌՈԿ և եւին,
Տոհմիս արմեան թուականին
ԻԲ յոբելինին
Կրկին և զհինգ վերաբարդին.
Զգրիչ գրոցս աւարտ յանին,
Ցաւուրս հանուր հայրապետին
Տեառն Յակոբայ Սրբազանին...
Գիրքս այս գրեցան... Ի Կոտայինըն գաւառին
Ի յերևան նուազ քաղաքին։

Խորենացու Ա. և Գ. գրքերի ցանկերը Ա. գրքի սկզբում են, իսկ Բ. գրքինը՝ իր գրքի սկզբում, որի համար և Ա. գրքի սկզբում կայ ծանօթութիւնս. «Երկրորդ ցանկն գրած է իւր կարգին»։

27. ի. էջմ. № 1668։ Մեծ. 19×13 հրդմ. կաշեկազմ, թուղթ, նոտրագիր, միասիւն։ Բովանդակութիւն—Խորենացու Պատմութիւն, Ագաթանգեղոս, Դաշանց թուղթ։ Յիշատակարան չունի։ Վրան կայ կնիք

ՌՃԺԷ (=1668 Թ.) Թուական կրող։ Սկզբի երեսում. «Թուին ՌՃԻԵ (=1676 Թ.) յունիսի մէկն Ը ժամոյն արեգակն խաւարեցաւ»։ Մանրամասնութիւնը տեսնել այս «Պատմագիրք Հայոց» հրատարակութեան Ագաթանգեղոսի յառաջաբանի մէջ, էջ ԺԴ. հտ.։

28. Է. էջմ. № 1035։ Պատմագիրների ժողովածու, մանրամասն բաղդատուած (տես § 8) և նկարագրուած Ն. Մառից (Изъ лѣтней поѣздки въ Арменію, եր. 43 հտ.։ Նոյնը նաև Записки В. О. т. V. եր. 211—241)։ Դնում ենք միայն կարևորը.

Մեծութիւն իւրաքանչիւր սիւնակի 17×5,8 հրդմ. (իսկ թերթերինը 22×16,25). կաշեկազմ, մագաղաթ, բոլորագիր, երկսիւն։ Բովանդակութիւն—Խորենացու Պատմութիւն, Ստեփանոս Ասողիկ, Լաստիվերտցի, Խորենացու Աշխարհագրութիւն։ Խորենացու Պատմութեան Ա. գրքի վերջում. «Գիրքս պատմութեանց Հայոց հօաքեալ Մովսէսի Խորենացւոյն. զոր ստացաւ Սարգիս ահրեպկս՚՚ն Սանահնեցի և յետ գրել զայս յիշատակ իւր և ծնօղցն իւրոց»։ Ա. գրքի վերջում «զՆերսէս գրիչս յիշեցէք»։ Գրքի վերջում. «Փառք... որ կարողացոյց զիս... Ներսէս սուտ անուն ծրագրել զպատմութիւն Թագաւորացն մերոց»... «Գրեցաւ պատմագիրքս ի յերկիրս Լաւրու ի գեղս ուզաւրի [Մառի նկարագրի մէջ անճիշտ կերպով՝ Ուզաորի] ի վայելումն Սարգիս ահրեպիսկոպոսին... Ի սուրբ և ի գերահռչակ ուխտս որ կոչի Սանահին»։

Ըստ Մառի այս Սարգիս եպիսկոպոսը Սանահնի վանահայր է եղել 17-րդ դարում. Նրա վանահայրութեան համար յիշատակուած կան 1633 և 1652 թուականները. ի հարկէ նա կարող է 1633-ից առաջ էլ վանահայր կարգուած լինել, ինչպէս և 1852-ից յետոյ էլ վանահայր եղած լինել։ Այս Է Ձ-րն ուրեմն այդ միջոցներում է գրուած։

29. Լ. էջմ. № 249 (Կար. ց. 242)։ Մեծ. 34×25 հրդմ. կաշեկազմ, թուղթ, բոլորագիր, երկսիւն։ Բովանդակութիւն—Խորենացու Պատմութիւն, Ստ. Ասողիկ և Լաստիվերտցի։

Այս Ձ-րը Խ խմբին պատկանող բոլոր Ձ-ների ընդհանուր մայրն է և մեզ յայտնի բոլոր Ձ-ներից ամենահինը։ Յիշատակարաններից երևում է, որ երկու անգամ նորոգուած է, մէկ՝ 1567 թուին Ներսէս վարդապետի պատուէրով Իգնատիոս գրչի ձեռով. մէկ էլ՝ 1684 թուին Բաղիշոյ առաջնորդ Աւետիք վարդապետի պատուէրով Դաւիթ Ճնճղուկ գրչի ձեռով։ Գրքի հին մասի գրչի անունն է Յոհան, իսկ գրութեան տեղն ու թուականն անյայտ են։ Գրքի մեծագոյն մասը հին է և կարող է 14-րդ, գուցէ և 13-րդ դարու լինել։

Խորենացու մէջ մի քանի տեղ, ինչպէս՝ Ձ-ր էջ 9 ա. բ., անթուական յիշատակարաններ կան, յիշատակութեամբ նորոգել տուող Ներսէս վարդապետի և գրիչ Իգնատիոսի։ Բ. գրքի ցանկի վերջում, Ձ-ր էջ 34 բ. «Զշնորհազարդ... Ներսէս րաբունապետ Գնունեցին յիշեցէք... որ աշխատութեամբ ժողովեաց զհնացեալ և գեղծեալ թերթերս սորա և զպակասն ետ գրել»... Մեծ յիշատակարանը Խորենացու Գ. գրքի վերջում, Ձ-ր էջ 132 ա. «Փառք անհասի... որ կարողացոյց զիս...

Իգնատիոս ծրագրել զպակասութիւն գրոցս... Աղաչեմ... յիշելոյ... զՆերսէս վարդապետն և զքաջ հռետորն և զանյաղթ փիլիսոփայն: Եւ զծնօղսն իւր ըստ մարմնոյ՝ զհայրն զՄեհէրն և զմայրն զՖնքուշն... Եւ արդ գրեցաւ պակասութիւն գրոցս մինչև ցայս վայր և աստի յառաջ այլ օրինակ ոչ կայր, որ գրէի: Բայց գրեցաւ այսքան բանքս յերկիրս Խիզնայ ի մեծ թվականիս հայոց ի Ռ և ԺԶ ամի (=1567), ի գիւղս որ կոչի Ղարասու, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս որ յանուն սրբոյն Գէորգայ զօրավարին կառուցեալ կայ: Ի Հայրապետութեան մերոյ Աղթամարայ Տեառն Գրիգորի և սրբոյն Էջմիածնի Տ՛՛ր Միքայէլին... յիշման արժանի առնէք... զեղկելի գծողս, զԻգնատիոս... Դարձեալ յիշեցէք զՆերսէս բաբունին, որ ետ վերստին նորոգել զգիրքս զայս... և եդ ի դուռն խնդրակատար Սուրբ Աստուածածնին»:

Նորոգողի գանգատը թէ «աստի յառաջ այլ օրինակ ոչ կայր, որ գրէի», վերաբերում է Ասողիկի ցանկերին, որ գրուած են Խորենացուց յետոյ և թերի են: Վերևի յիշատակարանի տակին կայ մի ուրիշը. «Դարձեալ յիշեցէք... զքաջ բաբունին զԱւետիք վարդապետ, զտեսուչ և զառաջնորդ մայրաքաղաքին Բաղիշոյ, որ վերստին ետ նորոգել զսուրբ գիրքս... ի թվականին ՌՃԼԳ (=1684) և դարձեալ ետ յիշատակ ի դուռն խնդրակատար վանից Տիրամայր Սուրբ Աստուածածնին... Նորոգեցաւ և կազմեցաւ վերստին սուրբ տառս... ձեռամբ... գրչի Դաւիթ մեղապարտ Ճնճղկի և որդւոյն իմոյ Ստեփանոս սարկաւագի»:

Այս երկրորդ նորոգութիւնը Դաւիթ Ճնճղուկի ձեռքով, ինչպէս երևում է, վերաբերում է Խորենացու կողքի լուսանցքների մաշուածներին, որոնք նոյնպէս տեղ տեղ նորոգուած են տարբեր տարբեր ձեռքերով. թէ չէ՝ ամբողջ Խորենացին իսկապէս գրուած է երկու տեսակ թղթի վրայ և երկու ձեռքով. մի մասն Իգնատիոս գրչից օրինակուած, միւս մասը հին, Յոհան գրչից: Հին գրչութեամբ են նաև Ստեփանոս Տարօնեցին (որի սկզբի ցանկերը, տեսանք, առանց նորոգուելու և թերի են մնացել) և Արիստակէս Լաստիվերտցին, որ վերջանում է այսպէս. «Վաղ ժամանել քան զշարժել պատուհասին և ընդդէմ կալ»: Հաւանօրէն սկզբնապէս Լաստիվերտցուց յետոյ եղել է և Խորենացու Աշխարհագրութիւնը, որ այժմ չկայ Զ-րի մէջ: Հին գրութեան յիշատակարան կայ Ասողկի վերջում «յոհան գրիչ» յիշատակութեամբ, բայց առանց թուականի:

Խորենացու Ա. գրքի սկզբում (որ նորոգած մասից է), ցանկից անմիջապէս յետոյ կայ մի պատկեր. վերևում մի կողմից նստած է Խորենացին գլխաբաց, գրիչը ձեռին, դիմացը գիրք. միւս կողմից նստած է մի թագապսակ անձ. ներքևում կայ մի ծնկաչոք ծերունի, գլխի փաթաթանով: Պատկերի տակին գրած է. «Սահակ Բագրատունին խնդալն Մովսէս Խորենացոյ բան»:

Խորենացու նորոգած մասը պատկանում է Տ խմբին, իսկ հին մասը՝ Ա. խմբին: Որովհետև այս Զ-րը մայր է բազմաթիւ Զ-ների, ուստի ներքևում դնում եմ, թէ ո՛ր հատուածը, ներկայ հրատարակութեան երեսներով և տողերով, Տ խմբին է պատկանում, և ո՛րը՝ Ա. խմբին:

Տ. 1,1 Ա. գրքի ցանկից մինչեւ զըգեշխութիւն կողմանցն ար—71,1
Ա. 71,1 —ժանաւորեցան առնուլ —պատճառս տալ անբան—90,3
Տ. 90,3 —ութեան նոցա, և —որոյ եկեալ և 129,11
Ա. 129,11 ոչ պատահեալ Տիգրանայ —և այլ բազմութեան հրէից։ 132,18
Տ. 132,20 յետ այսր ամենայնի —ի ծածուկ ընտանեօքն հանդերձ 135,1
Ա. 135,1 առ եղումայեցիս փաղչէր—ամենայն ազգաց հիւսիսակ—221,19
Տ. 221,19 —ան առաջնոց սնեմ իսկ —Արբուկ սպանանել զՄամգոնն 222,5
Ա. 222,5 զոր իմացեալ —իւր որ ի Հայս և յդ—222,12
Տ. 222,12 —է առ Թագաւորն Ճենաց —-զի քան զամենայն 222,18
Ա. 222,18 բնակեալս ի վերայ —սակաւուց ճաշակելիս 223,7
Տ. 223,7 զփասեան և զպոր — հանդիպեցաւ զալ—223,11
Ա. 223,12 —ըստեանն Տրդատայ —վասն որոյ մանրա—224,4
Տ. 224,5 —խուզիւ քննեալ —արդարև համբեր ժու—224,9
Ա. 224,9 —ժկալ և առաւել իմաստուն—հայրենականացն հասե—224,17
Տ. 224,17 —լոց փառաց —յորմէ և աշակերտեալ 227,8
Ա. 227,9 հաւատաց, զբռնաւորսն—ի վերայ հորոյն կախ—296,13
Տ. 296,13 —ել զփայտէ —որ սուղեալ և ղաւղեալ 322,19
Ա. 322,20 եւն յանյայտ տեղիս —վերակացուք ան—365,11
Տ. 365,11 հարթարարք, անողորմք մինչեւ վերջ։

Պէտք է նկատել սակայն, որ Ա. խմբին պատկանող հատուածներում տեղ տեղ նորոգուած են նաև աջ ու ձախ լուսանցքները, յաճախ վերևից մինչև ներքև. երբեմն նաև երեսների մէջերը։ Այս պատճառով այս մասերում էս երբեմն Տ խմբի հետ է միանում այս Ձ-ըը։ Այս մանրամասների նկարագիրը թողնում եմ։

Ի վերջոյ յիշեմ, որ այս Ն Ձ-բի հին մասը գրուած է հին ուղղագրութեամբ. օ ձայնաւորի փոխանակ ունի աւ, իւ երկբարբառի տեղ՝ եւ (ինչպէս՝ առեւծ, արեւն, ութեւն ածանցը), բայերի անկատարն ունի եի, եիր եյն. նոյնպէս՝ թե և նմանները. գերանուանների վերջում յ—նմայ եյն։

30. ա. էջմ. № 1661 (Կար. ց. 1619)։ Մանրամասն նկարագրուած է Գ. Տ.-Մկրտչեանից «Հայագիտական Հանդէսում», 1904, էջ 269—270, և այս «Պատմագիրք Հայոց» հրատարակութեան Ագաթանգեղոսի յառաջաբանում. էջ ԺԵ. 10, որից դնում ենք կարևորը.

Մեծ. 31×23, կաշեկազմ, թուղթ, նոտրագիր, երկսիւն, ընդամենը 554 թերթ։ Ձեռագրիս ստացողն է Մինաս վարդապետ (էջ 517 բ.). գրիչներ՝ Թումա (էջ 441 բ.) և Գրիգոր քարտուղար։ Յիշատակարաններ. «Գրեցաւ թվին ՌՃԻԵ ի գիւղն Ալիփուղար ձեռամբ Գրիգոր քարտուղարի (էջ 365 ա.)։ Էջ 111 ա. «Ով հայր սուրբք, Նարէն վարդապետն զքահանայքն որ մատնեաց ի ձեռն Ղափլան փաշային՝ ես փախստական և անճարակ տեղի նստեալ գրեցի զայս տետրս. թվն էր ՌՃԻԷ փետրվարի ամսոյն ԺՁ, օրն շաբաթ»... Ուրեմն ձեռագիրս գրուած է ՌՃԻԵ—ՌՃԻԷ (=1676—1678) թ.։

Այս ստուար և մեծադիր Ձ-ըը պատմիչների ժողովածու է և

պարունակում է—Խորենացի, Ասողիկ, Լաստիվերտցի, Եւսեբիոսի Եկեղեցական պատմութիւն, Ագաթանգեղոս, Դաշանց Թուղթ, Մեսրոբ երէց, Զենոբ, Յովհան Մամիկոնեան, Փաւստոս, Եղիշէ, Օրբելեան Ստեփան, Միխայէլ Ասորի, Վարդան, Կիրակոս, Սոկրատի Եկեղեցական պատմութիւն։

31. Կ¹ Էջմ. № 1379։ Այս Ձ-րը Կարենեանցի բաղդատած առաջին ձեռագիրն է (տես § 7)։ Մեծ. 28×21, կաշեկազմ, թուղթ, նոտրագիր, երկսիւն։ Բովանդակութիւն—1) Մովսէս Խորենացու Պատմութիւն. 2) Մովսէս Խորենացու Աշխարհագրութիւն. 3) Ուրիշ աշխարհագրական հատուածներ. 4) Յառաջաբաններ՝ Մատթէոս Ուռհայեցու, Կիրակոս վարդապետի, Միխայէլ Ասորու, Փաւստոս Բիւզանդի, Թոմա Մեծոփեցու (իսկապէս միայն Թոմայի մասին տեղեկութիւններ). 5) Մեսրոպ քահանայի Ծաղկաքաղ ի Հայոց Մնացորդաց յարեւելից գրոց. 6) Կիրակոս Գանձակեցու Պատմութիւն (ոչ ամբողջ). 7) Պատմութիւն վասն սքանչելեաց պատկերին Քրիստոսի. 8) Զենոբ և Յովհան Մամիկոնեան. 9) Դաշանց Թուղթ. 10) Պատմութիւն վասն գիտելոյ զպատճառ բերելոյ Ծիծառնկոյ Խաչին. 11) Յովհաննէս Մամիկոնեանի վերջին գլուխը՝ Վասն մահուան Տիրանայ. 12) Յաղագս պատմութեան սուրբ ա''ծային եղոյն... և վասն մարմնոյն սուրբ Յովհաննու Կարապետին. 13) Վասն մեծի նախարարութեանն Օրբելեանց... (Ստ. Օրբելեանից). 14) Սամուէլի քահանայի հաւաքմունք. 15) Պատմութիւն համառօտ անօրէն Թամուրին—Թոմայ վարդապետի. 16) Վասն միաբանութեան Հայոց և կաթողիկոս ձեռնադրութեան. 17) Պատմութիւն մեծի րաբունապետին Թոմայի, զոր արարեալ Կիրակոս բանասէր վարդապետի. 18) Մկրտիչ Նաղաշի կենսագրութիւն—գրած Աստուածատուր վարդապետի։

Խորենացու Աշխարհագրութեան վերջում, եր. 238. «Եւ զեղկելի գրիչս յիշեցէք ի տէր։ Մանաւանդ զամենամեղ և զապիկար Մարտիրոս լոկ անուամբ սպասաւոր բանի, որ և ստացող և ուղղող ըստ կարի տկարութեանս»։ էջ 278. «Յիշատակ է պատմագիրքս Մարտիրոս վարդապետին ի դուռն ս. Կարապետին, որ է ի գաւառն Տարօնոյ»...։ էջ 707. «Ի թվին ՌՀԳ (=1624) գրեցաւ պատմագիրքս յոյժ դառնագոյն աշխատութեամբ և փոփոխմամբ անհմուտ գրչաց և անհանգիստ տառապանմամբ ի գաւառէ ի գաւառ, հալածելով ի ձեռաց մահմետականաց»...։ Վերջից էջ 314—318 զանազան յիշատակարաններ, որոնցից մէկը (ոտանաւոր) պատմում է, թէ Մարտիրոս վարդապետը հայոց հազար վաթսուն և երեք (=1614) թուին նորոգել է Ղազարու վանքը. մի ուրիշը՝ (դարձեալ ոտանաւոր), թէ Վարդան վարդապետ Բաղիշեցին այս գիրքը, «անկեալ ի գրաւի», ազատում է Հայոց հազար հարիւր տասներեք (=1664) թուին։ Ապա մի ընդարձակ յիշատակարան, Բաղիշեցի Վարդան վարդապետի ձեռով, ինչպէս երեւում է յետագայում գրած, թէ ՌՃԺԳ թուին գալով Ղազարու վանքը՝ նորոգութիւններ և նոր շինութիւններ է անում և «զայս գիրքս և այլս և որ գրաւ էր ի ձեռս բրդաց Աստուծով ազատեցաք և տվաք զսա յիշատակ... ի դուռն սուրբ առաքելոյս։ Եւ որչափ հին և փտեալ գրեանք կայր ի վանքս... Լ գիրք

և այլ աւելի տվաք նորոգել և կազմել ձեռամբ Սահակ վանեցի վարպետին ի թվին ՌՃԻ» (=1671 թ.)։ Թողնում ենք ուրիշ յիշատա-կարաններ։ Այս գրքի պատմութեան մասին՝ տեսնել նաև Կարենեանցի Բաղդատութիւնը։

32. ը. Ձ-ը Կարապետ Եղեանի (այժմ Մեսրոպ եպիսկոպոս Տ.-Մովսիսեանի մօտ)։ Մանրամասն նկարագրուած է Ստ. Մալխա-սեանից (տե՛ս Ասողիկ, Պետերբուրգ 1885, յառաջաբան, էջ ԼԲ—ԼԹ). համառօտ այս հրատարակութեան Ագաթանգեղոսի յառաջաբանում (էջ ԻԵ հտ.), որից դնում ենք կարևորը.

Մեծ. 27,5×20 հրդմ. կաշեկազմ, թուղթ, նոտրագիր, երկսիւն։ Բովանդակութիւն—ընդ ամենը 18 պատմագիր։ Աբրահամ գրչից են առաջին 11 պատմագիրները—Խորենացի, Ասողիկ, Լաստիվերտցի, Եւսեբիոսի Եկեղեցական պատմութիւն, Ագաթանգեղոս, Դաշանց թուղթ ևն։ Թուականով յիշատակարանը. «Գրեցաւ ձեռամբ Աբրահամ անար-ժանի ի Տիգրան քաղաքի ի մատրանին Սարգսի ՌՃԺԷ (=1668) թվականին»։

Խորենացու Գ. գրքի ԿԶ գլխի մէջ, «ապագայիցն յայտնութիւնք» բառերից յետոյ հագցրած է տեսլի նկարագիր և ապա մեկնութիւնը (տ. այս հրատ. եր. 354,18 և ծանօթութիւն)։

33. Հ. Աղթամարի վանքի Ձ-ը, որի համեմատութիւնն ու նկարա-գիրը ստացել ենք 1903 թուի յունիսի 20-ին մեր աշակերտ Ճեմարա-նաւարտ, այժմ հանգ. Հ. Հացագործեանից։ Դնում ենք նրա ուղարկած նկարագրից կարևորը.

Մեծ. 19×12,5 հրդմ. թերթ 202. կաշեկազմ, կողերը թանձր թուղթ, վրան կտաւ, հիմքը ոսկեզօծ. թուղթ, բոլորագիր, միասիւն։ Բովանդակութիւն՝ միայն Խորենացու Հայոց պատմութիւն։ «Կը պակասի Վենետկի 1827 թուի հրատարակութեամբ 519 երեսի (վերէն հաշուելով) 16-րդ տողի «գիտութիւն» բառէն մինչև 522 երեսի վ. հ. 12-րդ տողի («համանգա)մայն» բառը (ձեռագրի մէկ թուղթ 191-ի և 192-ի մէջտեղը) և Ողբէն 552 երեսի վ. հ. 18 տողի («հաւա)սարելով տրտմութեան»—էն մինչև վերջ... Գրիչ, տէր, տեղ, թիւ ևն անյայտ»։

34. Խ խմբին պատկանում է նաև Մառի նկարագրած № 1 Հայկ. Ձեռ. Ճեմար. Աբեղեան լեզ. ՊԲԳ, որ նշանակում ենք ջ տառով։ Գրութեան թուականն է ՌՃԺԷ (=1668 թ.)։ Հաստ թուղթ, 219 թերթ. մաքուր բոլորգիր. գրել է Յովսէփ վարդապետ ի գիւղաքաղաքն Աստապատ։—Այս Ձ-րից մենք բաղդատութիւն չունինք, բայց Մառի նկարագրով յար և նման է Սանահնի օրինակին (էջմիածնի կ. № 1035 Ձ-րին, տ. § 28), որ Խ խմբի Ձ-իր է։ («Հանդ. Ամս.» 1892, էջ 45)։

Այս խմբի մէջ են մտնում նաև Վենետկի օրինակներից երեքը, որոնց մասին առանձին։

35. Այս բոլոր Ձ-ների ընդհանուր մայրը, ինչպէս վերևում գրի,

էջմիածնի մատենադարանի Ղ (№ 249) Ձ-ըն է։ Այդ պարզ երեւում է հետեւեալ հանգամանքից. որ հատուածը որ Ն-ի մէջ նորոգած է Տ խմբի վրայ՝ այս բոլոր Ձ-ներն եւ նոյն տեղում միանում են Տ-ի հետ. իսկ որ հատուածը որ Ն-ի մէջ մնում է հին գրչութիւնից, որ Ա-ի հետ է՝ նոյն տեղում այս բոլոր Ձ-ներն եւ Ա-ի հետ զոյգ են ընթանում իրենց ընթերցուածներով։ Այս այնքան պարզ ու որոշ է, որ մանրամասնութիւնների մէջ մտնելը աւելորդ եմ համարում. միայն չպէտք է մոռանալ, որ Ղ Ձ-ըի մէջ, ինչպէս վերեւում ասացի, Ա խմբին պատկանող հատուածների մէջ եւ տեղ-տեղ երեսի կողքերից, կամ մէջերից, նորոգուած են Տ-ի վրայ. ուրեմն երբեմն հին հատուածների մէջ եւ ԱԽ խմբակցութեան հետ փոխէփոխ կազմում է ՏԽ խմբակցութիւնը։ Երբեմն էլ այսպիսի ՏԽ խմբակցութիւնները պատահական են, ինչպէս բաց թողած յօդեր, տառեր եւն, որ ամեն Ձ-ըի մէջ կարող են լինել. բացի այդ՝ Ն-ից ծագող Ձ-ները երբեմն ուղղուած են այս կամ այն Ձ-ըի վրայ։

Խնդիրն այն մասին չի կարող լինել, թէ արդեօք այս Ձ-ների ընդհանուր մայրը Ղ Ձ-ըն է թէ ոչ, այլ միայն այն մասին, թէ դրանք անմիջապէս Ն-ի՞ց են ծագում, թէ՞ կան այնպիսիները, որոնք ծագում են Ն-ից միջնորդաբար, մեզ յայտնի կամ անյայտ Ձ-ներից օրինակուած լինելով։ Այս որոշելու համար շատ հիմունքներ կան, բայց այդ համարում եմ աւելորդ աշխատանք. ուստի մի երկու կէտ միայն յիշելով բաւականանանք։ Եր. 75 տ. 6 Ղ Ձ-ըի բնագիրն ունի «ժամանակս», լուսանցքում ուրիշ ձեռքով ուղղած է «ժամս». Ւ Ձ-ըի բնագրի մէջ արտագրուած է Ն-ի թէ բնագրի մէջ եղածը եւ թէ լուսանցքում ուղղածը՝ իբրեւ «ժամս ժամանակս»։ Նոյն եր. 75, տ. 12. Ղ Ձ-ըը բնագրում գրած է «թուեալ», գլխին աւելացրած է «էր պատ», բայց «թուեալ» բառի ու-ի տակ եւ «պատ» բառի տ-ից յետոյ նշան է դրած, որ հասկացուի «թուէր պատեալ». Ւ Ձ-ըի գրիչը չհասկանալով նշանները՝ արտագրել է նախ գլխին գրածը, ապա տակինը՝ իբրեւ «էր պատ թուեալ»։—Եր. 273, տ. 3 Ղ Ձ-ըն ունի «սատակեցաւ». ց Ձ-ըն ունի «սատակի» ըստ ԱԽ Ձ-ների, բայց լուսանցքում ուրիշ ձեռքով շինած է «մեռանի». Հi Ձ-ները բնագրի մէջ ունին ց-ի լուսանցքում ուղղածը՝ «մեռանի»։ Դարձեալ եր. 281, տ. 16 ց Ձ-ըի մէջ «Տիրանայ» բառի վերջը «անայ» քերած է, իսկ i Ձ-ըն ունի միայն «Տիր»։ Տես նաեւ եր. 298, տ. 1. եր. 326, տ. 18, 19։ Այսպէս եւ ց Ձ-ըի մէջ կան բաւական քերածներ կամ բարձման նշանով գրուածներ, լուսանցքներում ուղղումներ եւն, որոնց հետեւում է h Ձ-ըը։— Եր. 252, տ. 21. Ղ Ձ-ըը բնագրում ունի «աւերեցաւ», բայց լուսանցքում ուղղած է «կոտորեցաւ». ա Ձ-ըը բնագրում ունի «կոտորեցաւ աւերեցաւ», այսինքն Ն-ի լուսանցքի ուղղումը մտցրած է բնագրի մէջ, պահելով միւս բառն եւ։ Այս եւ նման շատ հանգամանքներով կարելի է որոշել Խ խմբի Ձ-ների Ն-ից ծագման յարաբերութիւնները, բայց ես այդ աւելորդ եմ համարում. ուստի անցնենք ուրիշ Ձեռագիրներին։

36. Վենետկի 1843 թ. տպագրութեան զեկուցումի մէջ, տեսանք

(§ 3), յիշւում են վեց անթերի օրինակներ։ Մի նամակով հ. Ա. Ղազիկեանից մի քանի ծանօթութիւն խնդրեցի այդ օրինակների մասին. իբրև պատասխան շնորհակալութեամբ ստացայ հ. Բ. Զրաքեանից հետևեալը, որ դնում եմ այստեղ.

«Հ. Արսէն վ. Ղազիկեանի յանձնարարութեան համաձայն քննեցի մի առ մի Խորենացւոյ Հայոց պատմութեան մեր մատենադարանի Ձ-ները, պատասխանելու համար Ձեր... Նամակի մէջ բովանդակուած հարցումներուն։ Կը ցաւիմ սակայն, որ քննութեան արդիւնքը բոլորովին գոհացուցիչ պիտի չըլլայ Ձեզ, քանի որ 1843-ի հրատարակուած «Մովսէս Խորենացւոյ Մատենագրութիւնքի» զեկուցումին մէջ, Հայոց պատմութեան վերաբերեալ «անթերի վեց օրինակները» կարելի չեղաւ ամբողջապէս ստուգել և որոշել։ Վասն զի վանացս գրչագիրներու անտիպ ցուցակին մէջ ութ ամբողջական օրինակը միայն կը յիշուին Մովսէս Խորենացւոյ Հայոց Պատմութեան. որոնցմէ երեքը զանազան Ձ-ներու հետ համեմատուած եւ ուղղագրուած տպագրութիւններ են։ Յիշուած չէ թէ համեմատութեան համար ծառայող այդ Ձ-ները երբ գրուած են և ուր կը գտնուին. հետևաբար անոնց մասին չունիմ հաղորդելիք մանրամասնութիւն. հաւանական կը համարիմ որ Զեկուցումի մէջ յիշատակուած ՋԾԲ թուականի գրչագիրը տպագրին հետ համեմատութիւններէն մին ըլլայ։ Մնացած հինգ գրչագիրներու թուահամարները և այլ ծանօթութիւնքը ըստ Ձեր փափագին կը դնեմ հոս.

ա. Օր. թիւ 1530. բոլորգիր, կըբովանդակէ Խորենացի, Եղիշէ, ևն։ Գրութեան տեղը՝ Երնջակ, ի գեօղն Շօռօթ։ Ժամանակ՝ ՌՃԺԳ=1664։ Գրիչ ?։ Կընդօրինակեմ մաս մը յիշատակարանէն... «աւարտ եղև յայսմ տառի՝ ի թվականիս հայոց սեռի. երկքառեակ և երկհարիւրի. երկյոբելեան և երկհնգեակ ի նոյն յարի. և երբեակ թիւ այլ յարաբարդի։ Ամսեանն Յունաց Ապրիէլի, եռեակ, հնգեակ և քառակի, և թիւ մի այլ աւելի. երկիրս Երնջակ ասի ի վիճակն սուրբ Կարապետի. առաջնորդութեան տեառն յեսայի՝ հեզահոգի վարդապետի և կաթղիկոսութեան Հայոց սբ Էջմիածնի՝ յակոբայ բաբունապետի. գծագրեցաւ տառս ցանկալի՝ ասացեալ Եղիշէի թարգմանողի, ի գեօղն Շօռօթ վերակոչի ի դուռն սուրբ Աստուածածնի՝ ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչին»... Օրինակս ունի Բ. գիրք Ը գլուխի վերնագիրը. սակայն լուսանցքի մէջ փոխանակ Ը նշանակելու, կը դնէ Է։ Զունի Գ. գրքի ցանկը»։ —

Ըստ Մեսրոպ եպիսկոպոս Տ.-Մովսիսեանի ցուցակին՝ Վենետիկի այս № 1530 Ձ-ըը գրած է ՌՃԺԳ—Դ թուին, ստացողն է Արիստակէս վարդապետ. «եւ ի դուռն Ս. Ստեփանոսի Նախավկային, որ Շամբի ձոր յորջորջի. առաջնորդ. տն Միքայէլի աստուածաբան վարդապետի. ՌՃԻ թուին (1671)։ Բովանդակում է՝ ա) Մովսէս Խորենացու Պատմութիւն. բ) Պատմութիւն Եղիշէի. գ) Հատուած Թոմայի. դ) Բառգիրք աշխարհագրական. ե) Հայելի վարուց։—

«բ. Օր. թիւ 869. Նօտրգիր. Խորենացի, Ասողիկ և Սամուէլ երէց։ Գրութեան տեղի Բաղէշ։ Ժամանակ ՌՃԼԲ—Գ=1683—1684։ Գրիչ Դաւիթ Ճնճղուկ։ «Ի վայելումն Մոկացի Ստեփանոս վարդապետի

ի Բաղէշ քաղաքի՝ ի դուռն Ս. Կիրակոսին»։ Սա ևս ունի Բ. գիրք Ը գլխի վերնագիրը։ Զունի ի վերջ ցանկին «Տաղք չափաւը»։—

Մեսրոպ եպիսկոպոս Տ.-Մովսիսեանի ցուցակից կարևոր եմ համարում աւելացնել. «Յիշեցէք զաինզերալոյս վարդան վարդապետն, որ ի սոյն ամի գնաց յերուսաղէմ ԺԸ. արամբ, որ զայս գ պատմագրաց օրինակն ետ. լաւ և ընտիր սրբագրեաց գրով»։ Բովանդակութիւնն է՝ ա) Պատմութիւն Խորենացւոյ. բ) Տումար. գ) Ասողիկ. դ) Սամուէլ երէց։

Այս Զ-րի գրիչ Դաւիթ Ճնճղուկը նոյն անձն է, որ Բաղիշոյ առաջնորդ Աւետիք վարդապետի հրամանով նոյն 1684 թ. նորոգում և կազմում է Խորենացու հնագոյն Զ-րը՝ Ն (տես § 29)։ Վենետկի այս Զ-րը պատկանում է, ինչպէս կը տեսնենք (§ 38), Տ խմբին, ուստի և չի կարող նոյն գրչի ձեռքով նորոգուած Ն Զ-րից ծագած լինել. այլ ընդհակառակն այս Ն Զ-րը երկրորդ անգամ նորոգուել է, ամենայն հաւանականութեամբ, Բաղիշեցի Վարդան վարդապետի տուած այն լաւ և ընտիր Զ-րից, որից օրինակուած է Վենետկի № 869 Զ-րը։

«գ. Օր. Թիւ 200. բոլորգիր. Խորենացի և Եղիշէ։ Գրութեան տեղի?, ժամանակ ՌԾԹ=1660. Գրիչ Ալեքսան։ Սա ևս ունի Բ գիրք Ը գլխի վերնագիրը։ Զունի Գ գրքի ցանկը։

«դ. Օր. Թիւ 1023, բոլորգիր Խորենացի և նոտրագիր Միխայէլ Ասորի եւն։ Գրութեան տեղի?, ժամանակ?, գրիչ?։ Ունի Բ. գրքի Ը գլուխի վերնագիրը այսպէս. «Երկրորդ թագաւորութեան լինել ի զաւակէ Արշակայ Մարաց թագաւորին». և փոխանակ Ը նշանակելու, կդնէ Է։ Զունի ի վերջ ցանկին «Տաղք չափաւը»։—

Ըստ Մեսրոպ եպիսկոպոսի ցուցակի՝ բովանդակում է՝ ա) Խորենացի (բոլորգիր). բ) Միխայէլ Ասորի (նոտրգիր). գ) Դաշանց Թուղթ (բոլորգիր). դ) Սամուէլ Անեցի (բոլորգիր)։—

«ե. Օր. Թիւ 1156. բոլորգիր, Խորենացի և Ասողիկ. գրութեան տեղի?, ժամանակ?, գրիչ?։ «Ղազարոս Ղայսարցի ստացայ զգիրս պատմութեան Մովսէս Խորենացւոյ՝ ի հայրապետութեան երից երանեալ տեառն Փիլիպպոսի... և ի թագաւորութեան փոքր Շահապաղիս ի դառն և ի նեղ ժամանակիս ի թուականութեանս հայոց ՌԾ և Բ ամին (=1653 թ.), ի յերկիրս արարատեան»... Ունի Բ. գիրք Ը գլխի վերնագիրը, որ ի սկզբան կարմրադեղով՝ յետոյ սև թանաքով վրայէն անցած. Ը գիրը չի տեսնուեր լուսանցքի մէջ, այլ կայ քերթուած անորոշ գիր մը. յաջորդ գլուխը կը կրէ Ը։ Ունի ի վերջ ցանկին «Տաղք չափայինք և ի Սահակ Բագրատունի», սակայն չերևիր տաղը ի վերջ գրոց»։

«Խորենացւոյ Հայոց Պատմութեան ամբողջ այս հինգ օրինակներէն զատ, կը գտնուին երկու ճառընտիրներու մէջ մի քանի հատուածներ. 1) Յաղագս Նունէի. 2) Յաղագս ժողովոյն Նիկիոյ. 3) Յաղագս ժողովոյն Կոստանդնուպոլսի, Բ. Ճառընտրի մէջ, որ ԺԲ դարու գրչութիւն է հաւանօրէն։ Հատուած մ'ալ «Յաղագս Գրիգորի Լուսաւորչի», ի Ճառընտրի Ը, որ գրուած է ի թուականին ՉԼԱ—Բ»։—

37. Վենետկի 1843-ի տպ. մէջ յիշուած վեց անթերի օրինակների որ

խմբին պատկանելը ճիշտ որոշւում է նոյն տպագրութեան մէջ բերուած ընթերցուածներով։ Բ. գրքի Ը գլխի վերնագրի և սկզբի հատուածի (տ. § 9) մասին կայ հետեւեալ ծանօթութիւնը. «Հատուածդ՝— երկրորդ թագաւորութեանն լինէր ի զաւակէ Աշդահակայ Մարաց եղելոյ թագաւորի—չիք յերիս ընտրելագոյն օրինակսն. և ի միւս երկուսին օրինակսն չիք Ը գլխակարգութիւնդ (այսինքն գլխի վերնագիրը), այլ միահետ կցի ընդ նախընթաց գլխոյն»։ Այս ծանօթութիւնից երեւում է, որ վեցերորդ օրինակը, որ ծառայել է տպագրի համար իբրև բնագիր՝ ունեցել է թէ Ը գլխի վերնագիրը և թէ սկզբի պակասած հատուածը, այսինքն այնպէս է եղել, ինչպէս տպուած է բնագիրը (տ. § 9)։

Այն երկու օրինակը, որոնք չունէին Ը գլխի վերնագիրը, բայց ունէին սկզբի պակասած հատուածը՝ համեմատ են Էջմիածնի մատենադարանի Ա խմբի Ձ-ներին։ Եւ իսկապէս 1843-ի տպագր. մէջ բերուած բազմաթիւ ընթերցուածներով Վենետկի երկու օրինակ միանում են Էջմիածնի Ա խմբի Ձ-ների հետ։ Այս երկու օրինակը սակայն չկան Վենետկի այժմեան հինգ Ձ-ների մէջ, քանի որ այժմեան հինգ Ձ-ներն էլ, ինչպէս վերևում գրուածից (§ 36) տեսնւում է՝ ունեն Բ. գրքի Ը գլխի վերնագիրը։

Այն երեք օրինակը, որոնք ունէին Ը գլխի վերնագիրը, բայց չունէին սկզբի հատուածը՝ դրանով համեմատ են Էջմիածնի ՏԽ խմբերի Ձ-ներին. թէ այս երկու խմբից որին են պատկանում, այդ որոշւում է Գ. գրքի ցանկի վերջում գրած ծանօթութիւնից, թէ «Յերկուս օրինակս որք ունէին զցանկս գլխոց, ի կատարածիս կայ և գլուխ այսպիսի՝ Տաղք չափաւ յինք և ի Սահակ Բագրատունի»։ Կընշանակէ այս երեք օրինակից երկուսը Խ խմբին են պատկանում։ Եւ իսկապէս 1843-ի տպագրութեան մէջ բերուած բազմաթիւ ընթերցուածներով Վենետկի երկու օրինակ միանում են Էջմիածնի Խ խմբի Ձ-ների հետ։ Այս երկու օրինակից մէկը սակայն դարձեալ չկայ Վենետկի այժմեան հինգ Ձ-ների մէջ, քանի որ, ինչպէս վերևում գրածից (§ 36) տեսնւում է՝ նրանցից միայն № 1156 ունի այդ «Տաղք չափաւ...» յաւելուածը։

Այսպէս ուրեմն 1843-ի տպագրութեան ժամանակ բանեցրած վեց անթերի օրինակներից երեքը,—երկուսն Ա խմբի, մէկը՝ Խ խմբի,— չկան Վենետկի այժմեան հինգ Ձ-ների մէջ։ Դրանք են ՉԾԲ (=1303) և ՌՃԻ (=1671) թուականները կրող, և մէկն անյայտ թուականով, օրինակները, որ յիշւում են 1843-ի զեկուցումի մէջ. այժմեան հինգ Ձ-ներից ոչ մէկը չի կրում 1303 կամ 1671 թուական։ Այս պակասած օրինակներից 1671 թուականինը կարող է և Ա խմբի և Խ խմբի օրինակ լինել (որովհետև Խ խմբից էլ մի օրինակ չկայ այժմ). իսկ 1303 թուականինն անպայման Ա խմբի օրինակ է եղել և ոչ Խ խմբի, քանի որ այս վերջին խմբի մայրը՝ Լ Ձ-րն առաջ է եկել 1567 թուին։

Որովհետև դժուար է ենթադրել, որ Վենետկի Մխիթարեան Գրադարանից 1843 թուից դէսը երեք Ձ-եր դուրս եկած լինեն՝ հաւանական եմ համարում, որ այս պակասած երեք Ձ-ները նոյն Գրադարանի այժմեան «երեք զանազան Ձ-ների հետ համեմատուած և ուղղագրուած տպագրութիւններն» են եղել, որոնք համարուել են Ձ-եր օրինակի

հաւասար և գրչագիրների անտիպ ցուցակի մէջ դրուած են «ութ ամբողջական օրինակների» մէջ։ Դրանցից 1303 թուականի Զ-րի համար, մեր հ. նամակագիրն արդէն յայտնում է այդ հաւանականութիւնը։ Թէ ինչ Զ-ների բաղդատութիւններ են դրանք՝ յայտնի չէ ըստ մեր հ. նամակագրի։ ՉԾԲ (=1303) թուականի Զ-իր մեզ յայտնի չէ. իսկ ՌՃԻ (=1671) թուականը կրում են մեզ յայտնի Զ-ներից Կ² Զ-րը, որ Ա. խմբին է պատկանում, և Արմաշի վանքի № 185 Զ-րը. սրանցից մէկի վրայ կարող է եղած լինել Վենետիկի այս օրինակներից մէկի բաղդատութիւնը։ Այդ երեք բաղդատուած տպագիրները, ըստ Մեսրոպ եպիսկոպոս Տ.-Մովսիսեանի ցուցակի, ունին Մատենադարանի ցուցակում հետևեալ թուահամարները. 1) Գ. 36 Թ. Է. Ուղղագրեալ ընդ տպագրին ի ձեռն դպիր Գ. Յովհաննիսեան. 2) Ե. 39 Թ. Է. Ուղղագրեալ ի վերայ փոքր տպագրին Վենետկոյ, ըստ հին Զ-րի իրիք. 3) Ժ. 23 Թ. Է. Բաղդատութիւն ընդ տպագրին։

Վենետիկի այժմեան հինգ Զ-ներից երեքը միայն 1843-ի զեկուցումի մէջ յիշուած «վեց անթերի օրինակներից» են. դրանք են՝ № 869, որի գրութեան թուականն է ՌՃԼԲ—Գ (=1683—4 թ.), որ և յիշուած է նոյն զեկուցումի մէջ. № 200, որի գրութեան թուականն է ՌՃԹ (=1660 թ.), որ նոյնպէս յիշատակուած է նոյն զեկուցումի մէջ. և ապա № 1156, որի գրութեան թուականը յայտնի չէ. բայց դա այն երկու Զ-ներից մէկն է, որ Գ. գրքի ցանկի վերջում ունին «Տաղք չափաւ...»։ Կը նշանակէ 1843 թուի տպագրութեան ժամանակ ձեռի տակ ունեցել են այժմեան այս երեք Զ-ները և, ամենայն հաւանականութեամբ, այժմեան երեք ամբողջական «համեմատուած տպագիրները», որով և առաջացել է 1843-ի զեկուցումի մէջ յիշուած «վեց անթերի օրինակների» թիւը։ Յետագայում ձեռք են բերուած № 1530 Զ-րը, որ գրուած է ՌՃԺԳ=1664 թ. և չի յիշատակւում վերոյիշեալ զեկուցման մէջ, և № 1023 Զ-րը, որով և առաջացել է գրչագիրների այժմեան անտիպ ցուցակի մէջ յիշուած ութ թիւը։

38. Տեսնենք այժմեան հինգ Զ-ների որ խմբին պատկանելը։ 1843-ին եղած երեք Զ-ներից № 1156-ը, ինչպէս վերևում դրի, Խ խմբին է պատկանում. ԱԽ խմբերին են պատկանում, տեսանք, պակասած երեք օրինակները («համեմատուած տպագիրները»)։ Այս չորս օրինակի վրայից չի կարող եղած լինել 1843-ի բնագիրը, քանի որ վերջինս, ինչպէս մեր կատարած մանրամասն համեմատութիւնից երևում է՝ էջմիածնի Տ խմբի Զ-ների տեսակից է։ Կը նշանակէ՝ մնացած երկու Զ-ներից, №№ 869 և 200, մէկը նոյն թուին տպած բնագրի համար են բանեցրած (Վ). իսկ միւսից (վ) 1843-ի տպագրութեան մէջ միայն ընթերցուածներ են բերուած, չորս ուրիշ օրինակների ընթերցուածների հետ։ Արդ այդ ընթերցուածների մանրամասն ուսումնասիրութիւնից երևում է, որ իսկապէս երկու օրինակ, ինչպէս վերևում ասացինք, Ա խմբի հետ են, երկու ուրիշ օրինակ Խ խմբի հետ, իսկ մէկը միանում է էջմիածնի Տ խմբին, առանձնապէս opqrs Զ-ներին։ Համա. օրինակ՝ եր. 315, 10. 316, 2 (Խվ^{3}nopqrs մաշարացական, որի մէջ

վ^{3}-ից երկուսը Խ խմբից են, մէկը nopqrs Ձ-ների տեսակից), 327, 13. 328, 12. 330, 17. 331, 1, 12, 21. 338, 13. 342, 10. Եւն։ Կընշանակէ՝ այժմեան Ձ-ներից №№ 869 և 200 էջմիածնի Տ խմբի Ձ-ների տեսակին են պատկանում։

Այժմ տեսնենք, թէ այդ երկու Ձ-րից որը Վ է և որը վ, այսինքն որն է իբրև բնագիր գործածուած և որից ընթերցուածներ են միայն մէջ բերուած։ Ծանօթութիւնների մէջ առած վ-ն իր ընթերցուածներով առանձնապէս նոյնանում է էջմիածնի pqrs Ձ-ներին։ Համմտ. օր.՝ եր. 314,19 վprs ցիրքն. 320,10 վ^{2}klpqrs մայրաքաղաքայն, վ մայր քաղաքայն. 329,10 վpqrs ոչ ունելով (մինչդեռ միւս բոլոր օրինակները ունին՝ յոչ լինելոյն, յոչ լինելոյ, ոչ լինելով). 338,17 վqrs որոճանօք. 270,10 վpqrs կողմեանք. 259,4 վpqrs բացակողմեանքն եւն, եւն։ Այսպիսի խմբակցութիւնները ցոյց են տալիս, որ վ Ձ-րը էջմիածնի pqrs Ձ-ների փոքրիկ խմբին է պատկանում։ Միւս կողմից էջմիածնի այս Ձ-ները ոչ մի գրքի ցանկ չունին. իսկ Վենետկի №№ 869 և 200 Ձ-ներից № 869 ցանկեր ունի, իսկ № 200-ը չունի Գ. գրքի ցանկը (հաւանօրէն չպիտի ունենայ նաև միւս գրքերինը), որով № 200 Ձ-րը մօտենում է pqrs Ձ-ներին։ Ապա դարձեալ № 200 Ձ-րն իր բովանդակութեամբ ևս, Խորենացի և Եղիշէ, մօտենում է էջմիածնի qrs Ձ-ներին. որոնք պարունակում են՝ Խորենացի, Եղիշէ, Թոմայից հատուած Բարծումայի մասին (գ Փաւստոսից հատուածներ)։ Այս հիմունքները մեզ բերում են այն եզրակացութեան, որ Վենետկի № 200 Ձ-րից են բերուած ընթերցուածները 1843 թ. տպագրութեան մէջ, իսկ միւս Ձ-րը, № 869, ծառայել է իբրև առաջնորդ բնագրի համար, կամ մեր Վ տառով նշանակած օրինակը № 869-ն է։

Թէ ինչու իրենց ձեռի տակ ունեցած երեք Ձ-ներից ընտրել են № 869, որ 1683—4 թուին է գրուած, և ոչ № 200, որ աւելի հին է, գրուած լինելով 1660 թ., և ոչ № 1156-ը, որի վրայ կայ 1653 թուի յիշատակութիւն ստացողի,—այդ ես բացատրում եմ նրանով, որ № 1156-ը Խ խմբին պատկանելով և № 200-ը opqrs Ձ-ների կարգից լինելով՝ իրենց մէջ ունին բազմաթիւ չիք-եր, այսինքն բաց թողած բառեր և խօսքեր. մինչդեռ Վ=№ 869 Ձ-րը, աւելի մօտ լինելով էջմիածնի n Ձ-րին, աւելի ևս Տ խմբին պատկանող այն Ձ-րին, որից ծագում է հնագոյն l Ձ-րի 1567 թուին նորոգուած մասը՝ չունի այդքան չիք-եր, ուստի և աւելի ընտիր է համարուել։ Ընտրութեան համար գուցէ նշանակութիւն է ունեցել և յիշատակարանը, թէ տիեզերալոյս Վարդան վարդապետն «ետ զայս գ պատմագրաց օրինակն. լաւ և ընտիր սրբագրեաց գրով»։

Աւելորդ չի լինիլ, եթէ երկրորդեմ, որ ինչքան էլ ես Վ օրինակը № 869 Ձ-րն եմ համարում՝ բայց այս երկուսը, կարծում եմ, կատարելապէս չպիտի նոյնանան, որովհետև, ինչպէս վերևում (§ 3) դրի՝ ինձ թւում է, թէ 1843 տպագրի մէջ լռելեայն ուղղումներ կան ուրիշ Ձ-ներից։ Օրինակ՝ եր. 72, տ. 14 բնագրում ընդունուած «արտահալածել» ձևն ունին էջմ. Ա խմբի Ձ-ները. Խ խմբի Ձ-ներն ունին «արտալածել», իսկ Տ խմբերինները (nopqrs) ունին «արտահալածէր»։

Որովհետև Վենետկի Վ. օրինակը Տ խմբին է պատկանում՝ պէտք էր սպասել ուրեմն, որ բնագրի մէջ գրուած լինէր «արտահալածէր»․ բայց 1843-ի տպագրութիւնը բնագրում ունի Ա. խմբի ձևը «արտահալածել», իսկ ծանօթութեան մէջ ունի Խ և Տ խմբերի ձևերը՝ «երկու օր արտահալածել, երկու այլ՝ արտահալածէր»․ կը նշանակէ՝ այս բառի համար ընտրութիւն է արուած և իրենց սովորաբար գործածած Ջ-րի ընթերցուածի տեղ դրուած է Ա. խմբի բաղդատութիւնների ընթերցուածը։ Կարելի է բաւական թուով ուրիշ այսպիսի օրինակներ ևս բերել։ Թւում է, թէ այս ընտրութեանն է ակնարկած և 1848 թուի Բազմավէպի մէջ եր. 48. իբրև պատասխան Կարենեանցի 1847 թուին Կովկաս լրագրի մէջ տպուած կարծիքի Խորենացու բնագրի մասին. «իսկ այն գրքերը [այսինքն Խորենացի], որ ընտրութեամբ և բաղդատութեամբ տպուած են, և բաւական վկայեալ օրինակներէ, պէտք է պատկառելի ըլլան կարդացողներուն և Ջ-րի մը մէջ տարբերութիւն մը տեսածնուն պէս՝ չկասկածին, չտարակուսին, չհամարձակին սխալ կոչելու և սրբագրելու, ինչպէս Կովկաս լրագրին մէջ անցեալ տարի բանասէրին մէկը ըրեր էր»։— Ինչպէս էլ լինի՝ ես ամենայն հաւանականութեամբ № 869 Ջ-րը համարում եմ Վ, իսկ № 200-ը՝ վ։ Այս կարծիքս վերջնականօրէն պիտի հաստատէ ի հարկէ միայն այս Ջ-ների բաղդատութիւնը, որոնցից ես ոչ մի ընթերցուած չունիմ։—Գանք մնացած երկու Ջ-րին։

1843 թուից յետոյ ձեռք բերուած երկու Ջ-ներից ընթերցուածներ չունինք, այլ միայն համառօտ նկարագիր (տ. վերը § 36)։ Դրանք երկուսն էլ ունին Բ. գրքի Ը գլխի վերնագիրը, ուստի չեն կարող Ա խմբին պատկանել, այլ միայն Տ և Խ խմբերից մէկին։ Դրանցից մէկը, № 1530 Ջ-րն, իր բովանդակութեամբ (Խորենացի, Եղիշէ, Թովմայից հատուած) նոյնանում է Էջմիածնի Տ խմբին պատկանող ց Ջ-րի հետ. բացի այդ՝ այս վերջինը չունի ցանկեր։ Գ. գրքի ցանկը, (հաւանօրէն և միւս գրքերինը), չունի նաև Վենետկի Ջ-րը։ Այս երկու հիմունքով այդ № 1530 Ջ-րը, կարծում եմ, պատկանում է Տ խմբին և իր ընթերցուածներով պիտի միանայ Էջմիածնի ց Ջ-րի հետ։ Վենետկի միւս Ջ-րը սակայն, № 1023, պիտի պատկանի Խ խմբին. միակ ընթերցուածը, որ ունինք այդ Ջ-րից, է Ը գլխի վերնագիրը—«Երկրորդ թագաւորութեան լինել ի զաւակէ Արշակայ Մարաց թագաւորին»․ Էջմիածնի կ¹ Ջ-րը նոյն տեղում ունի թէ բնագրում և թէ ցանկում նոյնպէս «Արշ''կայ» ընթերցուածը, մինչդեռ միւս Ջ-ներն ունին Աժդահակայ կամ Աշդահակայ։ Վենետկի № 1023 Ջ-րն այդ ընթերցուածով նոյնանում է ուրեմն կ¹ Ջ-րի հետ, որ Լ-ից է ծագում։ Անշուշտ մի ընթերցուածը քիչ է եզրակացութիւն անելու համար. բայց կարծում եմ թէ ուրիշ ընթերցուածներ կըհաստատեն այս ենթադրութիւնը։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

39. Խորենացու Ջ-ների դասաւորութեան խնդրով առաջին անգամ զբաղուել է Ադոլֆ Բաումգարտները՝ իր վերևում (§ 16) յիշուած

աշխատութեան մէջ. Նա «հակադրում է Վէնետիկի լաւագոյն (1843) և Ամստերդամի հրատարակութիւնը։ Այս վերջինին դասակից է գնում Կարենեանցի երկրորդ օրինակը և Լայպցիգինը»։ Երկրորդ անգամ նոյն խնդրով զբաղուել է Միքան—Գ. Տ.-Մկրտչեանը (Հայկականք, Վաղարշապատ. 1894. եր. 38 հտն. եր. 69 հտն.)։ Նա Էջմիածնի 17 Զ-ները մի յօդուածի մէջ բաժանում է երկու դասի, երկրորդի մէջ դնելով 6 Զ-իր, իսկ առաջինի մէջ 11 Զ-իր, որ նա վերածում է երեք ստորաբաժանումների։ Յետոյ սակայն մի ուրիշ յօդուածի մէջ, նկատի ունենալով գրեթէ այն բոլոր Զ-ներն ու ընթերցուածները, որոնց մասին մենք վերևում յիշեցինք, և համոզուելով որ առաջին դասի ստորաբաժանումները առանձին առանձին խմբեր են միմեանցից շատ անջատ՝ այդ ստորաբաժանումներն անուանում է Ա. Բ. Գ. իսկ Բ. դասը Դ. խումբ։ Այդ խմբերի պատկերը հետևեալ ձևով է տալիս (նշանակելով մեր ընդունած տառերով).

Ա. խումբ. Ղm և Կ^1 (?).
Բ. խումբ. hgikz.
Գ. խումբ. nsropq.
Դ. խումբ. fcdabetԿ^{2}Լ.

Վէնետիկի 1843 թուի վեց օրինակները դնում է ԱԲԳ խմբերի մէջ, իսկ Եզեանի (մեր y) և Արղնի Զ-ների համար, տվի կազմութեան վրայ հիմնուելով, յայտնում է, թէ կարող են պատկանել ԱԲ խմբերին, բայց ոչ ԳԴ-ին։—

Երրորդ անգամ Խորենացու Զ-ների դասաւորութեամբ զբաղուել է Մ. Աբեղեանը (Հայ ժողովրդական Առասպելները Մ. Խորենացու Պատմութեան մէջ, Վաղարշապատ, 1891. եր. 259—266)։ Նա ձեռի տակ ունենալով Էջմիածնի 18 Զ-ները՝ բաժանում է երկու խմբի. Ա խումբ, որի մէջ մտնում են abcdef Զ-ները, և Տ խումբ, որի մէջ երկու ստորաբաժանում է դնում, մի կողմում ghi, միւս կողմում klmnopqrs։

Այս երկու բաժանումն էլ, հիմնուած լինելով որոշ ընթերցուածների և ոչ Զ-ների ամբողջական համեմատութիւնների վրայ՝ ունին միևնոյն պակասութիւնը, որի պատճառը l Զ-րն է, որի մի մասն nopqrs (Տ. Մկրտչեանի Գ խմբի) Զ-ների հետ է, իսկ միւս մասը՝ abcdef (Տ. Մկրտչեանի Դ խմբի) Զ-ների հետ։ Միւս կողմից՝ արդարև ghi Զ-ները մի երկրորդական փոքրիկ խումբ են կազմում իրենց ընթերցուածներով, բայց դրանք klm Զ-ներից անբաժան են, ծագած լինելով մի ընդհանուր մայր Զ-րից, l-ից։

Նշանակելով l Զ-րի հին մասը, որ Ա խմբի (Տ. Մկրտչեանի Դ խմբի) հետ է, Ղա ձևով, իսկ նոյն Զ-րի նորոգուած մասը, որ Տ խմբի (Տ. Մկրտչեանի Գ խմբի, nopqrs Զ-ների) հետ է, Ղտ ձևով ունենում ենք.

Ա խումբ. abcdeftԼվվԿ^{2}Ղա, ընդ ամենը 12 օր., որոնցից t Ամստ. տպագիրը, վվ Վէնետիկի բաղդատուած երկու տպագիրները, (որոնցից ընթերցուածներ կան 1843-ի տպագրութեան մէջ), Կ^2 Կարենեանցի ընթերցուածները, Ղա Էջմիածնի l Զ-րի հին մասը, վեցը՝ abcdef

Էջմիածնի, մէկը (Լ) Լայպցիգի Ձ-ները։ Իրենց հնութեան կարգով այս օրինակները դասաւորւում են այսպէս. Ղա (հաւանօրէն 14-րդ դարու, 1567-ին նորոգուած). Կ^2 (1671 թ.), e (1675 թ.), b (1674—76 թ.), d (1676 թ.), a (1687 թ.), c (1616-ից յետոյ և 1691-ից առաջ), t (1695-ին տպուած), Լ (1696 թ.). f Ձ-րի գրութեան ժամանակը յայտնի չէ, իսկ Վենետիկի բաղդատութիւնները եղել են մէկը 1303 թ. Ձ-րի վրայ, միւսը կարող է 1671 թ. Ձ-րի վրայ եղած լինել (տ. § 37)։

Տ խումբ. nopqrsՎվվw^1Ղտ, ընդ ամէնը 11 օր., որոնցից w^1 Թոմաս Վանանդեցու ընթերցուածները, Վ. Վենետիկի տպագիրը (հաւանօրէն № 869 Ձ-րը), վ (հաւանօրէն Վենետիկի № 200, որից ընթերցուածներ կան 1843-ի տպագրութեան մէջ), վ (Վենետիկի № 1530 Ձ-րը ենթադրութեամբ, տես § 38), Ղտ Էջմիածնի l Ձ-րի նորոգած մասը, իսկ nopqrs Էջմիածնի միւս Ձ-ները։ Իրենց հնութեան կարգով այս օրինակները դասաւորւում են այսպէս—Ղտ (1567 թ.), q (1641 թ.), վ № 200 (1660 թ.), վ № 1530 (1664 թ.), n (1672 թ.), Վ. № 869 (1683—4 թ.), p (1690 թ.), o (1699 թ.)։ Մնացածների գրութեան ժամանակն անյայտ է։

Մնացած օրինակները ghikmԿ^{1}yՀzvվվ թուով 12, ծագած լինելով Էջմիածնի l Ձ-րից՝ կորցնում են իրենց արժէքը։ Դրանք են՝ Էջմիածնի վեց Ձ-իր, ghikmԿ^1, Եղեանի y Ձ-իր, Աղթամարի Հ Ձ-իր, Պետերբուրգի z Ձ-իր, Վենետիկի օրինակներ՝ վ № 1156, վ № 1023 (ենթադրութեամբ), վ Վենետիկի բաղդատուած տպագիրներից մէկը։

Վերևի թուի վրայ պիտի աւելացնել նաև Էջմիածնի r Ձ-րը, որ, ինչպէս կը տեսնենք, ծագում է Էջմիածնի s Ձ-րից, ուստի նոյնպէս կորցնում է իր արժէքը։

Երկու մեծ խմբերի այս բաժանումն ամփոփելուց յետոյ՝ տեսնենք այժմ ստորաբաժանումներն Ա և Տ խմբերի մէջ, կամ Ձ-ների իրար հետ ունեցած յարաբերութիւնները։

40. Ա խմբի օրինակները՝ շատ ընթերցուածների նոյնութեամբ բաժանւում են երեք երկրորդական փոքրիկ խմբերի. մի ընդհանուր մայր Ձ-րից, որ նշանակենք Ա. տառով, մի կողմում ծագած են abcf Ձ-ները, միւս կողմում՝ Կ^{2}det. սրանց դիմաց Ղա Ձ-իրը մի ուրոյն տեղ է բռնում, չմիանալով առանձնապէս ոչ abcf Ձ-ներին, ոչ Կ^{2}det խմբակցութեան, այլ երբեմն մէկին մօտենալով, երբեմն միւսին։ Այս բաժանման համար իբրև մի յատկանիշ, դրսի Ձ-ների տեղը որոնելու համար, կարելի է առնել հետևեալը։ Առաջին գրքի Ի գլխի (Համեմատութիւն ծննդաբանութեան...) անունների շարքի մէջ abcf Ձ-ները Նորայր անունից յետոյ ունին «Վստամ. Կար» անունը, որ Կ^{2}det Ձ-ների մէջ Հայոց անունների շարքի մէջ չէ, այլ ընկել է Բաղդէացոց անունների շարքի մէջ «Վստասկար, Վատասկար, Ստասկար» ձևերից մէկով, Ղամպառիտէս անունից յետոյ, իսկ t օրինակի մէջ, որովհետև պակասում են Ղամպառիտէս և նախորդ երկու անունները, Սուսառիս անունից առաջ կամ Ամինտէս անունից յետոյ։ Վենետիկի 1843-ի տպագիրը ծանօթութիւն ունի. «Այսպէս [այսինքն Վստասկար] ամենայն օրինակք

Խորենացւոյն որ առ մեզ գտան. այլ Յովհ. կաթ. և Գր. Մագիստրոս յերկուս անուանս որոշեն՝ Վասամ և Կար» (ինչպէս են և մեր abcf-ի մէջ)։ Եթէ ճիշտ է որ Վենետկի օրինակները «Վասամ. Կար» ձևը չունեին, ապա պէտք է ընդունել, որ Ա խմբին պատկանող նրանց երկու օրինակները վվ մտնում են Կ²det խմբակցութեան մէջ (եթէ միայն ի հարկէ բաղդատողները առած լինեին այդ ընթերցուածը. որովհետև այս վվ օրինակները բաղդատուած տպագրիներ են)։ Լա Զ-րի համար չենք կարող վերոյիշեալ «Վասամ. Կար» յատկանիշը բերել, որովհետև Լ Զ-րի մէջ այդ հատուածը Լա չէ, այլ Լտ է, և իբր Տ խմբին պատկանող մաս ունի «Վասակար» ձևով Նորայր անունից յետոյ. բայց Լա-ի համար կարելի է բազմաթիւ ուրիշ ընթերցուածներ առնել, որոնք առանձնայատուկ են միայն Խ խմբի Զ-ների հին մասին, այսինքն Լա-ին. ինչպէս օրինակ՝ եր. 71, տ. 5 «Նոյն պատմագիր ասէ», փոխանակ «ասէ նոյն պատմագիր», եր. 72,2 զուարճանայցէ ևն. (ուրիշ ընթերցուածներ տես § 9)։—Շփոթութիւնից զերծ պահելու համար, այստեղ խսկ պէտք է նկատենք, որ եր. 61, տ. 1 ծանօթութեան մէջ Կ¹ Զ-րի համար «Սասակար» գրուածը վրիպակ է. Կ¹ չունի այդ ընթերցուածը, այլ իբրև Լ Զ-րից ծագող՝ ՏԽ Զ-ների պէս «Վասասկար» ունի հայոց անունների մէջ։

Առաջին խմբակցութեան abcf Զ-ներից ab Զ-ներն իրար շատ մօտ են. բացի դրանց բովանդակութեան նմանութիւնից (տես §§ 10 և 11) և բազմաթիւ ընթերցուածների նոյնութիւնից՝ Ա գրքի վերևում յիշուած (Ի) գլխի անունների շարքի նկարագիրն էլ նոյն է (տես այս Հրատարակութեան եր. 58). կարելի է մատնացոյց անել և այսպիսի ընդհանուր սխալներ, ինչպէս՝ դժուարամուտ սամանս (տ. եր. 54, տ. 3)։ Դրանք այնքան մօտիկ են, որ նոյն-իսկ կարելի է կարծել, որ ժամանակով նորը՝ a Զ-րը ժամանակով հնից՝ b-ից օրինակուած լինի։ Բայց քանի որ այս կարծիքը հաստատող բացայայտ հիմք չկայ՝ ես այս երկու Զ-երը կից և զոյգ եմ դնում։

Այս ab Զ-ներին մօտենում է ընթերցուածներով c Զ-իրը, որ վերոյիշեալ (Ի) գլխի անունների շարքից կարգով արտագրած ունի նախ ab-ի առաջին խորանը, յետոյ երկրորդը ևն (տես եր. 58). դրանից է առաջանում անունների այն խառնաշփոթութիւնը, որ կայ c-ի մէջ։ Դրանից զատ՝ ընթերցուածների նոյնութեան հետ կարելի է ցոյց տալ և այսպիսի ընդհանուր սխալներ, ինչպէս՝ զողկիանու (տ. եր. 46, տ. 11ծ.)։ Այս նկատի ունենալով՝ կարելի էր կարծել, թէ c Զ-րը b-ից կամ a-ից, կամ դրանց հետ միասին մի ընդհանուր x մայր Զ-րից ծագած լինի։ Բայց միւս կողմից այս նոտրագիր c Զ-րին մօտենում է առանձին ընթերցուածներով նոտրագիր f Զ-րը. երկուսի մէջ էլ Գ. գրքի վերջին գլուխը (Ողբը) պակաս է. և որովհետև վերոյիշեալ անունների շարքի գրութիւնն այս երկու Զ-ների մէջ այնպիսի է, որ ոչ c Զ-րն f-ից կարող էր ծագել և ոչ f-ը c-ից՝ ուստի պէտք է ընդունել, որ դրանք ծագում են մի այնպիսի x Զ-րից, որ ab Զ-ների հետ մի ընդհանուր մայր ունի։

Երկրորդ խմբակցութեան Կ²detվվ Զ-ներից էջմիածնի de Զ-ները

նոյնանում են բազմաթիւ ընթերցուածներով (տես օրինակ՝ եր. 79, տ. 15, միայն Հ, փոխանակ հանանէ). վերոյիշեալ (Ի) գլխի անունների նկարագիրն եւս դրանց մէջ բոլորովին նոյն է (տես եր. 59)։ Կարեւոր նկարագիրն նեանցի նկարագրած Կ^2 Զ-րի անունների նկարագրի մասին ոչինչ չգիտենք, բայց ընթերցուածներով այս Զ-րը այնքան նոյնանում է de Զ-ների հետ, որ նոյն-իսկ կարելի է, թէ վերջիններս Կ^2-ից ծագած լինին։ Ամստերդամի տպագիրը, t, անունների նկարագրով մօտենում է de-ին, բայց բոլորովին նոյն չէ. ընթերցուածներով եւս այս t օրինակը թէպէտ յաճախ միանում է Կ^{2}de Զ-ների հետ, բայց շատ անգամ և անջատւում է նրանցից. այսպէս օրինակ՝ եր. 11, տ. 12 «երգարանաց բանաւորաց» բառերի փոխանակ abcf Զ-ներն ունին՝ «արագ արանց բանաւորաց», Կ^{2}de ունին՝ «առանց բանաւորաց», իսկ t օրինակն ունի ուղիղ ձեւով «երգարանաց բանաւորաց»։ Թոմա Վանանդեցին կարող չէ ուղղած լինել ուրիշ Զ-րի վրայ, քանի որ նա, ինչպէս յայտնել է, միայն մի Զ-իր է ունեցել ձեռքի տակ։ Այսպիսի տարբերութիւններով կամ ընթերցուածների նոյնութեամբ Կ^{2}det օրինակները, որոնք մի ընդհանուր մայր ունին, բաժանւում են երկու տեսակի. մի կողմում են Կ^{2}de Զ-ները, միւս կողմում է t։ Այս չորս Զ-րի ընդհանուր մայրն է Լամբրոնացու օրինակը, որից 1671 թ. Մովսէս վարդապետն արտագրել է տալիս Կ^2. բայց, ինչպէս երեւում է, նա ուրիշ օրինակներ եւս արտագրել տուած պիտի լինի. «զոր ընտրեալ մեր՝ օրինակել տուաք ուրումն գրչի, և սրբագրեցաք ըստ կարի մերում, սակս առ ուրեք ուրեք տարածանելոյ»։ Նրա մահից յետոյ, նրա «պաշտելի» Մեսրովբը գնում է նրա Կ^2 Զ-րը և «յետ սուղ ինչ ժամանակաց», 1694 թուին, նուիրում է Թոմայ առաքելոյ վանքին։ Այս պատմութիւնից պէտք է կարծել, թէ Կ^2 Զ-րը օրինակել տուող Մովսէսը Գողթնում է ապրել։ Հաւանական է կարծել, որ Թոմա Վանանդեցին իր հայրենիքում գտնուած Զ-ներից մէկը կամ դրանցից օրինակուած Զ-իր է տանում Ամստերդամ 1695 թ. տպագրելու համար, և դրանից է առաջանում Կ^2 և t Զ-ների ազգակցութիւնը և այս երկուսի մէջ եղած նոյն ոտանաւորը (տ. §§ 1 և 7)։

Այս երկրորդ խմբակցութեան են պատկանում և վվ օրինակները, Վենետիկի երկու բաղդատած տպագիրները. բայց քանի որ բոլոր ընթերցուածները չեն բերուած 1843-ի տպագրութեան մէջ՝ չենք կարող ասել, թէ արդեօք դրանք Կ^{2}def Զ-ների՞ հետ են, թէ՞ t Զ-րի հետ։ Դրանցից մէկի համար միայն կարելի է ասել, որ t-ի հետ լինի. եր. 64, տ. 3, cf Զ-ներն ունին՝ «և թէ ուստի»․ Տ𝔚abde ունին՝ «և եթուստ»․ Վենետիկի 1881 թուի տպագիրն (x) ուղղած է՝ «և եթ ուստոյ»։ Այս վերջին ընթերցուածը՝ մեզ յայտնի օրինակներից ունի միայն t-ն (որ նոյն է և w)։ Սրա հետ նոյնանում է ուրեմն և մի վ, որի վրայ ուղղուած է x-ը։

Լ=Լայպցիգի Զ-իրը միայն Ա. Բաումգարտների վկայութիւնից գիտենք, որ t օրինակի տեսակից, այսինքն մեր Ա. խմբի մէջ է. բայց թէ ո՛ր Զ-ներին առանձնապէս մօտ է՝ չգիտենք։ Լվվ պայմանական ձեւով, ուստի և փակագծի մէջ, t օրինակի հետ դնելով՝ մենք ստանում ենք Ա. խմբի Զ-ների ազգակցութեան հետեւեալ յարաբերութիւնը.



41. Տ խմբի օրինակներից Վենետկի տպագիրը (Վ) էջմիածնի lտnopqrs Ձ-ների դիմաց ունի մի առանձնութիւն։ Ա. գրքի (Ի) գլխի անունների գրութեան մէջ ես Վ և lտnopqrs տարբերւում են միմեանցից։ Վ-ի մէջ այս անունները գրուած են երեք սիւնակներով չորս մասի բաժանած, չորս անգամ տպագրուած լինելով «Երրայեցւոց», «Բադ-դէացւոց» և «Հայոց» վերնագիրները. իսկ անունների ծանօթութիւն-ները գրուած են երեք շարքերի տակին՝ աստղանիշերով ցոյց տալով, թէ որ անուան են վերաբերում։ Այս նկարագիրը բոլորովին տարբեր է lտnopqrs Ձ-ների նկարագրից (տես եր. 61)։ Դրսի Ձ-ների՝ Վ օրինակին թէ lտnopqrs խմբակցութեան պատկանելը որոշելու համար, կարելի է է միջի այլոց առնել հետևեալը. Վ-ն Բ գրքի Ը գլխի վերնագրի հետ միասին ունի նոյն գլխի սկզբում «Երկրորդ թագաւորութեան լինէր ի զաւակէ Աժդահակայ Մարաց եղելոյ թագաւորի», որը չկայ lտnopqrs Ձ-ների մէջ։ Այս պակասը չեմ կարծում թէ տպագրողներն ուղղած լինին Վ-ի մէջ (տ. § 37)։ Կան lտnopqrs Ձ-ների մէջ ուրիշ պակասներ ևս, որ Վ-ի մէջ չեն պակասում, այլ կան ըստ Ա. խմբի, ինչպէս եր. 17, տ. 13. եր. 27,10. 113,14 (n լուսանցքում աւելացրած ըստ Ա.-ի). 121,16։ Սրանց հետ միասին բազմաթիւ ընթերցուածներով էլ Վ օրինակը անջատուելով lտnopqrs Ձ-ներից միանում է Ա. խմբին։ Համա. եր. 10,1. 17,17. 21,4. 30,16. 30,19 (n ուղղած ըստ Ա.-ի). 31,4. 45,3. 46,14. 48,18. 53,3. 55,20. 101,5. 118,11. 122,14. 123,1. 308,7. 316,2. 319,7. 321,8 (ԱՎ գտեալ, lտnopqrs եկեալ, փխ գտեալ)։ Կան ի հարկէ նաև որոշ թուով ընթերցուածներ, որոնց մէջ Վ օրինակը միւս բոլորից տարբերւում է. դրանք մի Ձ-րի առանձնայատկութիւններ են։ Այսպէս օրինակ՝ Ա. խումբն ունի եր 309,6. «ի Թուղաս (կամ Թուլաս) կղզի ովկիանու», Վ օրինակն ունի «ի Թուղիս կղզի ովկիանու», իսկ lտnopqrs ունին «ի Թուղաս (կամ Թուլաս, Թողաս) կղզի ուղկիանու»։ (Սրանցից սակայն n Ձ-րը նախապէս ունեցած է ուղկիանու, յետոյ ուղղած է ո վկիանու, իսկ o Ձ-րն ունի ո կիանու)։ Դարձեալ՝ Վ օրի-նակը եր. 327,8 ունի՝ «գրելով ի վերայ վիմի Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ւ», մինչդեռ միւս բոլորը չունին՝ «Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ւ», (m Ձ-րն այստեղ վրիպակով է Վ-ի հետ գրուած. տես վերջը վրիպակները)։

էջմիածնի Զ-ներից opqrs բաժանւում են Լտռ Զ-ներից բազմա-
թիւ ընթերցուածներով և մանաւանդ չիքերով, որ Լտռ-ի մէջ չեն
պակասում. Հմմտ. opqrs-ի չիքերի համար, օրինակ՝ եր. 10,8. 12,15.
27,14. 29,9. 33,6. 56,17. 104,5. 119,6. 121,19. 128,1. 301,9. 308,20.
315,4. 317,3 ևլն. իսկ համանման ընթերցուածների համար՝ եր. 22,12.
34,16. 35,15. 37,2. ևլն, ևլն։ Այսպիսի դէպքերում Լտռ Զ-ները սովո-
րաբար միանում են Վ-ին. օրինակ՝ եր. 315,20 Վլտռ օրինակներն
ունին «որ այն օր», մինչդեռ opqrs ունին ըստ Ա. խմբի՝ «ուրանօր»։
Տես նաև 31,15. 39,8. 51,7. 104,5. 104,15 ևլն։ Առանձնապէս պէտք է
զգուշանալ, որ բաղդատութեան համար չառնուի Լա, որ Ա. խմբի հետ
է, այլ Լտ. թէ չէ՝ այն մասերում, որոնց մէջ l Զ-րն Ա. խմբին է
պատկանում, կան բազմաթիւ չիքեր, որոնց մէջ nopqrs Զ-ները միա-
նում են, ինչպէս՝ եր. 232,7. 258,9. 281,2. 293,5. 332,19. բազմաթիւ
չիքեր էլ կան, որոնց մէջ n Զ-րն ուղղած է լուսանցքում, ըստ Ю խմբի.
ինչպէս՝ 113,14 (ուր Վլա կայ, Աnopqrs չիք. n աւելացրած լուսանց.).
213,16. 76,17. 85,10. 88,11. 88,15. 138,4. 218,12. 218,18. 232,18.
246,21. 162,5 ևլն։ Կան ընթերցուածներ ևս, որոնց մէջ nopqrs
միանում են, յաճախ n Զ-րն ուղղած ըստ Ю-ի. ինչպէս՝ 77,2. 74,9.
74,10. 178,14. 215,2 ևլն։ Այս բոլոր դէպքերի մէջ Լտ Զ-րի համար
ոչինչ չենք կարող ասել, որովհետև այս մասերում Լա է. բայց
Վ օրինակը տարբերւում է nopqrs Զ-ներից և միանում է դարձեալ
Ա. խմբի հետ։ Անշուշտ Վ-ի տպագրողները չեն ուղղել այդ ամենը, այլ
յաճախ իբրև առաջնորդ ծառայող Զ-րի մէջ այդպէս է եղել։

Վերևում գրածից պարզ երևում է, որ Վլտռ օրինակների դիմաց
opqrs Զ-ները մի առանձին խումբ են կազմում։ Բայց ի՞նչ յարաբերու-
թիւն կայ Վլտռ օրինակների մէջ։ Սրանցից Լտռ Զ-ները իրենց ընթեր-
ցուածներով մի կողմից իրար մօտ են (Հմմտ. բացի վերևում գրածներից,
56,17. 64,1. 308,11. 258,4. 39,3. 80,10. 88,1. 51,7), միւս կողմից
opqrs Զ-ներին. ուստի պէտք է կարծել, որ դրանք ծագում են մի x
Զ-րից՝ մի կողմում Լտռ, միւս կողմում՝ opqrs. բայց վերջինները ոչ
անմիջապէս, որովհետև բազմաթիւ չիքերը, որ opqrs-ի մէջ կան՝ ծագում
են անշուշտ մի երկրորդական մայր Զ-րից։ Այպ տեսանք, որ Վ օրինակն
անջատւում է այս եօթը Զ-ներից. պէտք է ընդունել ուրեմն, որ այս
Տ խմբի մի ընդհանուր մայր Զ-րից ծագում են մի կողմում Վ օրինակը,
միւս կողմում Լտռopqrs Զ-ների ընդհանուր մայրը, հետևեալ պատկերով.



Այս է բնական բացատրութիւնը. բայց կայ մի հանգամանք։ Վ օրինակի (Ձ-իր № 869) մայրը, ինչպէս մեր ունեցած մի կտոր յիշատակարանից երեւում է՝ տուել է Բաղիշեցի յայտնի Վարդան վարդապետը, այն էլ սրբագրած. «Որ դայս Գ պատմագրաց օրինակն ետ. լաւ և ընտիր սրբագրեաց գրով» (տ. § 36)։ Արդ այս Վարդան վարդապետի սեպհական օրինակն է Էջմիածնի n Ձ-րը (տ. § 18), որ իսկապէս, ինչպէս տեսանք՝ շատ տեղ սրբագրուած է լուսանցքում կամ վրան ըստ Ա. խմբի Ձ-ների, երբեմն էլ ըստ Լ-ի. ինչքան էլ թուականները յարմարւում են (n գրուած է 1672 թուին Բաղէշում, իսկ Վ 1683—4 թ. դարձեալ Բաղէշում), բայց կարելի չէ ասել, որ Վ օրինակը n Ձ-րից է ծագում. այս հնարաւոր է ընդունել միայն այն ժամանակ, երբ № 869 Ձ-րի համեմատութիւնը ցոյց կըտայ, որ այդ Ձ-րը միանում է Լտn-ին, և տարբերութիւնները միայն տպագրութեան ժամանակ կատարած ուղղումներ են Ա. խմբի ընթերցուածներով։ Հակառակ դէպքում պէտք է ընդունել, որ Վարդան վարդապետը ոչ թէ իր n Ձ-րն է տուել արտագրելու, այլ սրա ազգակից կամ սրանից արտագրած մի ուրիշ Ձ-իր, որ աւելի շատ է ուղղուած եղել Ա.-ի վրայ, քան n Ձ-իրը։

Անցնենք opqrs փոքրիկ խմբին։ Այս Ձ-ներից pqrs բազմաթիւ ընթերցուածներով և չիքերով միանում են ընդդէմ o Ձ-րի. (համտ. եր. 12,16. 15,15. 28,17. 36,8. 36,13. 37,7. 91,4. 108,11. 122,5. 298,13. 295,8. 300,11. 304,3 ևլն)։ Այս pqrs Ձ-ների հետ են և Վենետիկի մի վ Ձ-րը, ինչպէս տեսանք վերեւում (§ 38), և w^1, այսինքն Թոմաս Վանանդեցու բաղդատութիւնները։ Համտ. վpqrs-ի համար բացի վերեւում դրածներից նաև եր. 117,20. 121,16. 123,12. 345,14. 104,18. 39,1. 65,1 ևլն. իսկ w^1pqrs-ի համար՝ եր. 46,9. 64,1. 103,15. 344,9. 345,3. 78,5 ևլն։ Այս երկու փոքրիկ խմբերը, o և pqrs արտաքուստ զանազանւում են նրանով, որ o Ձ-րն ունի երեք գրքի ցանկերը գրքերի սկիզբներում, մինչդեռ pqrs ոչ մի գրքի ցանկ չունեն. կընշանակէ o Ձ-րը ծագում է մի x ձեռագրից որ ցանկերն ունի. իսկ pqrs (դրանց հետ նաև վw^1), որ ցանկեր չունեն՝ չեն կարող ծագել անմիջապէս այդ x Ձ-րից, այլ սրանից ծագող մի Ձ-րից, որ ցանկերը չի արտագրած։

Այս վերջին չորս pqrs Ձ-ներից pq Ձ-ներն երբեմն իրենց ընթերցուածներով մօտենում են o Ձ-րին, երբեմն նոյն-իսկ n Ձ-րին։ Արտաքուստ ևս այս երկու pq Ձ-ները տարբերում են rs Ձ-ներից, իսկապէս s-ից, որովհետև, ինչպէս կըտեսնենք՝ r Ձ-իրը ծագում է s-ից. Ա. գրքի (Ի) գլխի անուններ գրութեամբ pq Ձ-ները կատարելապէս նման են թէ միմեանց և թէ no Ձ-ներին. իսկ rs Ձ-ները, նման լինելով իրարու՝ մի փոքր տարբերւում են pq-ից. այն է՝ մինչ rs-ի մէջ «Սա օգնական Պրիամու» ևլն ծանօթութիւնը «Գոռակ—Սկայորդի» սիւնակի տակին ունին գրած, pq Ձ-ները, no-ի հետ, նոյն ծանօթութիւնը նոյն սիւնակի կողքին ունին գրած առանձին սիւնակի մէջ։ Բացի այդ՝ «Արայ—Վստասկար» սիւնակի վերջին անունը՝ Վստասկար՝ չկայ rs-ի մէջ, մինչդեռ pq Ձ-ները նոյնն ունին։ p Ձ-րի գրիչն իրեն անուանում է «սրբագրող». «յոյժ աշխատ եղաք ի սրբագրելն, զի յոյժ էր սխալ»։

Սխալներ ասելով պէտք է հասկանալ տառասխալները, որ և միայն կարող է ուղղած լինել p-ի գրիչը. qs Ձ-ների գրիչներն ևս հարկաւ ուղղած են տառասխալները, բայց և այնպէս այս երկու Ձ-րի մէջ մնում է դեռ մի այսպիսի ընդհանուր սխալ—«ի բռքուէ», փոխանակ «ի փոքուէ» (եր. 65, տ. 7), որ անշուշտ ծագում է այն Ձ-րից, որից ծագում են pqs: Կըլինին այս Ձ-ների մէջ այսպիսի ուրիշ ընդհանուր սխալներ ևս. բայց մենք համեմատութեան ժամանակ այսպիսի սխալները, որ բնորոշ են Ձ-ների խմբակցութիւնները որոշելու համար, ընդհանրապէս չենք առած: Սակայն այս երեք pqs Ձ-ներից ոչ մէկը այնպէս չի մօտենում միւսին, որ իրար աւելի մօտիկ ազգակից դրուին. qs (qrs) խմբակցութեան չափ կարելի է ասել կան նաև ps (prs) և pq խմբակցութիւններ. ուստի, քանի որ pq Ձ-ների դիմաց միայն մի s Ձ-րն է մնում, պէտք է այս s Ձ-րը հաւասար դնել pq Ձ-ներին և նրա տարբերութիւնները pq-ից՝ համարել եզակի ձեռագրական տարբերութիւններ:

Վերևում ասացի՝ r Ձ-իրը ծագում է s Ձ-րից: Այս երկու անթուական Ձ-ները, որոնք բովանդակութեամբ նոյն են (Խորենացի, Եղիշէ, Թոմայից հատուած) բազմաթիւ մանր ընթերցուածներով բոլորովին նոյնանում են. բայց կան և հիմունքներ, որոնք ցոյց են տալիս, որ r Ձ-իրն արտագրած է անմիջապէս s-ից: Այսպէս օրինակ՝ եր. 53,17 «և անթիւ բազմութիւն մարդկան» բառերը s-ի մէջ անընթեռնլի են. r-ի մէջ նոյն բառերը չկան, բայց տեղ է թողած: Եր. 149,4 s-ի մէջ «զօրինակ զայս» բառերից՝ «զայս», տողի վերջում տեղ չլինելով, գրած է ներքևի վերնագրի վերջում, մի գծով բաժանած սրանից. r Ձ-րի գրիչը չհասկանալով s-ի գրչի արածը, «զայս» բառն անտեղի տարած է վերնագրից ներքև և հեռու անկախ գրած: Եր. 163,18 s-ի մէջ քերած է «զմարդ» բառի վերջի դ տառը. իսկ r Ձ-րն ունի «զմար» կէս:

42. Ներքևում դնում ենք բոլոր օրինակների յարաբերութիւնը մի պատկերով*), քանի որ այսպիսի պատկերներով աւելի պարզ են հասկացւում յարաբերութիւնները, քան բացատրութիւններով:

Այս խմբակցութիւնների համար սակայն պէտք է նկատել. 1) Անյայտ (x) Ձ-ներից կարող են ուրիշ անյայտ Ձ-ներ ևս ծագած լինել և ապա նոր սրանցից՝ յայտնիները. 2) Փակագծում առնուած օրինակների երկրորդական խմբակցութիւնները որոշուած են Ձ-ների բովանդակութեամբ և մի-երկու ընթերցուածի հիման վրայ. դրանցից մի վ և Լ օրինակները դրուած են պայմանական ձևով. 3) Վ օրինակի տեղը կարող է Նոր Ձ-րի հետ լինել, եթէ 1843-ի տպագրողներն իրենք ուղղած լինեին Ա. խմբի վրայ՝ և ոչ թէ Բաղիշեցի Վարդան վարդապետը. 4) Այս կամ այն Ձ-րը որոշ տեղերում հեռանում է իր խմբակցութիւնից, միանալով ուրիշ խմբակցութեան հետ. այդ կամ պատահական պիտի համարել, կամ այն պատճառով, որ Ձ-ները երբեմն սրբագրւում են ուրիշ Ձ-ների վրայ, կամ թէ արտագրւում են մասամբ մի օրինա-

*) Տես եր. ԼԹ.

Ա. եւ Տ խմբերի Մայր օրինակ.



կից, մասամբ մի ուրիշից. այսպիսի դէպքեր կան մեզ յայտնի Ձ-ների մէջ. նոյնը պէտք է ենթադրել և անյայտ (x) Ձ-ների համար, որոնք իբրև մայր են ծառայել:

43. Թէ ինչպէս է եղել, որ Խորենացու Ձ-ները երկու այսպիսի որոշ խմբերի են բաժանուել՝ այդ դժուար է որոշել: Հաւանական է կարծել, որ այդ բաժանումն եղել է ոչ թէ գիտակցական սրբագրութեան կամ ուղղման պատճառով, այլ բնական ճանապարհով: Ժամանակի ընթացքում հետզհետէ ամեն օրինակութիւն մի նոր փոփոխութիւն պիտի մտցնէր բնագրի մէջ, և առաջ պիտի գային զանազան խմբակցութիւններ, մէկը միւսից տարբեր օրինակներ: Ենթադրենք որ եղել է ժամանակ, որ այդ կերպարանափոխուած և իրարուց հեռացած օրինակներից մնացած լինէին միայն երկուսը, և նոր օրինակութիւններն այս երկուսից կատարուէին. այն ժամանակ բնականաբար երկու էլ խումբ պիտի կազմուէր: Ապագայում կարող են գուցէ ուրիշ Ձ-ներ էլ երևան գալ, որոնք ոչ Ա. և ոչ Տ խմբին պատկանելիս լինեն, այլ մի նոր երրորդ խումբ կազմեն: Սակայն մեզ յայտնի Ձ-ները վերևի ենթադրութեանն են տանում:

Թէ երբ են առաջ եկել այս երկու մեծ խմբերը՝ այդ այժմ դժուար է որոշել հին Ձ-ներ չլինելու պատճառով: Հնագոյն Ձ-րի,

էջմ. № 249, հին մասը (Նա), Ա խմբին է պատկանում. Համբրոնացու օրինակն ևս Ա խմբին է պատկանած եղել. բայց հարկաւ կարող են դրանց հետ միաժամանակ նաև Տ խմբի օրինակներ եղած լինել։ Յովհաննէս Կաթողիկոսի ձեռին եղած օրինակը իր մէջ ունի թէ Ա և թէ Տ խմբերի ընթերցուածներ. Ա խմբի Զ-ներից մօտենում է աւելի f Զ-րին, իսկ Տ խմբի Զ-ներից՝ Վ օրինակին։ Բերենք մի քանի ընթերցուածներ։

1) Խոր. եր. 33,4. Ա. Յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ (f զԱրմանեակ) ի Բաբելոն. Յովհ. (Մոսկվա. 1853) եր. 11. Արամանեկաւ որդւով իւրով, զոր ծնաւն ի Բաբիլոն.— Տ ...զԱրմենակ (Նօ զԱրամենակ) ի Բաբելոնի։
2) Խոր. եր. 35,14. Ա հրոսակի. Յովհ. եր. 11. հրոսակօք.— Տ հոսակի։
3) Խոր. եր. 36,20. Ա յերկիր հարստի. Յովհ. յերկիր հարստէր.— Տ յերկիր անկանի։
4) Խոր. եր. 62,11. Միայն f Զ-րն ունի՝ Սուր. Առ սովաւ Յեսու որդի Նաւեայ։ Յովհ. եր. 14. Սուր. (Առ սովաւ Յեսու ժառանգեցուցանէր Իսրայէլի զերկիրն Աւետեաց)։
5) Խոր. եր. 62,21. abcf Վստամ. Կար. Յովհ. եր. 14. Վստամ. Կար. —Տ Վստասկար.
6) Խոր. 63,19—20 Ա ի պատերազմի ընդ Շամիրամայ... յիր և ի բան՝ զԱնուշաւանն Սօսանուէր. Յովհ. եր. 13. ի պատերազմի ընդ Շամիրամայ... յիր և ի բանս (ընթերցուած յիր և ի բան) զԱնուշաւանն Սօսանուէր.— Տ ընդ Շամիրամայ ի պատերազմի... յիր և ի բան զԱնուշաւանն որ Սօս անուանիւր։
7) Խոր. եր. 71,13. Ա հնազանդեալ նուաճեաց. Յովհ. եր. 15 հնազանդեալ նուաճէր։—Վռ նուաճեալ հնազանդէր. (opqrs չիք հնազանդէր)։
8) Խոր. 71,14. abde ի հինն, cf ի հին. Յովհ. 15 ի հինն. — Տ ի հինսն։
9) Խոր. 73,5. Ա մարդկութեանս. Յովհ. եր. 15. մարդկութեանս.— Տ մարդկութեան։
10) Խոր. եր. 86,9. Ա Վահունիք. Յովհ. 15. Վահունիք.—Տ Վահնունիք։
11) Խոր. եր. 34,21. Տ հեղեալ. Յովհ. 11. հեղեալ.—Ա հեղեղեալ։
12) Խոր. եր. 38,3. Տ որդւոյ իւրոյ. Յովհ. եր. 11. որդւոյ իւրոյ.— Ա որդւոյ իւրում։
13) Խոր. եր. 41,2. Տ գնաց զմիւս լերամբն արևելեան հիւսիսոյ. Յովհ. 12. գնացեալ զլերամբն արևելեայ հիւսիսոյ.—Ա գնաց զմիւս կողմամբ արևելից հիւսիսոյ։
14) Խոր. եր. 41,19. Տ Գեղամի. Յովհ. եր. 12. Գեղամի.—Ա Գեղամէ։
15) Խոր. եր. 65,14. Տ ձև և շուք. Յովհ. եր. 14. ձև և շուք.— Տ շուք և ձև։
16) Խոր. եր. 73,9. Տ զնուաստսն. Յովհ. եր 77. զնուաստագոյնսն.— Ա զաւրուկսն։

17) Խոր. 85,14. Տ զԿիւրոս. Ցովհ. եր. 77,15. զԿիւրոս.—Ա. Կիւրոս։
18) Խոր. 86,12. Տ Վան. Ցովհ. 14. Վան.—Ա. Վահան։
19) Խոր. եր. 112,16. Տ Մուրացան. Ցովհ. եր. 17. Մուրացան.—Ա. Մուրացեան։
20) Խոր. եր. 118,9. Տ շինութեան և խաղաղութեան. Ցովհ. եր. 17. շինողութեան և խաղաղութեան.—Ա. խաղաղութեան և շինութեան։
21) Խոր. եր. 309,6. միայն Վ ի Թուղիս. Ցովհ. եր. 31. ի Թուլիս.—Ա. ի Թուղաս (Թուլաս)։
22) Խոր. եր. 306,18. Տ Շահակ. Ցովհ. 31. Շահակ.—Ա. Սահակ։

Բերած ընթերցուածներից երեւում է, որ Յովհաննէս Կաթողիկոսի ձեռին եղած օրինակը ոչ Ա. խմբին է պատկանում և ոչ Տ խմբին. այլ դա հաւասարապաս է Ա. և Տ խմբերի ընդհանուր մայր օրինակին։

Որովհետև խմբերի բաժանման ժամանակը և ծագման եղանակը բացատրուած չէ՝ ուստի առաւելութիւն տալ մի կամ միւս խմբին դժուար է, և ես չեմ ուզում այդ մասին կանգ առնել այստեղ. միայն այսքանը ասեմ, որ ամեն դէպքում պէտք է առանձին քննութիւն անել, քանի որ, յայտնի խմբակցութեանց պատճառով, կան ձևեր, որ մի խմբի մէջ աւելի հարազատ են պահուած, ուրիշ ձևեր էլ ուրիշ խմբի մէջ։ Դա արդէն բնագիրը վերականգնելուն է վերաբերում, որ իմ նպատակից դուրս է։

ՈՒՐԻՇ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ.

44. Բացի վերևում յիշուած օրինակներից՝ կան զանազան տեղերում Խորենացու Պատմութեան ուրիշ Ձ-ներ էլ։ Ներքևում կըդնենք մեզ յայտնիները։

1. Էնայի համալսարանի գրադարանի Ձ-իր. «բաղկացած է 180 քառածալ թերթերից. չունի յիշատակարան. նոյն-իսկ առաջին երեսից սկսում է բովանդակութեան ցանկը. վերջից պակասում է Գ. գրքի ԿԸ գլուխը (Ողբը) ամբողջովին և ԿԷ գլխի վերջին հատուածը։ Վերջին երեսի վերջին տողն է «... զի զայլ տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդականս»։ Ձ-րը գրուած է բոլորագիր տառերով և սև թանաքով մագաղաթի վրայ. գլուխներն ու սկզբի տառերը գրուած են կարմիր թանաքով։ Ձ-իրը լաւ է պահպանուած, բացի առաջի 2-3 թերթերից, որոնք կեղտոտ են, սակայն կարդացւում են. ունի տախտակից շինած կաշեպատ կարմիր կազմ։ Ձ-րը յիշատակարան չունենալով՝ յայտնի չէ ով և երբ է օրինակել. սակայն բազմաթիւ տառասխալները ցոյց են տալիս, որ անհմուտ ձեռքի գործ է։ Ձ-րը Էնայի համալսարանին նուիրել է պրոֆ. Կօխ, որ ինչպէս երևում է՝ ձեռք է բերել Հայաստանում ճանապարհորդելիս»։ (Իս. Յարութիւնեան, Հայոց Գիրը, Թիֆլիս, 1892. եր. 10. 185)։ Միակ ընթերցուածը որ ունինք Ձ-րից (բերած նոյն տեղում Յարութիւնեանից) է հետևեալ հատուածը. եր. 325 տ. 12. «Վասն որոյ մատուցեալ ումն առ արքայն հարէլ անուն կոչեցեալ»։ Այս

ընթերցուածը սակայն այնպէս բնորոշ է, որ միայն սրանով իմացւում է, որ այս Ձ-րը պատկանում է Ա խմբին. որովհետև ՏԽ խմբերն ունեն «Վասն որոյ մատուցեալ առ արքայն [Խ առ արքայ] քահանայի ուրումն [Վl որումն] հարել [Խ հարեղ] անուն կոչեցեալ»։ Գ. գրքի վերջին գլխի պակասով մօտենում է Էջմիածնի cf Ձ-ներին։

2. Տիւբինգենի համալսարանի գրադարանի Ձ-ր. № 67. «առանց Ա գրքի վերնագրի. Մնացածում էապէս նոյնը ինչ որ Վենետիկի 1865 թուի. (նոյն և 1843 թ.) Խորենացին»։ Այս Ձ-րը Աւետիք Էնֆիաճեանցից, հարիւրից աւելի Ձ-ների հետ, գնած է համալսարանը։ (*System.—Alph. Hauptkatalog der Königl. Universitätsbibl. zu Tübingen. XIII. Verzeichniss der armen. Handschr. von Franz N. Finck und L. Gjandschezian, Tübingen 1907. № 67*)։

3. Մի Ձ-ր Գիւտ քահանայ Աղանեանի մօտ. (տես Միաբան Գ. Տ.-Մկրտչ. Հայկականք եր. 92)։ Ես անձամբ Տ. Գիւտից լսած եմ, որ իր մօտ է եղել «Լաբրոնացու օրինակը», երևի Կ² Ձ-րը, որ բաղդատել է Թիֆլիսում Կարենեանցը։ Նա այդ Ձ-րը տուել է Թիֆլիսում Մկք. Թամամշեանին. վերջինիս մահից յետոյ Ձ-րն անցել է նրա ժառանգներին, որոնցից և չի կարողացել յետ ստանալ Տ. Գիւտը։

4. Մի Ձ-ր Սեբաստիոյ Ս. Նշան վանքի. Եւդոկիոյ (Թոխաթ) առաջնորդ Շաւարշ ծ. վարդապետ Սահակեանը, որ 1911 դեկտեմբ. եկած էր Էջմիածին՝ անձամբ յայտնեց ինձ այդ մասին. խոստացաւ մի քանի տեղեկութիւններ և ընթերցուածներ ուղարկել, բայց յետոյ նամակով յայտնեց, թէ առ ժամանակ անկարող է եղել այդ անելու։

5. Մի Ձ-ր Արղնի Բարձրահայեաց ս. Աստուածածնի վանքի մատենադ. № 211. Մովսէս Խորենացի, Ստ. Տարօնեցի, Արիստակէս Լաստիվերտցի, Եւսեբի Պատմութիւն եկեղեցական. Տասն դպրութիւնք. «Գրեալ գոմոց վանք, ի թվին Մ.Ծ.Է», եթէ միայն այս թիւը տպագրական վրիպակ չէ՝ փոխանակ ՌՄԾԷ» (Սրուանձտեան Թորոս Աղբար.—Միաբան Գ. Տ.-Մկրտչ. Հայկականք եր. 51)։ Այս Ձ-րն իր բովանդակութեամբ նոյնանում է Եղեանի y Ձ-րին (տ. § 32), և որովհետև վերջինս Խ խմբին է պատկանում՝ հաւանօրէն Արղնի Ձ-րն էլ նոյն խմբից պիտի լինի։

6. Վիեննայի Մխիթարեան Գրադարանի № 368. Բաղդատութիւն Մովսէս Խորենացւոյ Պատմութեան Վենետիկի 1752 թուի հրատարակութեան վրայ. «Այս տարբերութիւնք շատ սակաւաթիւ և աննշան են և նշանակուած չէ թէ ինչ Ձ-րի ընթերցմունքն են անոնք»։ Համեմատութիւնն եղած է 19-րդ դարում (Տաշեան Ցուցակ հայ ձեռ. Մատենադ. Մխիթ. եր. 820)։

Յաջորդ Ձ-ների մասին տեղեկութիւններն արտագրուած են տ. Մեսրոպ եպիսկոպոս Տ.-Մովսիսեանի ցուցակից, որին և շնորհակալութիւնս եմ յայտնում սրա համար.

7. Երուսաղէմի Ձեռ. № 341. Թուղթ, բոլորագիր, երկսիւն. գրել է տուել Ազարիա կաթողիկոս. գրիչ՝ Մարտիրոս, ՌԽԸ—1599 թ. ի քաղաքն Բաղէշ. ի բռնակալութեան Սուլթան Մամմադ խոնդքարին և ի մերում ամիրութեանն Շարաւ խանին։ Բովանդակութիւն—Խորե-

նացու պատմութիւն, Բուզանդարան պատմութիւնք, Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերցւոյ։

8. Երուսաղէմի Ձեռ. № 308. ՌԿԵ—1616 Թ. Թուղթ, բոլորգիր. գրիչ՝ Գրիգոր, Ստացող Կարապետ վարդապետ Մոկացի, մականուամբ Կալօենց։ Բովանդակութիւն—ա) Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւն («Ցաղագս մերոյս յիսկզբան յայսմ բանիցս»...). բ) Ցաղագս զարմից Ս. Գրիգորի և տեսիլ Ս. Ներսիսի և բովանդակ պատմութիւն ազգին Մամիկոնէից մինչև ցսուրբն Վարդան և մինչև յելս արիական ազգին հռովմայեցւոց, որ իբրև զարեգակն և լոյս և փրկութիւն ծագեցան տիեզերաց. գ) Ցառաջարան տեսլեան Ս. Սահակայ Պարթևի հայոց Կաթողիկոսի,—վերջում՝ Վասն Ս. Մեսրոպայ որ Մաշթոց կոչեցաւ. դ) Պատմութիւն Ս. Վարդանայ... յԵղիշայէ սրբոյ, Դաւթա երիցու հայցեալ։

9. Երուսաղէմի Ձեռ. № 310. բովանդակութիւնը միանգամայն նման նոյն տեղի Նախորդ № 308 Ձ-րին։ Թուղթ, նոտրագիր, ստացող Ակնցի Ցակոբ դպիր որդի մհտի Վահրադի և Շաղաստայի. ՌՂԸ—1649 Թ. ի Կ. Պոլիս ընդ հովանեաւ Ս. Սարգսի զօրավարի. գրիչ Ցարութիւն դպիր։

10. Երուսաղէմի Ձեռ. № 1075. գրուած 1665 Թուին. Թուղթ, բոլորգիր. գրիչ Մկրտիչ երէց, յԵւդոկիա ի վայելումն Ղրիմեցի Մարտիրոս վարդապետի (պատրիարքի Երուսաղէմի)։

11. Երուսաղէմի Ձեռ. № 740. նոտրագիր։

12. Արմաշի № 185. գրուած ՌՃԻ—1671 Թ. Թուղթ, 341 Թերթ. 19×12,5 հրդմ. բոլորգիր, գրիչ Սոփիա. ստացող Արիստակէս վարդապետ ի Շօօթ գիւղաքաղաք. բովանդակութիւն—Մովսէս Խորենացի և Եղիշէ։ Այս Ձ-րի ընդարձակ յիշատակարանի մէջ, որ մի երկու ընթերցուածների հետ շնորհակալութեամբ ստացայ Շաւարշ ծ. վարդապետից, գրչի անուն չկայ յիշուած. ստացողն է Արիստակէս վարդ. Ղլաթեցի, գրութեան Թուականը՝ ՌՃԻ, իսկ տեղը՝ «ի յերկիրս Երնջակայ ի գիւղաքաղաքն Շօօթ կոչեցեալ ընդ հովանեաւ Ս. Ա՛ծածին և Ս. Լուսաւորչին։— Բ. գրքի Ը գլխի վերնագիրն ու սկիզբն ունի այսպէս. «Երկրորդ Թագաւորութեան լինել ի զաւակէ Աժդահակայ Մարաց Թագաւորին։ Բայց յետ կարգելոյ զտուն Թագաւորին որ այժմ Մուրացանդ կոչեն, քանզի ոչ առեն նահապետի ազգի Մուրացան տէր, այլ Մոզացւոցն տէր»։ Այս ընթերցուածից երևում է, որ Արմաշի դպրեվանքի այս Ձ-րը պատկանում է ոչ Թէ Ա. խմբին, այլ ՏԽ խմբերից մէկին. և որովհետև, ինչպէս մեր հ. Նամակագիրը հաղորդում է, այդ Ձ-րն առանձին ցանկ չունի՝ ուստի մտնում է pqrs խմբակցութեան մէջ։ Եւ վերջապէս Մոզացւոցն տէր ընթերցուածով փոխ. Մարացւոցն տէր ձևի, դա նոյնանում է r Ձ-րի հետ, որը, ինչպէս վերևում տեսանք, ծագում է s Ձ-րից։ Սխալուած չենք լինիլ որ ասենք, Թէ Արմաշի այս 1671 Թ. գրած Ձ-րը նոյնպէս ծագած լինի Էջմիածնի անԹուական s Ձ-րից։

13. Արմաշի Ձեռ. № 13. գրուած ՌՃԻԷ—1678 Թ. Թուղթ, 385 Թերթ. 14,7×11,5. նոտրագիր, գրիչներ՝ Գրիգոր Երևանցի և Ներսէս.

բովանդակութիւն— ա) Անուանք քաղաքացն հնդկաց և պարսից. բ) Խորենացու Պատմութիւն. գ) Տեսիլ Ս. Գրիգորի... մեկնութիւն տեսլեան. դ) տեսիլ Իսահակայ. ե) Աշխարհագիր Մովսէս Խորենացւոյ։

14 Տաթևի Ձեռ. № 70. թուղթ, կաշեկազմ, թերթեր 353. մեծ. 16,3×11. նոտրագիր. բովանդակութիւն—Խորենացու Պատմութիւն և Բարդուղիմէոս եպիսկոպոսի տրամաբանութիւն։

15. Սիս, Լանգլուա, հ. 114. թուղթ, մեծագիր, Պատմութիւն Խորենացւոյ։

16. Պարիզ. Suppl. 123. թուղթ, 318 թերթ. 27,6×16,6. միասին շղագիր, արտագրութիւն La-Croix-ի։

17. Վենետկի Մխիթարեան գրադ. արտագրութիւն ի Վենետիկ։

18. Առ Աղանուր, հ. 31. Մովսէս Խորենացի և պատմագիրք. գրիչ Ներսէս աբեղայ, յերկիրն Խիզան, ի սուրբ ուխտն Բաղիձոր, ընդ հով. Սուրբ Աստուածածնի, ի յիշատակ Կարապետ վարդապետին, որ տայ զայն յիշատակ ի դուռն Վարագայ Ս. Նշանին, 1594 թուին։

19. Շերմազանեան ց. հ. 97. ՌՃէ—1658 թ. թուղթ, բոլորգիր, Նոր Ջուղայ, ի թագաւորութեան Շահաբաս Փոքրին և հայրապետ. Յակոբ Կթ"ղի, յառաջնորդութեան Տէր Դաւթի։

20. Որտեղ լինելն անյայտ։ ՌՃԲ—1653 թ. Ստացող Ղայդարցի, ի հայրապետութեան տ"ռն Փիլիպպոսի, ի յերկիրս Արարատեան։

21 Որտեղ լինելն անյայտ։ Գրեցաւ Պատմագիրքս այս ի թուին Հայոց ՌՃԶ (=1657) ի մայրաքաղաքն Եդեսիոյ, որ արդ Ուրհա ասեն, ի դուռն Բարձրահայեաց Սուրբ Աստուածածնի, ձեռամբ Սարգսի Եդեսացւոյ։

22. Էջմիածնի Ձ-իր, № 4351 (նոր կարգ.). մեծ. 21×15 հրդմտ. կաշեկազմ, թուղթ, նոտրագիր, միասին։ Բովանդակութիւն— Խորենացու Պատմութիւն (ցանկեր չունի) և Եղիշէ։ Վերջինս վերջից պակաս, վերջանում է կանանց նկարագրի հետևեալ խօսքերով. «և յամենայն մատեանս յիշեցին զանուանս նոցա»։ Գրիչ, գրութեան տեղ և թիւ չկայ։ Պահպանակի առաջին երեսին «Վարպետ Գալուստն եւ Սիմէօն վրդպտս առաջնորդ սրբազան առաքելոյն Թադէոսի ի յիշատակ ծնողացն թուին ՌՄԾԷ (=1808) ապրիլի ԺԴ որ ի Թարուէ քաղաքի»։ Երկրորդ երեսին. «Ի վայելումն տ"ն Յովհաննէսի սրբազան կ"թղկոսի յա"մ Աղուանից, յոր ի ս"բ աթոռն Գանձասու»։ Այս Ձ-ը բազմաթիւ ուրիշ Ձ-ների հետ ուղարկել է Էջմիածնի մատենադարանին Թաւրիզից առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը։ Բաղդատութիւնը ցոյց է տալիս, որ պատկանում է s խմբին և առանձնապէս նոյնանում է pq Ձ-ների հետ։

45. Մի քանի խօսք ևս մեր աշխատութեան մասին։

ա. Խորենացու այս հրատարակութեանը Ձեռագիրների համեմատութեամբ՝ Մ. Աբեղեանը և Ս. Յարութիւնեանը ձեռնարկել էին 1901 թուականին և արդէն բաւական թուով Ձեռագիրներ բաղդատել էին Վ տպագրի հետ, երբ 1903 թուին Էջմիածնում մի "խորհրդակցութեան մէջ որոշուեց հրատարակել «Պատմագիրք Հայոց» շարքը, որի

մէջ պիտի մնայր և Խորենացու Հայոց Պատմութիւնը։ Մենք յանձն առանք պատրաստել Խորենացին այդ հրատարակութեան համար։ Մեր աշխատանքն այսպիսով տևեց 12 տարի ընդհատումներով։ Այս հանգամանքը, ինչպէս և յետագայում աշխատակից ընկերներիս իրարուց հեռու, ուրիշ տեղերում ապրելը, բնականաբար իր հետ կապուած ունէր շատ անյարմարութիւններ, որոնք գործին ի վնաս պիտի լինէին։

Սկզբում մենք համեմատութիւնների մէջ առել էինք բոլոր ուղղագրական տարբերութիւնները. բայց 1903 թուականի վերևում յիշուած խորհրդակցութեան մէջ ձայների մեծամասնութեամբ որոշուեց, տեղ և ժամանակ վաստակելու համար, համեմատութեան մէջ չառնել ընդհանրապէս ուղղագրական ընթերցուածներ ու Ն յօդի տարբերութիւնները և, հակառակ մեր ցանկութեան, այս հրատարակութիւնն անել ոչ թէ հին, այլ վերջին դարերի ուղղագրութեամբ, այսինքն՝ օ փոխանակ աւ, իւ փոխանակ եւ, աէի փոխանակ աեի ևլն։ Մենք համակերպելով այդ որոշմանը՝ այլ ևս համեմատութիւնների մէջ չառանք ընդհանրապէս ուղղագրական ընթերցուածները և պարզ կերպով աղաւաղուած բառերը. բայց Ն յօդի տարբերութիւնները պահեցինք։

Չուզենալով կրկնութիւն անել՝ ուղղագրութեան և պատուի համար հրաւիրում ենք դիմել սոյն «Պատմագիրք Հայոց» հրատարակութեան «Ագաթանգեղոսի» յառաջաբանը (եր. ԾԴ հտ. § 40), որից սակայն կարևոր է այստեղ բերել հետևեալը. «Ձեռագիրների շատ անգամ միմեանց հակասական կետադրութիւնը հարկաւ հնարաւոր չէր պահել։ Տպագրի մէջ եղածն էլ շատ տեղ ըստ իմաստի փոփոխել ենք, հազիւ երբեմն ծանօթութիւնների մէջ նշանակելով մեր մտցրած փոփոխութիւնը։ Իսկ մեր տպագրի միացած կետադրութեան սովորական մասը, մանաւորապէս ստորակէտերի և բութերի գործածութիւնը, նաև տողադարձն ամբողջապէս թողնուած էր Ստ. Մալխասեանցի հայեցողութեանը», որ վարել է այս աշխատանքի տպագրութեան հսկողութիւնն ու տպագրական սրբագրութիւնը։

բ. Համառօտագրութիւնները նոյնն են պահուած, ինչ որ Ագաթանգեղոսի մէջ, որից կարևոր ենք համարում մէջ բերել հետևեալները։ «Ընթերցուածների պակասները նշանակել ենք չիք-երով. փխ. (=փոխանակ) համառօտագրութիւնը գործ է ածուած, երբ մի ընթերցուածի տեղ այլ Ձ-րը մի ուրիշ ընթերցուած ունի... Երբ տողի մէջ միևնոյն բառը մի քանի անգամ է պատահում՝ անորոշութիւնից խուսափելու համար չիք-ի առաջ կլոր փակագծերի մէջ գրուած է և հետևեալ բառը, օրինակ՝ «չիք և (աստց)»... Տեղ-տեղ հանդիպող (*) աստղանշով ընթերցուածը ցոյց է տալիս, որ այդ ընթերցուածը տպագրական վրիպակ չպէտք է համարել իր տարօրինակ գրչութեան պատճառով... Գիծը (—) նշանակում է մինչև, յատկապէս գործածուած չիք-երի մէջ... Անկիւնաւոր փակագիծը [ ] գործ է ածուած՝ այլ և այլ, մեծ մասամբ նոյն խմբի Ձ-ների նման ասացուածի մէջ այս կամ այն Ձ-րին յատուկ տարբերութիւնները նշանակելու համար, առանց կրկնելու մի քանի անգամ ամբողջ ասացուածը. օրինակ՝ «Տէր և զմեզ այժմ [Հgl յայժմ, k այժմսիկ] աշխատեցուցող [Հgrs աշխատեցուցօղդ,

ք աշխատեցող դու]» ասուացածի մէջ Տ և Խ խմբերի Ձ-ները յար և նման ընթերցուած ունին, բացի անկիւնաւոր փակագծերով նշանակուած բառերից։ Բառերի յետեւառաջութիւնը՝ ընթերցուածների մէջ առաջ է բերուած առանց որևէ նշանի, օր. բնագիր՝ «Մանուաղ ժառանգէ», ընթերցուած՝ «ժառանգէ Մանուաղ»։ Մնացած համառօտութիւններն ըստ ինքեան հասկանալի են։

գ. Բաղդատութիւնը կատարուել է հետեւեալ ձևով։ Թիֆլիսի 1881 թուականի տպագրութիւնը (Վ), որ արտատպած է Վենետկի 1865 թ. տպագրից, իբրև իր ժամանակին մատչելի տարածուած օրինակ, ընտրել ենք համեմատութեան համար։ Կարդացուել է ոչ թէ տպագիրը, այլ միշտ Ձ-ները, որովհետև Ձ-ը կարդացւում է ոչ այնքան բառերի ընդհանուր պատկերով, որքան տառերը քաղելով, ուստի սխալները, կարծում ենք, այսպէս համեմատաբար պակաս կըլինին՝ քան եթէ տպագիրը կարդացուէր, երբ Ձ-րին հետեւողը աչքից շատ բան կը փախցնէր, կարծելով թէ այնպէս է գրուած, ինչպէս լսում է։ Երբեմն միայն դժուար կտորները վերծանելու համար դիմել ենք տպագրի օգնութեանը։

Ընթերցուածները գրի առնելու և տպագրին հետեւելու գործն ամբողջապէս Մ. Աբեղեանինն է, որ յաճախ ընթերցուածը գրի առնելուց առաջ մտիկ է տուել Ձ-րի գրութեանը։ Ձ-ները կարդացել է մեծ մասամբ Ս. Յարութիւնեանը, յատկապէս էջմիածնի abcdefglmq տասը Ձ-ներն ամբողջապէս և h Ձ-րն մինչև սոյն հրատարակութեան եր. 130, տ. 10. (Բ. գիրք, ԺԶ գլ.), որտեղից սկսած այս Ձ-րը, ինչպէս և i Ձ-րը, նկատելով որ g-ից են ծագում՝ համեմատուած են g-ի հետ, փոխէ-փոխ կարդալով՝ Մ. Աբեղեանը g Ձ-րը, իսկ Ս. Յարութիւնեանը՝ hi Ձ-ները։ Նոյն ձևով բաղդատուած է m Ձ-րը l Ձ-րի հետ, որից ծագում է m. Աբեղեանը հետեւել է l Ձ-րին, իսկ Յարութիւնեանը՝ m-ին։ Այս him Ձ-ների ծագումը որոշ լինելով՝ դրանցից առնուած են միայն կարևոր համարուած մի քանի ընթերցուածներ, իսկ յօդերի և մի քանի յետևառաջութիւնների տարբերութիւնները չեն առնուած. այնպէս որ g Ձ-րի հետ միշտ hi Ձ-րն ևս պէտք է հասկանալ, իսկ l Ձ-րի հետ՝ m Ձ-րը։

Էջմիածնի noprs Ձ-ներին հետեւել են էջմիածնի Գ. Ճեմարանի աւարտած պարոններ — n-ին Յակոբ Խայըխեան, o-ին Յարութիւն Պօղոսեան, p-ին Արմենակ Բարսեղեան, r-ին մասամբ Բիւզանդ Թորոսեան և մասամբ Մեսրոպ Բարսեղեան. իսկ s-ին մասամբ Միհրան Թերլեմեզեան, մասամբ Յարութիւն Պետրոսեան և մասամբ նաև Մեսրոպ Բարսեղեան։ Այս Ձ-ները, ինչպէս և q Ձ-րը, միասին և միաժամանակ են բաղդատուած Վ-ի հետ. փոխէ-փոխ կարդացուել են երբեմն մէկ և երբեմն միւս Ձ-ները. և որովհետև դրանք մի խմբի են պատկանում, ուստի եթէ կարդացողի աչքից վրիպում էր որևէ ընթերցուած՝ միւս Ձ-ներին հետևողներից մէկն ու մէկը նկատում էր տարբերութիւնը և ապա միւսներն առանձնապէս դիտում էին կարդացած հատուածը։

դ. Եղեանի y Ձ-րի բաղդատութիւնն սկսած է գործի տպագրու-

թեան հետ միասին, որովհետև այդ ժամանակ ձեռք բերուեցաւ այդ Ձ-րը։ Առաջին չորս մամուլը, մինչև երես 64, համեմատել է Մ. Աբեղեանը մենակ՝ տպագրական թերթերի հետ. այնուհետև նկատելով որ y Ձ-րը ծագում է l Ձ-րից՝ վերջինիս հետ և շարունակել է բաղդատութիւնը, խնդրելով Խաչիկ ծ. վարդապետ Դադեանին օգնել իրեն։ Բաղդատուած է մինչև Ա. գրքի վերջը և Գ. գիրքն ամբողջ. իսկ Բ. գրքի բաղդատութիւն չի եղել, որովհետև այդ Ձ-րի մայրը յայտնի էր և բաղդատուած մասերի մէջ կարևոր ընթերցուածներ չեն երևացել։ Բաղդատելիս Մ. Աբեղեանը հետևել է l Ձ-րին, միաժամանակ և տպագիր Վ-ին, կրկին անգամ ստուգելու համար l Ձ-րը, որ Խ խմբի մայրն է. իսկ Խաչիկ ծ. վարդապետը կարդացել է y Ձ-րը։

Գանք այժմ տպագիրներին։

Սրանցից tw հրատարակութիւնները մեր գործի տպագրութեան սկզբում միայն ձեռք բերուած լինելով՝ դրանց համեմատութիւնը չի կատարուած միակերպ։ Առաջին երկու մամուլը (32 եր.) բաղդատել է Մ. Աբեղեանը սոյն հրատարակութեան սրբագրական թերթերի հետ. Այդտեղից մինչև Բ. գրքի Թ գլուխը, եր. 118, բաղդատուած են Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի ձեռով Վ-ի հետ. ապա նկատելով որ tw-ն պատկանում են Ա խմբին, իսկ w¹-ն Տ խմբին՝ այս Թ գլխից սկսած մինչև Բ. գրքի վերջը բաղդատութիւնն արել են d Ձ-րի հետ, հետևելով Մ. Աբեղեանը Ձ-րին, իսկ Ս. Յարութիւնեանը տպածին։ Գ. գրքից սկսած մինչև վերջը բաղդատութիւնն արել է դարձեալ միայն Մ. Աբեղեանը սրբագրական թերթերի վրայ։ Այս tw-ից, սակաւ բացառութեամբ, առնուած են ծանօթութիւնների մէջ միայն առանձին ընթերցուածներ, յատկապէս այնպիսինները, որ չեն տալիս ԱՏ խմբերի Ձ-ները։ Ծանօթութիւնների մէջ ի հարկէ բաւական կը լինէր նշանակել միայն t. բայց որովհետև համեմատութիւնն երբեմն t-ի հետ է եղած, երբեմն w-ի հետ, երբեմն երկուսի հետ ևս, և որովհետև w-ն երբեմն w¹-ի վրայ սրբագրուած է՝ ուստի ծանօթութիւնների մէջ մերթ tw է նշանակուած, մերթ միայն t կամ w. այս վերջին դէպքերում, եթէ w-ն t-ից տարբերուող ընթերցուած չունի ծանօթութիւնների մէջ, t-ի հետ և w պէտք է հասկանալ, ինչպէս և w-ի հետ t։ Այս tw-ի առանձնայատուկ ձևը, անորոշ դերբայի իլ վերջով ընթերցուածները չեն առնուած։

Վենետիկի տպագիրներից x (1881 թ. տպ.) յատկապէս պահուած է եղել տպագրական թերթերի հետ բաղդատելու համար, որպէսզի բնագրի մէջ վրիպակներ չմնան։ Այս համեմատութիւնն արել է միայն Մ. Աբեղեանը և առել է միայն սակաւաթիւ ընթերցուածներ, յատկապէս այնպիսինները, որ չեն եղել միւս տպագիրներից և Ձ-ներից։ Այս տպագրի ընթերցուածներն ըստ ինքեան էլ սակաւաթիւ են եղել, որովհետև այս x-ը միևնոյն Վ-ն է, միայն տեղ-տեղ ուղղած Ա խմբի մի ձեռագրով. այդ ուղղումները մեծ մասամբ արդէն կան Վենետիկի 1843 թ. տպագրի ծանօթութիւնների մէջ։

Անցնենք մեր աշխատանքի ուրիշ հանգամանքներին։

դ. Ձեռագիրների ու տպագիրների բազմաթիւ տարբեր ընթեր-

ցուածները, ինչպէս և տպագրուած ընթերցուածները, կարելի չէր առանց համախմբելու շարել ծանօթութիւնների մէջ. այդպիսով գրքի ծաւալը շատ կրստուարանար և մէկ էլ գիրքը գործածողը, հարկաւոր դէպքում, ինքը պիտի անէր նոյնը՝ Զ-ների խմբակցութիւնները հասկանալու համար։ Ուստի նման ընթերցուածները ի մի են համախմբուած և փոխանակ նոյն ընթերցուածն ունեցող բոլոր Զ-ներն առանձին տառերով նշանակելու՝ նշանակուած են խմբերի տառերով Ա, Տ և Խ, գործածելով անկիւնաւոր փակագիծը, ինչպէս է Ագաթ. հրատ. մէջ, խմբից անջատուող, երբեմն և խմբին պատկանող Զ-ների տարբերութիւնը ցոյց տալու համար։ Ծանօթութիւնների մէջ բնականաբար դրուած են բնագրի մէջ ընդունուած ընթերցուածներից տարբեր ընթերցուածները. բայց երբեմն կարևոր է համարուած դնել նաև բոլոր Զ-ների պատկերը։ Խ խմբի Զ-ներից կարելի էր, ի հարկէ, յիշատակել միայն Լ Զ-ը, որից ծագում են միւսները, և այսպէս վարուել ենք գրեթէ միշտ hïmy Զ-ների համար. բայց միւս նոյն խմբին պատկանող Զ-ների տարբերութիւնները մէջ են բերուած. և այս արուած է ի նկատի ունենալով նախ՝ այն, որ այդ Զ-ները սրբագրուած կարող են լինել մի ուրիշ Զ-րի վրայ, ինչպէս որ է ց Զ-ը յաճախ, և ապա՝ որ այդ Զ-ների տուած ընթերցուածները կարող են Լ-ի մէջ եղած լինել, բայց բաղդատութեան ժամանակ աչքից փախած լինել։ Աւելորդ կը համարուէր գուցէ այսպիսի խմբակցութիւնները՝ Հl, Կ^{1}l, Վ^{2}l, kl, gl և ն. որոնց մէջ բաւական կլինէր յիշատակել միայն մայր Զ-ը՝ Լ։ Բայց այդպէս գրուած են ընթերցուածները երկու հիմունքով. մէկ՝ այդ Զ-ների յարաբերութիւնը ծանօթութիւնները գործածողին պարզ անելու համար, մէկ էլ նրա համար, որ Հ, Կ^1, Վ^2 Զ-ների ո՛ր խմբակցութեան պատկանելը խմբակցութիւնները կատարելուց յետոյ միայն կատարելապէս պարզուեց մեզ. սկզբում Կ^1 Զ-ը (քանի որ Կարենեանցը բոլոր ընթերցուածները չի տուել, ինչպէս և Վենետկի տպագրութեան մէջ կարևոր ընթերցուածներն են միայն դրուած) նոյն-իսկ Տ խմբի մէջ էինք կարծում. և այս պատճառով այս Զ-ը դրուած է երբեմն Տ-ի հետ անկիւնաւոր փակագծերում, որը յետոյ փոխել չուզեցինք, որովհետև այսպիսի աշխատանքի մէջ ամեն նոր փոփոխութիւն և արտագրութիւն նորանոր վրիպակներ է պատճառում։ Ցամենայն դէպս, կարծում ենք, մայր Զ-ր Լ-ի հետ յիշատակուած Զ-ները գործին ոչ թէ վնասում են, այլ օգուտ տալիս, քանի որ դրանցով մի անգամ էլ ճշտւում է Լ-ի ընթերցուածների ուղիղ առնուած լինելը. իսկ Լ-ը Խորենացու ամենից հին Զ-րն է։ Նոյնը պիտի ասել և ր Զ-րի համար, որի ծագումը s-ից խմբակցութիւնները կազմելուց առաջ պարզ չէր մեզ համար։

Համախմբման ժամանակ առանձին ուշադրութիւն է դարձուած Էջմիածնի Զ-ներին և Վ-ին, որոնք և կազմում են այս հրատարակութեան հիմքը. միւս հրատարակութիւնները և տպագրուած ընթերցուածները ընդհանրապէս երկրորդական նշանակութիւն ունին, և կարելի էր մեծ մասամբ նոյն-իսկ չյիշատակել ծանօթութիւնների մէջ. որովհետև Վենետկի 1843 թ. հրատարակութեան ծանօթութիւնների մէջ, ինչպէս և Կարենեանցի Բաղդատութիւնների և ho^1-ի մէջ, գրեթէ

չկայ կարեւոր ընթերցուած, որ Էջմիածնի Զ-ները տուած չլինեն։ Եւ այս հասկանալի է թէ ինչու. Վենետիկի ծանօթութիւնների մէջ գրուած երկու Զ-ները, Կ^2 և է Էջմիածնի Ա. խմբի Զ-ների հետ են։ Վենետիկի մի Զ-րը և ա^1 Էջմիածնի Տ խմբի հետ են, իսկ միւսները ծագում են Էջմիածնի Ղ Զ-րից։ Այս պատճառով կարելի էր նոյն-իսկ մէջը չառնել Վենետիկի Զ-ների և է տպագրի ընթերցուածները. բայց բերուած են՝ դրանց խմբակցութիւնները պարզելու համար։

Առաջին գրքի ընթերցուածները համախմբել են Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան միասին. ապա Ս. Յարութիւնեանն աւելացրել է Կ^{1}Կ^{2}ՀԿ և Վենետիկի Զ-ների ընթերցուածները. երկրորդ անգամ Մ. Աբեղեանը ճշտել է Էջմիածնի Զ-ների (բացի Կ-ից) ընթերցուածները բաղդատութեան հիմնական տեքստի մէջ նշանակուածի հետ և արտագրել է։ Երկրորդ գրքի ընթերցուածների համախմբումներն արել Ս. Յարութիւնեանը. ապա Մ. Աբեղեանը համեմատելով բաղդատութեան հիմնական տեքստի հետ՝ ստուգել է նոյնը, բացի տպագրուած ընթերցուածներից. արտագրութիւնն արել է Ս. Յարութիւնեանը։ Երրորդ գրքի բոլոր ընթերցուածների համախմբումն արել է Մ. Աբեղեանը մենակ և, որպէսզի նոր սխալներ առաջ չըգան, առանց արտագրելու տպագրութեան է յանձնել։

Աւելորդ չի լինի գուցէ յիշատակել և հետեւեալը։ Այս հրատարակութեան համար ամենից ծանր և յոգնեցնող աշխատանքը եղել է ոչ այնքան Զ-ների համեմատութիւնը և տարբեր ընթերցուածներ նշանակելը՝ որքան ընթերցուածների համախմբումը։ Երբ բաղդատուած օրինակների թիւը սակաւ է՝ հեշտ է ծանօթութիւնները միացնել. բայց երբ նոյն օրինակների թիւը շատ է, ինչպէս այս դէպքում՝ առանձին մտքի լարում է պահանջւում, որ նման ընթերցուածները ի մի խմբուին, առանց մէկը կամ միւսը բաց թողնելու կամ սխալներ անելու՝ վատ կարդալուց կամ անզգոյշ արտագրելուց։ Համախմբումներն ու բնագիրը կազմելու ժամանակ դժբախտաբար հնարաւոր չի եղել ձեռի տակ ունենալու Զ-ները՝ կասկածելի թուացող ընթերցուածները նորից ստուգելու համար։

ե. Բնագրի համար իբրև հիմք ընդունուած է սովորական Վ. տպագրութիւնը. բայց և շատ բան, օգտուելով Ա. և Խ խմբերի Զ-ներից, փոխուած է, մանաւանդ մութ և անհասկանալի կտորները, որոնք պարզ կերպով աղաւաղուած են Վ-ի մէջ։ Այս աշխատանքը վերջացնելուց յետոյ սակայն, երբ պարզուած են Զ-ների խմբակցութիւնները և երբ բոլոր ընթերցուածները մի անգամից աչքի առաջ կարելի է ունենալ՝ աւելի ճիշտ կերպով կարելի է բնագիրը վերակազմել. և այժմ իսկ տեսնում ենք, որ շատ ընթերցուածներ պէտք էր բնագրի մէջ դնել, որ մենք ծանօթութիւնների մէջ ենք առել, կամ ընդհակառակն։ Բայց այդ չէինք կարող անել այն ժամանակ, երբ թէպէտ մեծ խմբերը Ա. և Տ մեզ համար պարզ էին, բայց դեռ բոլորովին պարզ չէին երկրորդական խմբակցութիւնները, անհնարին լինելով տեքստերի մէջ նշանակած ընթերցուածներով այդ պարզել։ Մեր աշխատանքի մէջ կարեւորը, կարծում ենք, ոչ այնքան բնագիրն է,

որքան ընթերցուածները։ Բնագրի վերակազմելը չի կարող մի մարդու գործ լինել. դրա վրայ դեռ շատերը պիտի աշխատեն. և կարծում ենք, այսուհետև ուրիշները հեշտութեամբ կարող են վերակազմել բնագիրը՝ ի նկատի ունենալով ոչ միայն մեր տուած ընթերցուածները, այլ և ուրիշ աղբիւրներ, և ամեն մի հատուածի համար առանձնապէս ուսումնասիրութիւն անելով։ Արդարև, մինչև այժմ ևս շատ դիտողութիւններ են եղել Խորենացու բնագրի համար, բայց դրանք մեծ մասամբ մնացել են լոկ ենթադրութեամբ ուղղումներ, քանի որ հիմնուած չեն եղել Ձ-ների ընթերցուածների վրայ. այսուհետև այդպիսի ուղղումները, եթէ հաստատւում են միաժամանակ և ընթերցուածներով՝ կը դառնան ընդունելի և ստոյգ։ Յուսանք, որ մեր այս հրատարակութիւնը նոր առիթ կընծայէ շատերին Խորենացու բնագրով նոր ի նորոյ պարապելու։

Այս հրատարակութեան բնագիրը վերջնապէս կազմել է Մ. Աբեղեանը։ Առաջին գրքի բնագիրը սկզբում միասին կազմեցին Մ. Աբեղեանը և Ս. Յարութիւնեանը, իսկ Երկրորդ գրքինը՝ Ս. Յարութիւնեանը մենակ. յետոյ սակայն Մ. Աբեղեանը, աչքի առաջ ունենալով սկզբում կազմածները՝ նորից կազմեց առաջին երկու գրքերի բնագիրը։ Առաջին գրքինը ինքը վերջնապէս պատրաստեց տպագրութեան համար, իսկ երկրորդ գրքի մէջ մտցրած փոփոխութիւնները Ս. Յարութիւնեանը Վ.-ի սևագրութիւնից արտագրելով՝ պատրաստեց տպագրութեան համար։ Երրորդ գրքի բնագիրը կազմել է Մ. Աբեղեանը մենակ։ Բնագրի կազմութեանը օգնել է շատ անգամ և Ստ. Մալխասեանցը, որ վարելով տպագրութեան սրբագրութիւնը՝ ամեն մամուլի համար բազմաթիւ ցուցումներ և դիտողութիւններ է ուղարկել էջմիածին Մ. Աբեղեանին, ցոյց տալով ծանօթութիւնների մէջ կասկածելի թուացող կամ արտագրութեան ժամանակ չնշանակած կամ թերի նշանակած կէտեր, որ նորից ստուգել և լրացրել է Մ. Աբեղեանը, ինչպէս և առաջարկելով այս կամ այն ընթերցուածը ծանօթութիւնների մէջ դնելու փոխանակ՝ բնագրի մէջ առնել, կամ ընդհակառակն։ Մ. Աբեղեանը յաճախ օգտուել է այս առաջարկութիւններից. բայց և այնպէս տպագրութեան մէջ ճշտութեամբ կատարուել են վերջնական ցուցումները Մ. Աբեղեանի, որի վրայ և ընկնում է բնագրի կազմութեան ամբողջ պատասխանատուութիւնը։ Երբեմն, երբ Ստ. Մալխասեանցի առաջարկութեանը համակարծիք չի եղել Մ. Աբեղեանը, իսկ առաջարկութիւնը կարևոր է համարուել բնագիրն այս կամ այլ կերպ հասկանալու նկատմամբ՝ Ստ. Մալխասեանցի առաջարկութիւնը, ինչպէս սկզբից պայմանաւորուած է եղել Հրատարակչական Յանձնախմբի հետ, զետեղուած է ծանօթութիւնների մէջ իր անուան սկզբնատառերով։

Ծանօթութիւնների մէջ դրուած վկայութիւնները Մ. Աբեղեանինն են. բայց Ստ. Մալխասեանցն էլ երբեմն նրա հաւանութեամբ աւելացրել է այդպիսիք։ Վկայութիւնները լիակատար մէջ բերելու դիտաւորութիւն չի եղել, այլ այնքան միայն, որքան հարկաւոր է համարուել բնագրի կազմութեան համար. քանի որ վկայութիւնների լիակատար ամփոփումը կարելի է գտնել հանդուցեալ Գր. Խալաթեանցի երկու

հատորների մէջ—(Армянскій Эпосъ въ Исторіи Арменіи Моисея Хоренскаго, Москва 1896. և Армянскіе Аршакиды въ Исторіи Арменіи Моисея Хоренскаго, Москва 1903.

Գրքի վերջում դրուած յատուկ անունների ցանկը Ա. գրքի համար կազմել է Մ. Աբեղեանը, իսկ միւս երկու գրքերի համար՝ Ս. Յարութիւնեանը. բայց սրա կազմածը սկզբնական թերթիկների վրայ ամբողջապէս վերստուգել է Մ. Աբեղեանը և ապա ճշտելով համանունները՝ արտագրել է ամբողջը։ Հանրածանօթ անունների մեծ ազաւաղումները երբեմն չեն առնուած ցանկի մէջ։ Մ. Աբեղեանինն է և այս Յառաջաբանը և Խորենացու Մատենագրութեան ցուցակը։ Վերջինս ըստ կարելւոյն լիակատար անելու համար՝ Մ. Աբեղեանի դիմումով հ. Արսէն Ղազիկեանը սիրայօժար ուղարկեց Վենետկից իր «Հայկ. Նոր Մատենագիտութիւն և Հանրագիտարան հայ կեանքի» դեռ չհրատարակուած գրքի այն մամուլը, որի մէջ է Խորենացու Մատենագիտութիւնը. ուստի այստեղ հարկ ենք համարում մեր շնորհակալութիւնը յայտնել Մխիթարեան Հօրը։ Ձ-ների մեծ խմբերը մասամբ որոշուած էին բաղդատութիւնից առաջ, մասամբ որոշւում են բաղդատութեան ժամանակ. երկրորդական խմբակցութիւնների որոշումը միայն Մ. Աբեղեանինն է, բնագրի և ընթերցուածների տպագրելուց յետոյ։ Ձ-ներից տասներկուսը նկարագրել էր Ս. Յարութիւնեանը, բայց Մ. Աբեղեանը կորցնելով նրա տետրակը՝ ստիպուած եղաւ երկրորդ անգամ նոյն աշխատանքը կատարել միւս Ձ-ների և տպագիրների հետ միաժամանակ։ Ամբողջի վերջնական սրբագրութիւնը կատարել է Մ. Աբեղեանը, բացի Բ. գրքի առաջին երկու մամուլներից, որ Ս. Յարութիւնեանն է վերջնապէս սրբագրել։

Վերջում կարեւոր ենք համարում յիշել և հետևեալը։ Ինչքան էլ առանձին խնամքով պատրաստուի այսպիսի աշխատանքը՝ վրիպակներն անխուսափելի են, մանաւանդ որ շատ անգամ կարդացած լինելով գրեթէ անգիր գիտենք Խորենացին, որով և աչքից կարող են փախած լինել ընթերցուածներ։ Կըլինին և ակամայ սխալներ, քանի որ մէկը կարդացել է Ձ-ները, միւսը հետևելով տպագրին՝ լսելով նշանակել է տարբեր ընթերցուածները։ Սխալներ առաջ են գալիս նոյն-իսկ ընթերցուածները Ձ-րից արտագրելիս և ամենից շատ, ինչպէս վերևում նկատեցի՝ ընթերցուածների համախմբումի, այլ և արտագրութեան և տպագրութեան միջոցին։ Առանձնապէս պէտք է յիշատակել, որ, մի դժբախտ թիւրիմացութեամբ, Խ խմբին պատկանող ա Ձ-րի համար բաւական թուով սխալ ընթերցուածներ կան նշանակուած Վ-ի հետ. բայց Մ. Աբեղեանն այդ բոլոր ընթերցուածները նորից ճշտել է Ձ-րի վրայ և սխալները դրուած են այս գրքի յետևում ուրիշ նկատուած վրիպակների հետ։ Մնացած սխալները, եթէ կան, կարծում ենք, առանձին կարևորութիւն չունին. որովհետև 1, եթէ մի Ձ-րի տառի տեղ մի ուրիշ Ձ-րի տառ լինի նշանակուած, ինչպէս Կ¹-ի փոխ. Կ², այսպիսի վրիպակը նշանակութիւն ունի միայն խմբակցութիւնները որոշելու համար. իսկ խմբակցութիւնները շատ պարզ որոշւում են հարիւրաւոր և հազարաւոր ուրիշ ընթերցուածներով. 2, եթէ որևէ

Ձ-րի այս կամ այն ընթերցուածը աչքից փախած լինի՝ դա ևս առանձին արժէք չունի, քանի որ նոյն խմբին պատկանող Ձ-ները բազմաթիւ են և դրանց մէկն ու մէկը անպայման տալիս է այդ ընթերցուածը, և 3, եթէ մի հատ Ձ-րի միայն առանձնայատուկ ընթերցուածն աչքից փախած լինի՝ դա ևս, կարծում ենք, մեծ նշանակութիւն չունի, քանի որ այդպիսի առանձնայատուկ ընթերցուածները մեծ մասամբ անարժէք են սկզբնական բնագրի նկատմամբ։—Մենք մեր կողմից աշխատել ենք, որ մեր գործն անթերի լինի. բայց եթէ կըպատահին վրիպակներ՝ այդ ապագայում աշխատողների ներողամտութեանն ենք թողնում։

Չպէտք է մոռանալ, որ այս գործի վրայ աշխատողներս մեր օրուայ թարմ ժամանակը չենք նուիրել սրան, այլ եղել ենք մարդիկ՝ «անպարապ» իւրաքանչիւրս մեր պաշտօնի գործերից, և մեր յոգնութեան ժամերին ենք կատարել այդ և նոյն-իսկ մեր հանգստեան ժամերը նուիրել դրան տարիների ընթացքում, չխնայելով ժամանակ և եռանդ և կրելով այդպիսի տաղտկալի գործի ծանրութիւնը, որ այսպիսի բազմաթիւ օրինակների բաղդատողներն ու բիւրաւոր ընթերցուածները համախմբողները միայն կը հասկանան թէ ինչ է։ Արել ենք այն, ինչ որ կարողացել ենք։ Մենք մեզ լիովին վարձատրուած կը համարէինք, «միայն թէ շնորհակալ ոք մերոցս գտանիցի աշխատութեանցս»։

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆ

ՍԵԹ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

30 սեպտեմբերի 1912.

Ս. Էջմիածին.

II.

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԻԱՅՆ ԲՆԱԳԻՐ.

1. *Ամստերդամ, 1695. «Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան»...*
2. *Վենետիկ, 1752. «Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան»...*
3. *Վենետիկ, 1827. «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց»։*
4. *Վենետիկ, 1881. «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց»։*
5. *Տփխիս, 1881. «Սրբոյ հօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց»։*
6. *Տփխիս, 1910. «Սրբոյ հօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց»։*
7. *Վենետիկ, 1843. «Սրբոյ հօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք (Պատմութիւն Հայոց, Թուղթ Սահակայ Արծրունեաց իշխանի եւն)»։*
8. *Վենետիկ, 1865. «Սրբոյ հօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք»։*

ԲՆԱԳԻՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ.

9. *Հայ-Լատիներէն, Լոնդոն, 1736. Մովսիսի Խորենացւու Պատմութիւն և Աշխարհագրութիւն. Mosis Chorenensis Historiae Armeniacae Libri* III. *Accedit ejusdem Scriptoris Epitome Geographiae... Latinè verterunt, notisque illustrarunt Gulielmus et Georgius, Gul. Whistoni Filii...*
10. *Հայ-Ֆրանսերէն, Վենետիկ, 1841. Ա. և Բ. գրքերը միայն. Moïse de Khorène... Histoire d'Arménie. Texte arménien et traduction française par P. E. Le Vaillant de Florival.*
11. *Հայ-Ֆրանսերէն, Պարիզ, 1845. Moïse de Khorène... Histoire d'Arménie. Texte arménien et traduction française, avec notes explicatives et précis historiques sur l'Arménie... Par P. E. Le Vaillant de Florival.*

ՄԻԱՑՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

12. Աշխարհաբար, Ս.-Պետերբուրգ, 1889. «Մովսէս Խորենացու Հայկական Պատմութիւն. աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խորէն Ծ. վ. Ստեփանէ»:
13. Աշխարհաբար, Ս.-Պետերբուրգ, 1898.—Նախորդ թարգմանութեան երկրորդ տպագրութիւնը, սրբագրուած և ուղղուած:
14. Լատիներէն, Ստոկհոլմ 1733. *Epitome commentariorum Moysis Armeni de origine et de rebus Armenorum et Parthorum item series principum Iberiae et Georgiae cum notis et observationibus Henrici Brenneri...*
15. Ֆրանսերէն, Պարիզ, 1836. *Histoire d'Arménie de Moïse de Khorenatzi... traduite p. P. E. Le Vaillant de Florival...*
16. Ֆրանսերէն, Պարիզ, 1869. *Moïse de Khorène. Histoire d'Arménie en trois livres. Traduction nouvelle accompagnée de notes historiques, critiques et philologiques. (Collection des Historiens anciens et modernes de l'Arménie, publiés en français... par Victor Langlois... Tome deuxième.*—Առաջին հատորի մէջ ևս ունի՝ *Mar Apas Catina. Histoire ancienne de l'Arménie...*):
17. Իտալերէն, Վենետիկ, 1841. *Storia di Mosè Corenese, versione illustrata dai Monaci armeni Mechitaristi, ritoccata quanto allo stile da N. Tommaséo...*
18. Իտալերէն, Վենետիկ, 1850. Նախորդի երկրորդ տպագրութիւնը:
19. Իտալերէն, Վենետիկ, 1841. *Mosè Coronese, storico armeno del quinto secolo, versione di Giuseppe Cappelletti.*
20. Ռուսերէն, Պետերբուրգ, 1809. *Армянская Исторія, сочиненная Моисеемъ Хоренскимъ... перевелъ съ Армянскаго... Архидіаконъ Іосифъ Іоаннесовъ.*
21. Ռուսերէն, Մոսկուա, 1858. *Исторія Арменіи Моисея Хоренскаго. Перевелъ съ Армянскаго и объяснилъ Н. Эминъ.*
22. Ռուսերէն, Մոսկուա, 1893. Նախորդի երկրորդ տպագրութիւնը, սրբագրուած և ուղղուած:
23. Գերմաներէն, Ռեգենսբուրգ, 1869. Մանակի թարգմանութիւն. *Des Moses von Chorene Geschichte Grossarmeniens. Aus dem armenischen übersetzt von Dr. M. Lauer.* Երկրորդ գրքի բնագիրը նաև Լաուերի դասագրքում՝ *Armenische Chrestomathie zu des Verfassers Grammtik der classischen armenischen Sprache. Wien, 1881.*
24. Հունգարերէն, Թարգմանութիւն Քրիստ. Սճնկոզեանի, ուսուցիչ Կերլա հայաքաղաքի, 1892.

Բ. ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Մովսէս Խորենացուն վերաբերեալ մատենագրութիւնն այնքան ընդարձակ է, որ ամեն ինչ այստեղ գնել անկարող ենք, քանի որ ձեռի տակ չունինք ցուցակներ և գրադարան։ Բացի վերոյիշեալ թարգմանութիւնների մէջ եղածներից՝ հնարաւոր է մեզ յիշատակել և հետևեալները, որոնց աղբիւր եղել են գլխաւորապէս—ա. Գ. Խալաթեանցի երկու հատորները, Арм. Эпосъ и Арм. Аршакиды. բ. Տաշեանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա». գ. Կ. Կոստանեանցի «Հայագիտութիւնն Արևմտեան Եւրոպայում», Թիֆլիս, 1910. դ. Հ. Գ. Զարպհանալեանի «Ուսումնասիրութիւնք Հայ լեզուի և մատենագրութեան յարևմուտս», Վենետիկ, 1895. ե. Հ. Արսէն Ղազիկեանի «Հայկ. Նոր Մատենագիտութիւն և Հանրագիտարան հայ կեանքի»։ Վերջինիցս են առնուած հայերէն պարբերական թերթերի մէջ եղած յօդուածները։

1. Աբեղեան Մ. Հայ ժողովրդական Առասպելները Մովսէս Խորենացու Հայոց Պատմութեան մէջ. Վաղարշապատ, 1901. (արտատպութիւն «Արարատ»-ից)։
2. Ադոնց Ն. յօդուած ի Византійскій Временникъ, т. VIII, вып. 1—2.
3. Ալիշան հ. Ղ. Հայապատում, Վենետիկ, 1901—1902. Հին Հաւատք, Վենետիկ 1895. Բազմաթիւ տեղեկութիւններ «Այրարատ»-ի և միւս երկերի մէջ։ Յօդուած Դ. գրքի մասին «Բազմավէպ» 1851, էջ. 69։ Տես և Ներքևում «Բազմավէպ»։
4. Բաումգարտներ. A. Baumgartner, Ueber das Buch die „Chrie“, ի ZDMG, 1886, Heft III. p. 457—515.
   —Dr. M. Lauer und das zweite Buch des Moses Chorenatzi, Leipzig, 1885.
5. Բլաու, O. Blau, Die Herren von Sophene und deren Münzen, ի Numismatische Zeitschrift, Wien, 1877. IX. p. 108.
6. Գարագաշեան, Քննական Պատմութիւն Հայոց, հատ. Ա. Կ. Պոլիս, 1880 և հատ. Ա—Դ, Տփղիս, 1894—95.
   —Ճաշակք Ոսկեղէն դպրութեան, հատ Ա. Կ.-Պոլիս, 1887, էջ 23—36. հատ. Բ. Կ. Պոլիս, 1889, էջ 2—11։
7. Գաթըրճեան հ. Յ. Տիեզերական Պատմութիւն, հատ. Ա. 1849, էջ 87 հմն.։
   —Պատմութիւն Մատենագրութեան Հայոց, Վիեննա, 1851.
8. Գելցեր Հ. H. Gelzer, Africanus und die Byzantinische Chronographie I. 1880. էջ 209 և 281.
   —Die Armenische Mythologie. Beiträge der Königl. Sächs. Gesellsch. d. Wissenschaften. Sitzung vom 7 dec. 1895.

—Armenien, ի Realencyclop. für protest. Theologie u. Kirche. II Bd. 1897. Հայ. Թարգմ. Հ. Գր. Գալեմքեարեան, Վիեննա. 1897. «Համառօտ Պատմութիւն Հայոց»։—Քննադատ. Արևելեան Մամուլ, 1897, էջ 687. «Մշակ», 1897 Թ. 101.

—Zur armenischen Götterlehre. Berichte über die Verhandl. d. Sächs. Gesellsch. d. Wiss. hist. phil. cl. 1896. Bd. 48. Հայ Թարգմ. Հ. Յովհ. Թորոսեան, Վենետիկ, 1897. «Հետազօտութիւն հայ դիցաբանութեան»։ Քննադատ. «Մասիս», 1897, Թ. 112.

9. Գէորգեան Բ. վ. (Ծուղուրեան), Խորենացին Խորենացով պէտք է հասկանալ, Ա. Վաղարշապատ, 1889. Բ. Թիֆլիս, 1902.

10. Գուտշմիդ. A. v. Gutscmid, Ueber die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren, Leipzig 1876. Ausdruck aus d. Berichten ü. d. Verhandlungen d. Königl. Sächs. Gesellsch. d. Wiss. 1876 von 23 April. Հայ Թարգմ. Հ. Ն. Ճնտոյեան, Բազմավէպ 1877, էջ 43—51, 110—116, 213—222, 289—302.

—Moses of Chorene, ի Encyclopaedia Britanica 1883. XVI. 861—863.

—Kleine Schriften, Bd. III. Leipzig, 1892. էջ 282—338.

—Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroene. St.-Pétersb. 1889, ի Mémoires de l'Académie Impér. des sciences St.-Pétersb. 1887, VII. série. T. XXXV. № 1. p. 17.

11. Դաղբաշեան Յ. Փաւստոս Բիւզանդացի և իւր պատմութեան խարդախողը։ Քննութիւն Մովսէս Խորենացու աղբիւրների մասին, Վիեննա 1898։ (Ազգ. Մատեն. ԻԹ.)։ Քննադատ. «Բազմավէպ» 1898. Թ. 12. «Մշակ» 1898 Թ. 201, 202, 204, 205. (Ստ. Մալխասեանց)։ «Հանդէս Ամսօրեայ», Թ. 4. (Դաղբաշեան Ս. Մ.-ի յօդուածի դէմ)։ «Նոր-Դար» 1898 Թ. 192.

12. Դիւլորիէ, Ed. Dulaurier, Étude sur les chants historiques et les traditions populaires de l'ancienne Arménie, ի Journal Asiatique 1852. № 1. vol. XIX.

—Les chants populaires de l'Arménie, ի Revue de deux Mondes 1852.

13. Զարպհանալեան Հ. Գ. Պատմութիւն հայերէն դպրութեանց, Ա. Հին Մատենագրութիւն Հայոց, Վենետիկ 1865։ Երկրորդ տիպ, Հայկական հին դպրութեան պատմութիւն 1886։ Երրորդ տիպ 1897.

—Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յարևմուտս ԺԴ—ԺԹ դար. Les études Arméniennes en Europe (siècles XIV—XIX). Վենետիկ 1895, էջ 102, 243, 281, 338, 370. (Գ. Ա. Տրումպֆի «Հայկ. Ուսմունք յԵւրոպա» գրուածքի թարգմանութիւնն է, ուղղումներով և յաւելուածներով)։

14. Էմին Մ. Վէպք Հնոյն Հայաստանի, Մոսկուա 1850. Երկրորդ անգամ Էմինեան «Ազգագրական Հանդէս»-ի Ա. հատորի մէջ։

—Н. Эминъ, Очеркъ Религіи и вѣров. языч. армянъ, Москва 1884.

—Вахагнъ Вишапакахъ... С.-П. 1873.

—Мидійцы въ древней Арменіи, Москва 1881.

—*Моисей Хоренскій и древн. эпосъ Армянъ. Москва 1881.* Հայ թարգմ. Գր. Խալաթեանց. «Մովսէս Խորենացին և Հայոց հին վէպերը», Թիֆլիս 1886. Նոյնը թարգմ. Խաչ. Յովհաննիսեանց. «Մովսէս Խորենացի և Հին Հայկական վէպ». Թիֆլիս 1887.

—*Династическій списокъ Хайкидовъ, Москва 1884.*

15. Լա Կրոզ, *M. V. La-Crose. Thesaurus epistolici Lacrosiani,* Լայպցիգ, 1742—1746. հատ. I. 358 հտն. հատ. III. 184 եղն.

16. Լանգլուա, *V. Langlois, Les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khorène, Paris 1858.*

—*Études sur les sources de l'Histoire d'Armènie de Moïse de Khorène,* ի *Bulletin de l'Acad. imp. d. sciences, Mél. asiat. 1861. t. IV. p. 293—368.* թարգմ. Աղաբեկեան և Ս. Պալասանեան, Տփղիս 1860 և 1863.

17. Լանդիեր, *Landière, Notice sur Moïse de Khorène, historien de la Grande Arménie. Paris, 1838.*

18. Խալաթեանց Բ. Հին հայոց ժողովրդ. վէպերը և Մովս. Խորենացի։

19. Խալաթեանց Գր. *Г. Халатьянцъ, Армянскій Эпосъ въ Исторіи Арменіи Моисея Хоренскаго. Опытъ критики источниковъ. Часть I. Изслѣдованіе, часть II. Матеріалы. Москва, 1896.*

—*Армянскіе Аршакиды въ „Исторіи Арменіи" Моисея Хоренскаго. Опытъ критики источниковъ. Часть I. Изслѣдованіе, часть II. Матеріалы. Москва, 1903.*

—*Начало критическаго изученія исторіи Арменіи Моисея Хоренскаго. ЖМНП. 1894,* հոկտ.

—Ղազար Փարպեցի և գործը նորին, Մոսկուա, 1883.

—Մովսէս Խորենացու նորագոյն աղբիւրների մասին քննադատութիւններ. Վիեննա, 1898.

—Մարաբաս Մծուրնացի, կեղծ Ագաթանգեղոս, Վենետիկ, 1898.

—Մովսէս Խորենացու Հայոց Պատմութեան սկիզբը։

—Եդեսիոյ Աբգար թագաւորը ըստ Խորենացւոյ։

—Հայ Արշակունիք Խորենացւոյ Հայոց Պատմութեան մէջ։ Վիեննա 1906.

—Հայոց վէպը Մովսէս Խորենացւոյ Հայոց Պատմութեան մէջ։

—Մովսէս Խորենացի և իւր աղբիւրները։

20. Կատրըմէր, *Quatremère, Observations sur la ville de Ninive,* ի *Journ. des Savants 1850. p. 364* հտ.

21. Կարենեանց Յ. Բաղդատութիւն Պատմութեան Մովսիսի Խորենացւոյ եղն. Տփխիս, 1858.

22. Կարիեր, *A. Carrière, Moïse de Khoren et les Généalogies patriarcales. Paris, 1891. Rev. hist. XXV.* թ. 387.

—*Nouvelles sources de Moïse de Khoren. Vienne, 1893.*

—*Nouvelles sources de Moïse de Khoren, Supplément. Vienne 1894.* Հայ թարգմ. Տաշեանի «Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացւոյ» և «Յաւելուած». Վիեննա, 1893 և 1894.

—*La légende d'Abgar dans l'Histoire de Moïse de Khoren. Paris,*

1895. Հայ թարգմ. «Հանդէս Ամսօրեայ» 1896. էջ 33—35,
97—101, 170—175, 238—246, 263—267 եւն. Վերջինիս դէմ
Հ. Բ. Սարգսեան՝ Բազմավէպ 1894 էջ 198—210. Աբգարի զրոյցի
մասին տես Халатьянцъ Арм. Аршак. եր. 76 հտ. և Հ. Տաշեան
„Zur Abgarsage", ի WZKM. Bd. IV. Heft 1, 2, 3.

—Les huit sanctuaires de l'Arménie d'après Agathange et Moïse de
Khoren.

—Նամակ «Հանդէս Ամսօրեայ» խմբագրութեան Մար Աբասի
մասին. «Հանդէս Ամսօրեայ» 1897. յունուար:

23. Կիպերտ, H. Kiepert, Ueber die älteste Landes—und Volksgeschichte
von Armenien, ի Monatsberichte d. Königl. Pr. Acad. d. Wiss.
Berlin, 1869.

24. Կոնիբեր, F. Conibeare. Մովսէս Խորենացւոյ Պատմութեան աղբերաց
խնդիրը. «Հանդէս Ամսօրեայ» 1902. յուլիս, օգոստոս.

—Մովսէս Խորենացու ժամանակի մասին, Byz. Zeitschr. 1901.
3—4. Heft. Հայ. թարգմ. Տաշեանի Յառաջաբանով. «Հանդէս
Ամսօրեայ» 1902. յունուար և մարտ:

25. Ճնտոյեան Ն. եպիսկ. Դատաստան ի վերայ Խորենացւոյ և դատա-
ւոր նորա. «Բազմավէպ» 1878. էջ 32—45.

26. Մալխասեանց Ստ. Մովսէս Խորենացու նոր աղբիւրները. «Մուրճ»,
1892.

—Սեբէոսի Պատմութիւնը և Մովսէս Խորենացի, մատենագր.
ուսումն. Թիֆլիս, 1899:

27. Մակլեր, F. Macler, Moïse de Khoren et les travaux d'Auguste
Carrière ի Revue Archéolog. Paris, 1902.

28. Մառ, Н. Марръ. Къ критикѣ Исторіи Моисея Хоренскаго СПБ.
1898.

—О начальной исторіи Арменіи Анонима. Къ вопросу объ источ-
никахъ Исторіи Моисея Хоренскаго. ի Византійскій Временникъ,
1894, II.

—Изъ лѣтней поѣздки въ Арменію. Отдѣльный оттискъ изъ
„Зап. В. Отд. Имп. Р. Арх. Общ." 1890. Томъ VI. стр. 135—228.

—Арабское извлеченіе изъ сирійской хроники Марабаса ի Записки
Вост. Отд. Имп. Русс. Арх. Общ. т. XIV և Отд. оттискъ
СПБ. 1902.

Հայերէն թարգմանութիւններ՝ «Ամառնային ուղևորութիւնից» եւն:
«Առ քննադատութիւն պատմութեան Մ-ի Խորենացւոյ». «Անա-
նունի Հայոց նախն. պատմութեան մասին. Մովսէս Խորենացու
պատմ. աղբիւրներուն հարցի վերաբերմամբ, Կարիէրի քննադատ.
յօդուածների առթիւ»:

—Յօդուած ի Византійскій Временникъ. Томъ V. вып. 1 и 2.
1898. եր. 227 հտն. (Քննադ. Խալաթեանցի Армянск. Эпосъ գրքի)։

29. Մարկվարտ, Marquart. յօդուած ի ZDMG. 1895. IV p. 656.

30. Մեսրոպ վարդ. յօդուածներ՝ «Արարատ» 1893 յունուար եր. 65—73.
1898. եր. 165—173.

—Հրատարակութիւն «Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն». Վաղարշապատ, 1897.

31. Միաբան (Գ. Տ. Մկրտչեան) Խորենացու պատմութեան ուսումնասիրութիւն, Վաղարշապատ 1896. նոյնը «Արարատ» 1890 էջ 567—576, 674—682. 1891 էջ 87—106, 147—155, 196—207, 277—281, 384—402, 437—448.

—Հայկականք, Վաղարշապատ 1894.

—Յօդուած, «Արարատ» 1897, էջ 422.

32. Նև, F. Nève. *L'Arménie chrétienne et sa littérature*, Louvain 1886.

33. Նիկար Պ. Nicard,—Փօլ Նիքար, Տիփինոս և Սկիւլլիս Կրետացի արձանագործք, *Dipoenus et Scyllis sculpteurs crétois*, հրատար. ի Յիշատակագիրս Գաղղիոյ ազգային հնագիտաց ընկերութեան Շար չորրորդ. հատ. Ը. Փարիզ 1877. յէջս 131—275 (Զարպհ. Ուսումնասիրութիւնք հայ լեզուի… եր. 243 հտ.)։

34. Նիկոլսկի, B. M. Никольскій, *Клинообразныя надписи Ванскихъ царей. III. т. ի Древн. Вост. труд. Вост. Ком. М. Арх. Общ. вып. III.*

35. Նորայր Բ. Բնհատէր Ա, Բ. տետր.

—Հայկական բառաքննութիւն, Կ.-Պոլիս, 1880.

—Յօդուած «Հանդէս Ամսօրեայ» 1893 սեպտ. 273—78. Տես և Ներքեւում «Մշակ».

36. Շրումպֆ, D. Schrumpf, *The study of Armenian*, 1891. Տես և Զարպհանալեան։

37. Չամչեան Միք., Պատմութիւն Հայոց. 3 հատ.

38. Պալասանեան Ստ., Պատմութիւն Հայոց Գրականութեան. Տփխիս, 1865.

39. Պատկանեան Ք. К. Патканов, *Ванскія надписи и значеніе ихъ для исторіи Передней Азіи* ի ЖМНП. 1874—1881. և առանձին СПБ. 1881.

40. Պարոնեան Ս. Վ. Վաւերաբանութիւն Մար Աբասեան Մատենին որ ի գիրս Մովսիսի Խորենացւոյ։ Տես նաև «Բանասէր», «Հանդէս Ամսօրեայ»։

41. Պետերման, J. H. Petermann, *Ueber Moses Chorensis und die Quellen seiner Geschichte der Armenier*. Sitzungsber. d Berl. Acad. d. Wiss· 1851.

—*Ueber die schriftl. Quellen des Moses Chor*. նոյն տեղում 1852.

42. Պիշար, M. Pichard, *Essai sur l'histoire d'Arménie par Moïse de Khorène*, Paris 1866.

43. Ռընան, Renan, *Histoire générale des langues sémitiques*, Paris 1858. p. 262 հտ.

44. Սարգսեան հ. Բ. Քննութիւն Մարիբասեան աւանդութեան ըստ Մ. Խորենացւոյ և անոր աղբերաց վրայ։ «Բազմավէպ» 1883. էջ 54, 111, 224 ևլն. 1884. էջ 35, 123, 228, 315. 1885. էջ 11, 108. Համառօտ բովանդակութիւն տեսութեանց, «Բազմավէպ» 1885. էջ 237—247.

—Ա. Կուդշմիթ ի Համապատումն Բրիտանականին և եղծ կարծեաց նորա։

—Քննադատութիւն ի վերայ Թղթոյն Մովսիսի Խորենացւոյ.

—Վարք ս. Սեղբեստրոսի և աղբերք Մովսիսի Խորենացւոյ, Վիեննաիկ 1893.

45. Սէն-Մարտէն. M. J. Saint-Martin, Notices sur la vie et les écrits de Moïse de Khorène. Journ. Asiat. 1823. II. p. 321—344.

—Fragments d'une Histoire des Arsacides, Paris 1850 I. p. 145—158.

46. Տաշեան Ուսումնասիրութիւնք Ստոյն Կալլիսթենայ, «Հանդէս Ամսօրեայ» 1891—92. և առանձին Վիեննա 1892.

47. Ֆետտեր. P. Vetter, Die Sibyllen-Citat bei Moses von Choren. Theol. Quartalschr. Tübingen, 1892. III.

—Moses von Choren, Wetzer u. Weltes Kirchenlexicon VIII. 1893.

—Das Buch des Mar Abas von Nisibis, im Festgruss R. p. Roth, 1893.

—Moses von Choren, in Nirschl's Patrologie und Patristik, Mainz 1885. Bd. III.

—Die nationalen Gesänge der alten Armenier. Theol. Quartalschrift, Tübingen, 1894. Այս բոլորի հայ թարգմ. «Ֆէթթէրի հայկական աշխատասիրութիւնք». Վիեննա, 1895.

48. Ֆրերէ. Fréret, Mémoires sur l'ère arménienne. Oeuvres Complètes. t. XII. p. 187—254. և Mémoires de l'Acad. des Inscriptions et Belles-Lettres. t. XLVII. p. 98 և հտն.

Հետևեալ պարբերական թերթերը հ. Ա. Ղազիկեանի «Նոր Մատենագիտութիւնից»: Ազգասէր, 1846. էջ 175 և 177։—Արարատ, «Խորենացու Պատմութեան ուսումնասիրութիւնը» (Միքարան), 1890, 1891. —«Մովսէս Խորենացու մէկ նոր աղբիւրը» (Փ. Տ. Մովս.), 1893. 65, 283.—«Մովսէս Խորենացի և իւր աղբիւրները» (Գ. Խալ.), 1897, 531. —«Խորենացու ժամանակը որոշելու նոր փորձ (Գ. Տ. Մկրտչեան), 1897, 422. «Դիտողութիւններ Խորենացու մասին» (Գր. Վանցեան), 1900, 186.— «Մի հատուած Մովսէս Խորենացու Պատմութիւնից», 1895, 118, և Թ. 4, Յաւելուած՝ էջ 12.—1896, էջ 317.— «Ի Մովսիսէ քերթողահօրն պատմութենէ վասն Կոստանդիանոսի մեծի թագաւորին», 1894, Թ. 5. «Մովսէս Խորենացու Ուսումնասիրութիւնը», (Գ. Տ.-Մկրտչ.), 1894, էջ 148.— «Փիրմիլիանոսը Խորենացու Պատմութեան մէջ», 1894, 26.— «Մովսէս Խորենացու մեղեդին ի պատիւ Ս. Գր. Լուս.», 1895, 202.— Մակլերի «Moïse de Khoren et les travaux d' A. Carrière» գրութեան առթիւ 1904, Թ. 1։— Արեւելեան Մամուլ 1881 (Ս. Վ. Պարոնեան), 1896, 470։—Արեւելք, «Մովսէս Խորենացի և Լամարթին», 1890, Թ. 1933—35, 1959։—Արծուի Վասպուրական, «Մովսէս քերթողահայր ակնաղբիւր հայոց դպրութեան», 1858, 223։— Արձագանք 1891, Թ. 37։— Արմէնիա (հունգարերէն) Gergely, G. 1887, Heft 1։— Արշալոյս Արարատեան 1878, Թ. 1092։— Բազմավէպ,

«Մովսէս Խորենացի և իր Հայոց Պատմութիւնը» (Ալիշան) 1847, էջ 150.—«Մովսէս քերթողահայր Հայոց» նոյն 1849, 51. (Նոյնը բաղուածոյ արտատպուած ռուսահայ լեզուով Արաքս 1893 գիրք Բ. էջ 46, Պռոշեանցի «Երանի թէ ճշգրիտ» վիպակին մէջ).— «Յաղագս Մովսիսի Խորենացւոյ Դ. անուանեալ գրոցն պատմութեան» նոյն 1851, 69.— 1894, էջ 544. Տեղայի թղթակցութիւնը, և 547, Հ. Բ. Ս-ի դիտողութիւնը.— Այլ թղթակցութիւն Տեղայի 1895, 65.— «Քննադատութիւն քննադատութեան Ա. Կարիէրի և Խորենացւոյ Ե. դարու բնագրոշմը (Հ. Բ. Ս.), 198—210.— «Մովսէս Խորենացի և Լա Կրոզ» (Ե. Տեղա) 1897, 5.— «Ազգային մեծ մատենագիր մի», 233.— «Բեեռագիր արձանագրութիւնք Ռուսաց Հայաստանում և Մ. Խորենացի» (Խ. Յովհաննիսեանց), 457.— «Սոկրատայ հին թարգմանութեան հրատարակութիւնն և Մ. Խորենացի» (Հ. Բ. Ս.), 565—575.—«Հին Պատառիկ մի Մովսիսի Խորենացւոյ» (Ալիշան) 1898, 165—174.—«Մ. Խորենացւոյ Պատմագրութեան ուսումնասիրութեան ընթացքը և անոր հնութեան նոր ապացոյցները» (Հ. Բ. Ս.), 1903, Թ. 11, 12.—(Ասոր դէմ ՀԱ. 1904, Թ. 1—2).— 1904, Թ. 2, «Պետրոս Սիւնեցի» ևն. Թ. 3, «Գրիգոր Սարկաւագապետ» ևն.— «Խորենացին է Աստուածաշնչի Մնացորդաց գրքերի առաջին հայ թարգմանողը Ասորերէն բնագրից» (Բարդ. եպ. Գէորգեան), 1905, 426.— «Երկրորդ տիեզերական ժողովն ու Մովսէս Խորենացի» (Հ. Բ. Ս.) 202, 301, 418։— Բանասէր Մ. Խորենացւոյ Պատմութիւն հայոց ուղղագրեալ և ծանօթաբանեալ (Հ. Ս. Պարոնեան) 1889. 93, 178, 280, 349.— 1900, 317.— 1903, 166.— Մ. Խորենացւոյ խնդիրը, պատասխան առ «Հանդէս Ամսօրեայն» (նոյն), 349.— 1904 Թ. 5—6։— Երևակ, «Մ. Խորենացի» 1858 հատ. Դ. էջ 363.— 1859,11.— «Մ. Խորենացիին վրայ նոր քննութիւն» 1860, 12։— Լումայ, «Խորենացին քննադատութեան մէջ» (Ա. Տ.-Միք.) 1900, գիրք Ա.— «Թուղթ Սահակայ Արծրունւոյ առ Մովսէս Խորենացի և պատասխանի» անդ։— Հանդէս Ամսօրեայ 1888, էջ 8, 79, 133, 171, 223, «Պ. Ամանտ... և երկիր Հայոց».— «Քննութիւն ողբոցն Մ. Խորենացւոյ» (Կ. Յ. Պասմաճեան) 1891, Թ. 12.— «Մ Խորենացւոյ մէկ նոր աղբիւրը Ա. 1892. էջ. 150 (Ասոր դէմ Մուրճ 1892 Թ. 12, (Ստ. Մալխ.)— Բ. 373։ Ասոնց դէմ անդ էջ 343 (Հ. Ս. Պարոնեան).— «Նորագոյն աղբերք են Կարիէրի». 1893 էջ 116 ևն. քննադ. Ֆէթթէրի, անդ էջ 243. տես և էջ 178.— «Թղթակցութիւն Կարիէրի առ Տաշեան», էջ 309.— «Սիբիլլեայց կոչումը Մ. Խորենացւոյ քով» (Ֆէթթէր) 1893 Թ. 2.— «Մովսէս Խորենացի» (Ֆէթթէր), անդ, էջ 371.— «Մովսէս Խորենացի ըստ ուսուցչապետ Ն. Մառի», 1895. էջ 18 ևն.— 1896, էջ 315 (2).—1898, 313.— «Մի հատուած Մ. Խորենացու Պատմութիւնից», (տես Արարատ 1896, յուլիս).— «Մ. Խորենացւոյ նկատմամբ «Ծաղկաքաղի» մէկ փոքրիկ դիտողութիւնը», 1897, 61 (20).— Մ. Խորենացւոյ քննադատութեան առթիւ, 1898, էջ 185 (4), 189 (15).—«Երկու անկեղծ և ճշմարիտ գիտնականներ» (մին է Մեսրոպ վարդ. որու գրութիւնը տես Արարատ 1898, Թ. 3—4, էջ 165, «Սոկրատ պատմագիր և Մովսէս Խորենացի»).—

«Մ. Խորենացւոյ պաշտպանները կընուագին», 1898, Թ. 8—9,
էջ 282 (13).— «Մ. Խորենացւոյ պաշտպանները» (Նորայրի
Մշակ-ի մէջ հրատարակած յօդուածոց առթիւ), Թ. 12. էջ 382 (4).—
1889, Թ. 4. էջ 116—122 ընդդիմախօսութիւն.— Տես և Բանասէր
1900 հատ. Բ. պրակ Ա. էջ 55—82. և Հանդէս Ամսօրեայ 1900, էջ
316 (41).— «Սուտ Խորենացւոյ պաշտպանին», 1903, Թ. 7, էջ 222
(3).— «Մ. Խորենացին և Բ. Տիեզերական ժողովը» (Ն. Ա.), 1904,
Թ. 1—2։— Ծռաքաղ, «Այցելութիւն շիրմի Ս. Վարդապետին մերոյ
և քերթողահօր Մովսիսի Խորենացւոյ որ ի Տարօն», քերթ. (Մանուկ
ժամակոչեանց) 1860, 326։— Մասիս, «Աշխարհաբառ Խորենացի»
1890, ապրիլ 15.— Պատասխան՝ Արևելք 1890 Թ. 1879.— Մշակ
1886, Թ. 120.— 1894, Թ. 132, «Պրօֆ. Մառի նոր աշխատութիւնը»,
և Թ. 139.—1895, Թ. 58.—1896, Թ. 70, «Մի բացատրութիւն Մ.
Խորենացու աղբիւրների առիթով» (Գր. Խալաթ.) 1897, Թ. 3.— 1898,
Թ. 192, 193, 195, 203, 216, 217.— 1899, Թ. 16, 17, «Հայերէն հին գրա-
կանութեան խնդիրներ. Մովսէս Խորենացի» (Նորայր).— 1900, Թ.
151, Մամուլ։—Մառի «Մովսէս Խորենացին և նրա քննադատները».
Արաբական քաղուածք Մարիբասի Սիրիական Քրոնիկից (Մ.
Խորենացու Պատմութեան հարցին վերաբերեալ), քննադ. անդ՝ 1902,
Թ. 224—5։— Մուրճ 1891, էջ 290.—1893, Թ. 5, էջ 808. «Մի բա-
նասիրական խնդրի առթիւ» (Խորենացին Ուխտանէսի մօտ).—
«Մովսէս Խորենացին և Թուելեաց երգքը», 1894, Թ. 3.— «Հայագի-
տութիւնը XX դարու սկզբում» (Ստ. Մալխ.) 1901, Թ. 1—4։— Տարազ,
«Մովսէս Խորենացու հայրենիքի մասին», 1903, Թ. 33։—Փարոս,
«Վերջին բանք Մովսիսի Խորենացւոյ, որք պակասին ի տպագիր պատ-
մութեան նորա», 1874, տետր Գ.։

Աշխարհաբար թարգմանութեան համար՝ Արաքս Բ. տարի, գիրք
Բ. էջ 113։— Աղբիւր 1890, Թ. 1. Բաժին Բ.։— Արևելք 1890, Թ.
1933—35։—Արմէնիա, 1890, Թ. 78։— Հանդէս Ամսօրեայ 1890, էջ
113.—1892, էջ 361։ Քննութիւն Մ. Գալեմնի Խորենացւոյ պատմու-
թեան աշխարհաբար թարգմանութեան և բնագրի ուսումնասիրութեան
մասին՝ գործոյն ի Ռ. Յ. Պէրպէրեանէ (Իզմիրեանց Մրցանակի առթիւ),
Մ. Գալեմնի պատասխանը անդ՝ 1893, էջ 201.— «Երջանիկ թարգմա-
նիչ մը», անդ 1896, էջ 90։— Մասիս 1890, Թ. 3939, 3944։— Մշակ
1889 Թ. 142 (Ս. Հախումեան)։—Մուրճ 1890, Թ. 1. էջ 102 (Լ. Ս.)։—
Նոր-Դար 1890, Թ. 10—14, 195 (Ս. Տ.-Սարգսեան)։ Բազմավէպ
1898, էջ 291։ – Հանդէս Ամսօրեայ 1898, Թ. 8—9. էջ 258—267, և
էջ 185։— Մշակ 1898, Թ. 58, 107։— Փէթթէր, Lit. Rdsch. f. d.
Kath. D. 1900, p. 201 f.

III.

ՀԱՄԱՌՕՏ ՑՈՒՑԱԿ

ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՏԵՔՍՏԵՐԻ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ:

(ՑՈՅՑ ՏՐՈՒԱԾ ԷՋԵՐԸ ՅԱՌԱՋԱԲԱՆԻՆՆ ԵՆ).

t Խոր. Առաջին տպագր., Ամստերդամ, 1695. էջ ը:
w Խոր. Երկրորդ տպագր. Վիստոնեան եղբայրների, Լոնդոն, 1736. էջ դ:
*w*¹ Երկրորդ տպագր. մէջ բերուած ձեռագրական ընթերցուածները ըստ Թովմայ Վանանդացու. էջ դ:
Վ Եօթներորդ եւ Ութերորդ տպագրութիւնները, Վենետիկ, 1843 եւ 1865, եւ սրանցից արտատպուած Իններորդ եւ Տասնումէկերորդ տպագրութիւնները, Թիֆլիս, 1881 եւ 1910. էջ է, ը, իր:
Վ *Վ*², *Վ*³, *ՎՎ* Եօթներորդ եւ Ութերորդ տպագրութիւնների մէջ՝ 1, 2, 3 եւ բոլոր ձեռագիրներից բերուած ընթերցուածները. էջ ե:
x Տասներորդ տպագրութիւն, Վենետիկ, 1881. էջ զ:
*կ*¹ Կարենեանցի Բաղդասուրեան առաջին Ձեռագիրը, № 1379 էջմ. հիմն. մաս., գրուած 1624 թ. էջ իր.
*կ*² Կարենեանցի Բաղդասուրեան երկրորդ Ձեռագիրը, գրուած 1694 թ. էջ է.
Ա Ամստերդամի խմբին պատկանող Ձ-ներ, որ են
a էջմ. Ձ-իր № 1671 հիմն. մաս., գրուած 1687 թ. էջ ժը:
b էջմ. Ձ-իր № 1672 հիմն. մաս., գրուած 1666 թ. էջ ժզ:
c էջմ. Ձ-իր № 1665 հիմն. մաս., գրուած 1691 թ. էջ ժդ:
d էջմ. Ձ-իր № 1669 հիմն. մաս., գրուած 1680 թ. էջ ժդ:
e էջմ. Ձ-իր № 1686 հիմն. մաս., գրուած 1675 թ. էջ ժդ:
f էջմ. Ձ-իր № 616 հիմն. մաս., գրուած ? թ. էջ ժե:
Լ Լայպցիգի Քաղ. Մատենադար. Ձ-իր, գրուած 1696 թ. էջ ժե:
Տ Տպագրի խմբին պատկանող Ձ-ներ, որ են
n էջմ. Ձ-իր № 611 հիմն. մաս., գրուած 1672 թ. էջ ժե:
o էջմ. Ձ-իր № 1664 հիմն. մաս., գրուած 1699 թ. էջ ժզ:
p էջմ. Ձ-իր № 1666 հիմն. մաս., գրուած 1690 թ. էջ ժզ:
q էջմ. Ձ-իր № 1667 հիմն. մաս., գրուած 1641 թ. էջ ժզ:
r էջմ. Ձ-իր № 1662 հիմն. մաս., գրուած ? թ. էջ ժէ:
s էջմ. Ձ-իր № 615 հիմն. մաս., գրուած ? թ. էջ ժէ:
Խ Խառնուրդ խմբին պատկանող Ձ-ներ, որ են
g էջմ. Ձ-իր № 1663 հիմն. մաս., գրուած 1639 թ. էջ ժէ:
h էջմ. Ձ-իր № 248 հիմն. մաս., գրուած 1663 թ. էջ ժը:
i էջմ. Ձ-իր № 1668 հիմն. մաս., գրուած 1668 թ. ? էջ ժը:
k էջմ. Ձ-իր № 1035 հիմն. մաս., գրուած ԺԷ դարում. էջ ժը:
l էջմ. Ձ-իր № 249 հիմն. մաս., մայր Խառն խմբին պատկանող բոլոր Ձ-ների. էջ ժը:
lա *Մ*ի հին մասը, համապատասխան Ա խմբին. գրուած ԺԴ – ԺԴ դարում. էջ ժը:
lտ *Մ*ի նորոգուած մասը, համապատասխան Տ խմբին, 1567 թուից. էջ ժը:
m էջմ. Ձ-իր № 1661 հիմն. մաս., գրուած 1676—8 թ. էջ իա:
y Ձեռագիր **Կ. Եզեանցի**, գրուած 1668 թ. էջ իզ:
Հ Արքամարի Ձ-իր, գրուած ? թ. էջ իզ:
z Ձ-իր Ճեմարանի արեւելեան լեզուաց ի Պետերբուրգ. գրուած 1668 թ. էջ իզ:

Բացի այս տառանիշներից եւ Ս. գրքի անունների համառօտագրութիւններից՝ գործ են ածուած. **Եւս**(եբիոս Կեսարացու) **Ժամ**(անակագրութիւն), **Սոկրատ** (եկեղեցական պատմութիւն), **Փաւստ**(ոս Բիւզանդ). **Նոր**(ին). **Դ.**(ագր) **Փարպ**(եցի). **Արիստ**(ակէս) **Լաստ**(իվերտցի). **Բառգ**(իրք) **Հայկ**(ազեան լեզուի). **Նոր**(այր) **Բիւզ**(անդացի), Հայկական Բառաքննութիւն եւ Քննաւէր Ա. եւ Բ. պրակ. **Арм**(янскіе) **Арш**(акиды) Գր. Խալաթեանցի, մասն Բ. եւյն.

Միւս համառօտագրութիւնների մասին տե՛ս յառաջաբան, էջ խե:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅԵՐԻՍ ՀԱՏՈՒԱԾՍ

ԱՍԱՑԵԱԼ

ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑՒՈՅ

Ի ԽՆԴՐՈՅ ՍԱՀԱԿԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆՒՈՅ

ՑԱՆԿՔ ԱՌԱՋԻՆ ԳՐՈՑ

Ա. Պատասխանի թղթոյն Սահակայ, և խոստումն կատարել զհայցուածս նորա։

Բ. Թէ ընդէր, վասն զի Քաղդէացւոց և Ասորեստանեայց մատենից ցանկագոյն են մեր իրք, ի յունականէն կամեցաք մեք ցուցանել։

Գ. Յաղագս անիմաստասէր բարուց առաջնոցն մերոց Թագաւորաց և իշխանաց։

Դ. Յաղագս զի ոչ սակս Ադամայ և այլոց նահապետացն միաբանեցան այլքն ի պատմագրաց։

1 c հարց, փխ. հայոց
2 o երիս / bcef հատածս
4 bcdeo մովսէսի / bc խորենացւոյ
5 c սահակա / bceo բագրատունոյ
1-5 Sᴍa չիք. (o ցանկից յետոյ երեսի սակին ունի նոյնը) / Վx փխ. այս վերնագրի ունին «սրբոյ հօրն մերոյ [x չիք սրբոյ հօրն մերոյ] մովսէսի խորենացւոյ պատմութիւն հայոց»։
6 anpqrstw Առաջին գրքի ցանկ չունին / a ետը բողած է / p ցանկի համար բողած երեսում ունի միայն. մովսէսի *խորենացոյ յաղագս մերոյս յիշեցրանն յայսմ բանիցս ի սահակայ բակրատունոյ խնդ՚՚լ
6 կ¹կ²վ ցանկեր չունին բաղդասած։
6 befi ցանկ / y ցանգ
6 bcdef չիք գրոց
6 h ցանկք առաջին դպրութեան պատմութեան հայոց ի մովսիսէ խորենացւոյ
6 bcdefo առաջին գլխի վերնագրից առաջ ունին սկիզբն ճառից
7 Sᴍ [բացի o-ից] առաջին գլխի վերնագրի փոխանակ ունին. «յաղագս մերոյս [gk մերոյ] յիշեցրանն յայսմ բանիցս սահակայ բագրատունւոյ խնդալ [Հh խնդրեալ, m խնդալ, ջնջած է խնդրեալ]
7 o խոկումն, փխ. խոստումն
9 Sᴍ ի [o չիք ի] քաղդէացւոց [l քաղթէացւոց]
bg ի քաղդէացոց / c ի քաղդէացոցն
9 Sᴍ յասորեստանեաց [g յասորեստանեայց, Հo ասորեստանեայց]
10 Հbdefl յանկագոյն / cy յանգագոյն / o յանկագոյնք / Թէրեւս յաւագոյն ի քաղդէացւոց և յասորեստանեայց մատենից յանկագոյն։ Ա. Մ.
10 bef չիք են
10 o և ի յունականէն կամեցեալ
10 Հbcdefo չիք մեք
11 cf չիք յաղագս
11 bde առաջնոց / o առաջին
11 bdeo Թագաւորացն [o Թագաւորաց] մերոց / cf Թագաւորացն մերոց առաջնոց
11 f չիք և
13 bcdefo միաբանեն
14 Sacf այլք [o այլքն]
14 cf պատմագրացն

Ե. Յաղագս հաւաստր գալոյ ազգաբանութեան երից որդւոցն Նոյի
ցԱբրահամ և ցՆինոս և ցԱրամ. և թէ Նինոս ոչ է Բէլ և ոչ որդի
Բելայ։
Զ. Յաղագս թէ է ինչ՝ որ հաւաստր, և է ինչ՝ որ օտար ի Մովսիսէ
պատմեն այլքն հնախօսք. և յաղագս Ողոմպիոդորայ փիլիսոփայի
անգիր հին զրուցացն։
Է. Յայտարարութիւն սակաւուք, թէ ըստ արտաքնոցն ասացեալ Բէլդ՝
ըստ աստուածային բանից հշմարտութեամբ է Նեբրովթ։
ըստ աստուածային բանից հշմարտութեամբ է Նեբրովթ։
Ը. Թէ ով կամ ուստի գայսպիսիս եգիտ զրուցաբանութիւնս։
Թ. Թուղթ Վաղարշակայ արքայի Հայոց առ մեծն Արշակ արքայ Պարսից։
Ժ. Յաղագս ապստամբութեանն Հայկայ։
ԺԱ. Յաղագս պատերազմին և մահուանն Բելայ։
ԺԲ. Յաղագս որ ի Հայկայ ազգք և ծնունդք, և թէ զինչ իւրաքանչիւր
ոք ի նոցանէ գործեաց։
ԺԳ. Յաղագս ընդ արևելեայս պատերազմին և յաղթութեանն, և մահ-
ուանն Նիւքարն Մադեսայ։
ԺԴ. Յաղագս ընդ Ասորեստանեայս կռուոյն և յաղթութեանն, և Պայա-
պայն Քաաղեայն, և Կեսարու, և առաջին և այլոց անուանեալ Հայոց։
ԺԵ. Յաղագս Արայի և մահուան նորա պատերազմաւ ի Շամիրամայ։
ԺԶ. Թէ որպէս յետ մահուանն Արայի Շամիրամ շինէ զքաղաքն և զամ-
բարտակ գետոյն և զիւր տունն։
ԺԷ. Յաղագս Շամիրամայ, թէ էր աղագաւ կոտորեաց զորդիս իւր, և
թէ որպէս փախստական լինի ի Զրադաշտէ մոգէ ի Հայս և մե-
ռանի ի Նինուասայ որդւոյ իւրմէ։

1 kl գալոց / ƀcdefo գոլոյ, փխ. գալոյ
1 Հgk որդւոց
2 Տպ ցաբրաամ [o մինչև ցաբրաամ]
2 Տպ եթէ [o թէ]
2 c չիք նինոս (ոչ է)
2 Տպd ոչ բէլ [o ոչ է բէլ]
3 e բելայ / միւսն. բէլայ
4 Տպ է [io է ինչ] որ օտար
4 ce ի մովսէսէ
12 Ա. զանկառկածելի, փխ. զանկարելի
13 Ա. լսելեաց / ors լսողացն
13 Ա. արժանաւորս
14 Խվ^2 ի կենացն դեղ
14 a ողիմպիադայ / defnopqrs ողոմպիադայ / Խ ուլումպիադայ [Հl ուղումպիադայ] / միաւն. ողոմպիադայ
14 abcde կնոջ
15 ԱԽվ^2 ի կենցաղոյս, փխ. ի կենաց
15 Հdefgopq տիկնութեան
15 a սոյնպէս
16 f տայ սպանանել արշակայ
16 Խ չիք և
16 S կարգեալ [nor կարգել]
17 c զանտիոս զիւր հայրն
17 abde զանտիոքոս / fpqrs զանտիոս
19 Խ տիրիթայ / f տիրիթայ բստ անիծից Ներսէսի
20 k չիք եղև / b ի շապհոյ ի
20 Հkl և, փխ. ի
20 Հkl ազգացն

Արշակ, վասն ոչ նմա, այլ կայսեր հարկելոյ զայնքան ամս։ Սակս որոյ առաքէ առ նա Արշակ զՏիրիթ և զնորին սիրեցեալն Վարդան արժանի պատարագօք՝ խնդրել զհաշտութիւն։ Բայց վասն զի քինախնդիր անցելոցն մարտից կամեցաւ լինել Շապուհ՝ ինքն ելանէ պատերազմել ընդ Յոյնս, որոյ աղագաւ խնդրէ զԱրշակ մեր թագաւոր հանդերձ ամենայն զօրօքն Հայոց ընդ իւր լինել։ Իսկ Արշակ ոչ կամեցաւ իւրովի երթալ, այլ բարուրս եդեալ՝ զոյգն զունդ առաքէ զկնի Շապհոյ։

Եւ իւր բարկացեալ Տիրիթայ՝ ընկենու զնա ի պատուոյն, որպէս զի թէ ի նորա հրապուրանաց եղև այն, յաղագս ատելութեանն զոր ունէր առ Յոյնս։ Եւ առաւել ևս գրգռէր զարքայ Վասակ զինակիր նորա, նախանձ պահելով ընդ եղբօրն վասն աղջկան միոջ հարճի։ Վասն որոյ նախատեաց զնոսա արքայ ամօթալի բանիւք և կսկծեցուցանողօք։ Որոց ոչ կարացեալ այնպիսի վատթարութեան և պարսաւանաց տանել՝ դէմ եդեալ գնացին առ Շապուհ հատուած։ Ընդ որ առաւել ևս զայրագնեալ Արշակ՝ հրամայէ նոյն Վասակայ զհետ նոցա կրթել բազմաձեռն գնդաւ, զի ուր և հասցէ՝ սպանցէ զնոսա. զոր ոչ հեղգացաւ կատարել Վասակ, թէպէտ և եղբայր նորա էր Վարդան։ Եւ խնդրեցաւ անպարտ արիւնն Գնելայ յամբարշտէն Տիրիթայ ըստ անիծիցն Ներսէսի, և ի Վարդանայ, ի հարազատ եղբօրէ իւրմէ մեռանել։

1 f կայսեր այլ
1 prs զայսքան
2 o չիք առ նա / c չիք նա
2 gk արշակ առ նա / Հ չիք արշակ
2 ՏԽ զնորուն / n զվարդան
2 Վopqrs արժան
3 ԽՎ² զխաղաղութիւն [k զհաղաղութիւն], փխ. զհաշտութիւն
3 bcdef քանզի, փխ. վասն զի
4 Ա անցելոց / nopqrs անցուցելոցն / Հk անցանելոցն
4 ԱՏk կամեցեալ
4 e լինիլ / c չիք լինել
5 c ընդ յունս / b յաղագաւ
5 de ամենա
6 ՏԽ զօրօք / Ա չիք հայոց
6 de լինիլ / bo կամեցեալ
7 k բարուս
7 Ա առաքէ զոյգն զունդ
8 gl տիրթայ / Խ չիք զնա
9 Հgk չիք ի (նորա) / d ի նորին
9 Տ հրապուրանացն
9 Հgops ատելութեան
10 bcdef գրգռէ / c զարքայն
10 c չիք վասակ / l զինկիր
11 k աղջական / Կ²bcdef միոյ
12 a անարգեաց, փխ. նախատեաց
12 ԱՀk ամօթալեօք / gl ամօթալեաք
12 ՏԽ որում [g յորում]
13 p այսպիսի
13 ԱԽ տանել այնպիսում [d այսպիսում] վատթարութեան և պարսաւանաց
14 Խc չիք ևս
15 Ա չիք նոցա / e կրթէր
16 a չիք զի ուր
16 glpq և ուր և / k և ուր հասցէ
16 f չիք սպանցէ
16 ԽՎ² հեղգացեալ կատարէ
17 Տ եղբայր էր նորա
17 ԱԽ արիւն [l արեն] անպարտ [kl անպարտի]
17 opqrs չիք անպարտ
18 Վmn գնէլայ / x գնելայ / ԱԽopqrs չիք գնելայ
18 Խ չիք յամբարշտէն
18 Ա ի տիրիթայ [a տիրիթէ] ամբարշտէ
18 gl ի տիրթայ
18 Խc ըստ անիծից
18 Հabcde ներսէսի / g ներսեսի
18 ԱԽ չիք ի (վարդանայ)
18 gk վարդան
19 ors չիք ի (հարազատ)
19 pq չիք իւրմէ
19 ԱԽ ի հարազատէն իւրմէ [abdef չիք իւրմէ] մեռանել յեղբօրէ [Խ եղբօրէ]

ԻԶ

Պարտումն Շապհոյ ի Տիգրանակերտի:

Իսկ Շապուհ գայ հասանէ ի Տիգրանակերտ մեր քաղաք։ Կան ընդդէմ նորա արք քաղաքին հանդերձ գումարտակ գնդաւ. քանզի Անտիոք նախապետ Սիւնեաց, որ էր աներ Արշակայ և վերակացու քաղաքին, հրամայեաց աղխել ընդդէմ Շապհոյ։ Եւ ոչ միայն զմուտն արգել, այլ և ոչ հրեշտակս առաքեաց առ նա, և ոչ զնորայսն ընկալաւ։ Եւ հզօր կռուոյ եղելոյ՝ զբազումս ի Պարսիցն սպանանեն. և ի պարտութիւն մատնեալ գնդին Շապհոյ, դառնայ անդրէն ի Մծբին. և հանգիստ առեալ զօրացն և արծարծեալ յաշխատութենէն, խնդրէր առնուլ զՏիգրանակերտ. և ոչ թողացուցին նմա յառաջախաղաց գունդք և լրտեսք՝ պատաղել զայնու, իբր թէ Յունացն խանգարեսցի գործ։ Եւ Շապհոյ յառաջ անցեալ՝ գրէ առ նոսա թուղթ օրինակ զայս.—

Թուղթ Շապհոյ ի Տիգրանակերտ:

«Մազդեզանց քաջ Շապուհ արքայից արքայ. Տիգրանակերտեայց, որք ոչ ևս էք անուանեալք ի մէջ Արեաց և Անարեաց։

«Ես կամէի ի ձէնջ սկսեալ յամենայն առաջիկայ քաղաքս խաղաղութեամբ և քաջօրէն ազատութեամբ զմուտն առնել. և եթէ դուք Տիգրանակերտեայք, որ առաջին էք, ոչ շահատակութեամբ ասեմ, այլ

2 c ի տիգրանակերտէ
3 ԱԽ այլ, փխ. իսկ
3 d չիք գայ / n հասանի
3 h գան, փխ. կան
4 Ա քաղաքացիքն, փխ. արք քաղաքին
4 ՏԽ գումարտ [o գումարտակ] / Վ գումար
4 Աy գնդաւն
5 Կ^{2}abcf անտիոս / de անտիոքոս / opqrs անդ էր, փխ. անտիոք
5 ԱԽ աներ էր
6 y չիք քաղաքին
6 Ա չիք զմուտն
7 opqrs չիք արգել / o չիք այլ
7 Հgky չիք առաքեաց
7 Տ զնորայն
7 ԽՎ^{2} զնորայսն [Հ զնորայնս, Վ^{2} զնորայն] առաքեալս պատուեաց և ընկալաւ
8 ԽՎ^{2} կռիւ
8 opqrs ի պարսից
8 d սպանանէին / ՏԽ սպանին
9 c շապհու / b անդէն
9 ly ի մծմին / k ի մծմի
10 b ի զօրացն / ՏԽ չիք զօրացն
11 ՏԽ ոչ թողացուցին [Հgk թուլացուցին] յառաջախաղաց գունդք և լրտեսք պատաղել նմա զայնու
11 f թուղացուցին / abdew թուլացուցին
11 Վ^{2}gky յառաջախաղ
11 p գունդ
12 Տ իբրու [o իբր]
12 Աrs յունաց
12 Խ խանգարիցի / Ա հանդարտիցի [c հանդարտից], փխ. խանգարեսցի
14 Ա չիք վերնագիր / Խtw չիք թուղթ
15 Հkl մազդեզաց
15 Ա տիգրանակերտեցեաց [c տիգրանակերտացեաց] / Վgkm տիգրանակերտեաց / Վ^{2}nopqrsx տիգրանակերտաց
17 k և, փխ. ես / o սկսել
17 Հlnop յառաջիկայ
17 g քաղաքէն
18 o զմուտ
18 pqrs եթ, փխ. եթէ
19 Խc որք / Խ չիք էք
19 l շահատակութեամբ (լուս. շահատակութեան) / ky շահատակութեան / abcef շահաստանութեամբ, փխ. շահատակութեամբ

ի մօտէ ուղևորութեանս, ընդդէմ կացէք ինձ՝ ի ձէնջ ուսցին և այլք զդոյն առնել։ Այլ ի դարձին իմում բարկութեամբ այնպէս վանեցից զձեզ, զի կրկին եղիջիք օրինակ խեռեալ ստահակելոց»։

ԻԷ

Երէ ո՛րպէս Արշակաւան շինեցաւ եւ կոտորեցաւ, եւ առաւ Անի։

Բայց Արշակ ես ժպրհեցաւ առնել գործ անմտութեան։ Ի թիկանց կուսէ լերինն Մասեաց շինեաց ձեռակերտ, ժողով մարդկան մեղաւորաց. և ետ հրաման, որ ոք անկեալ անդր բնակեսցէ՝ մի լիցի ի վերայ նորա իրաւունք դատաստանի։ Եւ նոյն ժամայն ծովացեալ լցաւ մարդկութեամբ հովիտն ամենայն. քանզի աւանդառուք և պարտականք, և ծառայք և մնասակարք, և գողք և սպանողք, և կնահանք և այլք այսպիսիք փախուցեալք անդր անկանէին, և ոչ կայր նոցա այց և խնդիր։ Եւ բազում անգամ բողոքեալ նախարարացն՝ և ոչ ինչ լուաւ նոցա Արշակ. մինչև առ Շապուհ ես ունել նոցա բողոք։ Եւ եղև ի դառնալն Շապհոյ ի Յունաց՝ առաքեաց զմի ի սպարապետաց իւրոց և հայ զունդ ընդ նմա, եթէ դէպ լինի, ունել զԱրշակ. և նա խոյս ետ ի նոցանէ զկողմամբք Կաւկասու, Վրաց միաբանելով։

Իսկ սպարապետն Պարսից եկեալ ի Հայս՝ ի ձեռնտու լինելոյ նախարարացն առնու զամուրն Անի, և գերէ զամենայն գանձս արքունի որ ի նմա, այլ և զոսկերս Թագաւորացն. ոչ գիտեմ, թէ վասն նախատի՞նս առնելոյ Արշակայ, եթէ վասն հմայից ինչ հեթանոսականաց։ Զոր ապա մաղթեալ նախարարացն՝ թափեալ թաղեցին յաւանին յԱղցս, որ

1 Հ ուղևորութեան
2 k զդոյզն, փխ զդոյն
2 bde իմում / միւսն. մերում
2 def այնպէս վանեցից զձեզ բարկութեամբ
3 q չիք զի կրկին—ստահակելոց
3 g կր(կ)ին և ; Խv² ի խեռել
3 ՎԽmq ստահակելոցն / rs ստահակաց
5 ՏԽ թէ
5 c կոտորեց և առումն աւանին, փխ. կոտորեցաւ և առաւ անի
6 rs զգործ
7 d չիք կուսէ / Խo չիք լերինն
7 Ա շինէ / oprs շինել
8 ԱՀgk չիք և
8 ԱԽ բնակիցէ
9 Խ լցաւ ծովացեալ
10 Խ ովիտն. չիք ամենայն
11 p մնասականք / v մնասարք
11 pqrs այլ / d այնպիսիք
12 c անդ
13 p ի նախարարացն
13 ԱԽ չիք և / opqrs չիք ինչ
13 Խ չիք նոցա
14 Հ չիք ունել
14 c եղեն / Հgl չիք եղև
14 c չիք շապհոյ
15 Խ առաքէ
15 co չիք ի (սպարապետաց)
15 a զունդն / ԱՏ թէ
15 cde պէտ, փխ. դէպ
16 abcfopqrs լինել / c լինիլ
16 d չիք զարշակ
16 Հabde կովկասայ / cgfln կովկասու / o կովկասոյ / pqrs կաւկասոյ
18 Ա եկեալ, փխ. եկեալ
18 p լինել
19 y յանի, փխ. անի
20 Խ չիք որ ի նմա
20 gk ոսկերքս / Հ զոսկերքս
20 Խ եթէ / a նախատինք
21 Վmo և թէ / Խnpqrs և եթէ / bd թէ
21 kp չիք վասն / Ա չիք ինչ
22 c նախարարաց
22 ab թափեն / bcf թափեն և / detw թափեցին և
22 a չիք թաղեցին
22 d յաւանի / o չիք յաւանին

յոտին Արագած կոչեցեալ լերինն։ Քանզի ոչ գիտացին ընտրել զօսկերս հեթանոսաց և հաւատացելոց, զի ընդ միմեանս էր խառնակեալ գերողացն, յաղագս այնր ոչ արժանի համարեցան ի գիրս սրբոցն թաղել ի Վաղարշապատ քաղաքի։

Եւ նախարարացն Հայոց ժողովեալ՝ դիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Արշակաւանի, և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին, բայց ի տղայոց սանդիացաց. քանզի դառնացեալք էին իւրաքանչիւր ի վերայ ծառայից իւրեանց և յանցաւորաց։ Զօր թէպէտ և վաղ գիտացեալ մեծին Ներսէսի՝ ոչ յառաջ քան զկոտորելն ժամանեաց հասանել. այլ ի կատար գործոյն հասեալ՝ եգիտ բաժանեալ զողջս կոտորելոցն, զի վարեսցեն ի գերութիւն որպէս զհեռաւոր թշնամեաց։ Զորս թափեալ մեծին Ներսէսի, հրամայեաց կրել որթովք ի զոմ մի, և զարմանս և մնուցօղս նոցին կարգեաց. որք յետոյ աւանացեալ անուանեցան Որթք այնորիկ աղագաւ։

ԻԸ

Առումն Տիգրանակերտի եւ բնաբարձ քանդումն։

Իսկ Շապուհ եկեալ ի Տիգրանակերտ, դարձեալ աղխեցին ընդդիմանալ նմա. և ելեալ ի պարիսպն աղաղակէին. «Գնա ի մէնջ, Շապուհ, զի մի չարիս յերկրորդումս ընդ քեզ առաւել ևս քան զառաջինն անցուցանիցեմք պատերազմաւ»։ Եւ նա պատասխանեաց. «Ո՞վ քաջքդ ի Հայոց, որք զանձինս արգելեալ փակեցէք ընդ պարսպօքդ Տիգրա-

1 Ա յոտինն
1 abce արագածն / Աk լերին
1 i կարացին, փխ. գիտացին
2 Ա հեթանոսացն
2 ԱՀgl հաւատացելոցն
2 Խ չիք զի ընդ—գերողացն
2 b խառնեալ
6 a արշականի / Հgk արշակաւանին / l արշակաւանու / Տ արշակաւանայ / x արշակաւանայ
7 abdefglno բաց ի
7 Խվabdef սանդիացեաց / c սանդիացոց / o սանինդիոց / n սանտուացաց / Վpqrs սանդիացայց / վ սանդուացաց
7 Ա դառնացեալ
7 detw չիք իւրաքանչիւր
8 Տg իւրոց, փխ. իւրեանց
8 Ա չիք և (վաղ)
9 Աgy ներսէսի
10 opqrs գործոցն / ՏԽ չիք հասեալ
11 k վերաացեն / Ա ի գերութեան
12 Տ զօր / Խ զօր և
12 Աoprs ներսէսի / k ներսէս
12 Ա հրամայէ
12 c որդովք, f որդւովք, փխ. որթովք
12 Խ որդւովք [k որթովք] կրել ի զոմս մի և զարմանս և նոցուն մնուցօղս [Հ չիք մնուցօղս] կարգեաց
13 pqrs զարման
13 b չիք և / o մնուցանող
13 ԱՏ կարգեալ
13 Խ աւանացեալք / tw անուանեցեալք
14 abcfly որդք, o որդքն, Հgq որդիք, փխ. որթք
16 f չիք բնաբարձ
16 Խ քանդումն ի շապհոյ պարսից արքայէ
17 Խ ընդդիմանալով
18 ՏԽ չիք նմա
18 Խվ եկեալ, փխ. ելեալ
18 k ի մէջ, փխ. ի մէնջ
19 Խվ²opqrs չարես, փխ. չարիս
19 opqrs չիք ընդ քեզ / Խ չիք ևս
20 dq անցուցանիմք / cgk քաջդ
21 o փակեցիք / Ա պահէք, Խվ² պահեցէք, փխ. փակեցէք
21 ԱԽ ընդ պարսպօք [b պարսպովք, Խ պարսպաւդ] տիգրանակերտի / Տ ընդ տիգրանակերտի պարսպովքդ։ Հմմտ. Арм. Арш. II, 93։

նակերտի և արտաքս ձայն արկանէք սպառնալեաց. զի քաջ արանց է յարձակ դաշտի և յագատ տեղւոջ կռուել, և կանանց գործ է արգելուլ փակել զինքեանս յերկիւղէ առ հանդերձեալ կռուան»։ Եւ զայս առացեալ՝ դարձաւ առ գերեալ Յոյնան զինուորս, ասէ. «Եթէ ձերով մարտիւ առից զայս քաղաք՝ զամենեսեան զձեզ արարից ազատս հանդերձ ընտանեօք ձերովք»։ Եւ պարսկական զօրուն շուրջ զքաղաքաւն հրամայեաց ընթանալ, և նետիւք խոցոտել զ՚ի վերայ պարսպին։

Եւ Յունացն մատուցեալ մեծաւ բռնութեամբ յեցուցին ի պարիսպն զկոչեցեալ էշսն։ Եւ է այս գործի մեքենայից անուաւոր, յերից երից արանց մղելով տարեալ, և ի ներքուստ կացնովք և սակրօք երկբերանովք և կոցաւոր մրճովք՝ փորել զհիմունսն։ Եւ նզախարխար արարեալ զայն, որ ի հայկազնոյն Տիգրանայ հօծեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին. և հուր ի դրունսն և յամենայն կողմանսն վառեալ, և քարինք և նետք և տէգք արձակեալք լինէին, և խոցոտեալ մերքն յապուշ դառնային։ Եւ ի ներքս մտեալ բոլոր զօրքն՝ և ձեռն պարսկական ոչ վատտակէր զբազմախողխող երկաթն արեամբ արբուցանել, մինչև ապաժոյժ սպանելոցն լցեալ ի հիմունսն ծաւալէր։ Այլ յունականն ձեռն ի քթթել ական հրձիգ առնէր զամենայն փայտակերտսն։ Եւ Շապհոյ զմնացեալսն ի կոտորածէն գերեալ՝ չուէ ի Պարսս. և հրեշտակս առ որ ի Հայս գունդք առաքեալ՝ անպայազատ զՄիւնեացն հրամայէ առնել զառնմ։

1 Ա արանց է յընդարձակ և ի դաշտի [f դաշտ] կռուել / Խվ^{2} արանց է յագատ և յընդարձակ դաշտի կռուել
2 k չիք և (կանանց)
2 gky արգելով / Հ արգելլով / opqrs յարգելուլ
3 Հ չիք փակել / Ա կռուն
4 ԱԽվ^{2} առ յոյնան գերեալ [a գերեալսն] զինուորս [Խվ^{2} զինուորսն]
4 acdef թէ
4 klվ մարտկիւ, փխ. մարտիւ
5 ԱԽ զքաղաքս զայս [Ա չիք զայս]
6 opqrs չիք ձերովք / a զօրաւն
7 a ի վերայ
8 Հ չիք և / Հgk յունաց
8 Հg մարտուցեալ
8 Ա չիք մեծաւ / Խ յեցուցանէին
9 Ա չիք է
9 o երից երից / pqrs երից յերից
10 Խ մարդոց [y մարդաց], փխ. արանց
10 Աgk չիք և (ի ներքուստ)
10 Հgl կացնօք / Ա չիք կացնովք
10 Ա սակրովք [a սակրով, Կ^{2}Ն ակրովք] և երկբերանովք
10 glno երկբերանօք
11 c կռուցաւոր / d կացնաւոր
11 cglnopqs մրճաւք կամ մրճօք
11 Ա փորելով / Խ փորեալ
11 c հիմունսն / p զհիմունս
11 Ա նզահարս / k նկախարխ / prs նզախարխ / վ նզախարոխ
12 վpqrs հիմունքն, փխ. որմունքն
13 ԱԽվ^{2} և հուր [ab հուրս] ի դրունսն վառեալ և յամենայն կողմանց հուր և քարինք / opqrs կողմունսն
14 c տիգք
14 Ա ձգեալ / Sk յարձակեալ
14 gl մերկքն, Հ մերկք, փխ. մերք
14 k յապօղ, փխ. յապուշ
15 a յանայլին, փխ. յապուշ դառնային
15 e չիք մտեալ / ԱԽ զօրն
16 Ա զօրէր, փխ. վատտակէր
16 Կ^{2}bedef բազմախողխող / pqrs զբազմարոխ / o զբազմամրոխ
16 Ա ապաժոյժ [a ապայոյժ] արիւն սպանելոցն / k սպանանելոցն
17 Կ^{2}detw ի հիմունս
17 Խվ^{2} անցուցանէր, փխ. ծաւալէր
17 a ձեռքն / o ձեռք / dep ձեռ
18 Ա հրձիգ զամենայն երկիրն առնէր զփայտակերտսն / Խ հրձիգ զամենայն [l զամենայնն] առնէր զփայտակերտսն / pqrs փայտակերտ
18 c չիք և Շապհոյ զմնացեալսն
18 abdefy շապուհ
19 Ա զառնայ, փխ. չուէ
20 Խ գունդ / Ա գունդք էին
20 abdeftw ապա ազատ / c ապազատ
20 Խ առնմն հրամայէ առնել
20 abce տռնմս / d զառնմս / f զառնմն

ԻԹ

Յաղագս պատերազմին Արշակայ ընդ նախարարս իւր, եւ վտարանդի երթալոյն Պապայ ի Բիւզանդիոն:

Դարձեալ յարեաւ խռովութիւն Շապհոյ ի նոյն ազգաց, և խաղաղութիւնն ի Յոյնս շրջեցաւ, բատ այնմ՝ թէ փոխարկեալ միմեանց փոխարինին. սոցա խաղաղութիւն ի նոցա խռովութեանն, և նոցա խաղաղութիւն ի սոցա խռովութեանն, որ վախճան միոյն՝ միւսոյն լինին սկզբունք: Քանզի հիւանդացեալ Վաղենտիանու ի բերդին որ կոչի Բերգիտիոն՝ վճարի ի կենցաղոյս, եղբօրն փոխանորդելով զաէրութիւնն՝ Վաղեսի. յետ բարեբախտագոյն պատերազմաւ Գոթացն յաղթութեամբ դարձի, նոյն հետայն առաքէ զօրս ի Միջագետս ի Հայս, յաղագս տուելոյ զօրուն յօգնութիւն Շապհոյ:

Բայց Արշակայ եկեալ Վրացի գնդաւ՝ ժողովէ զսակաւս և յիւր մտերմաց, և տայ պատերազմ ընդ նախարարսն ընդ այնոսիկ, խնդրելով զվրէժ ձեռակերտին իւրոյ Արշակաւանու: Միաբանեալ և նոցա առաջնորդութեամբ Ներսեհի որդւոյ Կամսարայ, ընդդիմանան Արշակայ պատերազմաւ: Եւ հզօր *մարտի եղելոյ՝ բազումք յերկաքանչիւրոց

1 k Լ, փխ. ԻԹ.
2 c վարանդի
2 f և Ներսէսի արարեալ զխաղաղութիւն երթայ ի բիւզանդ, փխ. և վտարանդի երթալոյն պապայ ի բիւզանդիոն
3 Տ Խ երթալոյ
3 y պապ / abcde չիք պապայ
3 c չիք ի (բիւզանդիոն)
3 ab ի բիւզանդիոնն
4 abcdgopqrs խաղաղութիւն
5 Կ^{2}abcefiw չիք բատ այնմ—փոխարինին (s. 6)
5 ԽՎ^{2}d փոխարկեալս / opqrs փոխարկել
5 ԽՎ^{2} ի միմեանց
6 c ի սոցա խաղաղութիւն
6 abcfkly խռովութեան / Հdegiw խռովութիւն
6 bcefiw և նոցա խռովութիւն ի սոցա խաղաղութեան / d չիք և նոցա—խռովութեանն (s. 7)
7 agky խռովութեան / Հl խռովութիւն
7 ԱԽԿ^{1}Վ^{2} որզան [Հak որ զանվախճան, g որ զ(ան)վախճան], փխ. որ վախճան
8 c լինի / n լինէին
8 Վ^{2}l սկզբմունք
8 Աl վաղենտիանոս / Տk վաղենդիանու / iw վաղենտինեանոս
9 Ա բերգիտոն / pqrs բերգիտիոն / k ի բերգիտիոն
9 ԱԽ վճարեցաւ
9 p փոխանորդելով եղբօրն
9 Խ փոխանորդելոյ
9 ԱՏ զաէրութիւնն յետ բարեբախտագոյն վաղեսի [a վաղենտին, def վաղէսի] պատերազմաւ / fg զաէրութիւն
10 Հgk բարեբախտագնոյ
10 Հg գդացն / lnopqrs գնդացն / y գդացն / Վl գնդացն կամ գոթացն
11 Ա դարձին / ԱՏg և նոյն
11 Ա սոյն հետայն / gk ի նոյն հետեան / l նոյն հետեայն
11 ԱՏ առաքեալ / Խabcde զօր
12 Տ յօգնականութիւն [p օգնականութիւն]: Հմմտ. Арм. Арш. II, 89 եւ 96:
13 k ի վրացի / Ա ժողովեալ
13 Հglp սակաւս / Խ չիք և
13 c իւր / Խ յիւրոց
14 c չիք տայ
14 d ընդ իւր նախարարսն
14 Խ պատերազմ ընդ այնոսիկ նախարարս
14 ԽՎmn խնդրել
15 ab վրէժ / Խ իւրոյ ձեռակերտին
15 y արշակաւանի
15 k ի նոցա, փխ. և նոցա
16 Տ կամսարու
17 e չիք և հզօր—կողմանցն անկան (եr. 292, s. 1)
17 Խabcdf յերկաքանչիւրոցն [b երկաքանչիւրոցն] անկան ի կողմանց [abdf կողմանցն]

կողմանցն անկան. քանզի արք դիպեալ արանց՝ ոչ ոք զպարտութիւն յանձն առնոյր: Եւ մինչ դեռ նոքա յայսմ էին, հասանեն և զօրքն կայսերականք: Ապա տեսեալ Արշակայ, թէ թշնամի են նորա Շապուհ և Վաղէս և իւր նախարարքն, տարակուսեալ յամենեցունց՝ յղէ առ մեծն Ներսէս բազում անգամ աղաչելով. խոստանայր դառնալ յամենայն ճանապարհաց չարաց, և լինել ըստ կամաց նորա, և ապաշխարել ի քուրձ և ի մոխիր. միայն զի նա եկեսցէ և արասցէ խաղաղութիւն, և թափեսցէ զնա ի ձեռաց հզօրացն Յունաց: Սապէս և ի նախարարացն ստէպ ստէպ զմիմեանց զկնի գային մաղթանք նորին աղագաւ. նա և եպիսկոպոսացն ժողովեալ՝ պաղատանս մատուցանէին, զի մի անփոյթ արասցէ զկորստեանէ իւրոյ վիճակին:

Ապա հաւանեալ մեծն Ներսէս՝ եկն ի մէջ նոցա, և արար խաղաղութիւն, լսելով նմա թագաւորին և նախարարացն, բայց ի նահապետէն Արծրունեաց Մեհրուժանայ և ի նորին քեռայնէ Վահանայ Մամիկոնենէ, որք անյոյս եղեալ՝ ապստամբեալ գնացին առ Շապուհ: Իսկ այլ ամենայն նախարարքն հաստատեցին ուխտ, զի յայնմ հետէ թագաւորն վարեսցի ուղղութեամբ, և նոքա ծառայեսցեն միամտութեամբ. և այս ի մէջ նոցա: Բայց և առ զօրսն Յունաց• երթեալ մեծին Ներսիսի, աղաչէր մի ինչ աշխարհիս մեղանչել, այլ առնուլ զհարկսն և զորդի Արշակայ զՊապ հանդերձ ամենայն նախարարացն որդւովք պատանդս, և դառնալ: Որում լսող եղեալ քաղցր և մեծն Թէոդոս զօրավար՝ դառնայ առ կայսր հանդերձ պատանդօքն, ընդ իւր տանելով զմեծն Ներսէս թղթով Արշակայ, որ ունէր օրինակ զայս.—

1 Տl և արք / p դիպեալք
2 detw չիք նոքա / opqrs յայնմ
2 Ա. չիք և (զօրքն)
2 Խcdef զօրք / Տ կայսերականն
3 pqrs արշակ
3 Ա. եթէ թշնամիք են
3 k չիք և վաղէս և իւր—ապստամբեալ գնացին առ շապուհ (s. 15)
4 ՏԽ յղէ [gl յղէր] բազում անգամ աղաչելով զմեծն Ներսէս
6 abdefprs չարեաց
7 p չիք և (լինել) / de լինել
8 opqrs չիք զնա
8 Չg զօրացն, փխ. հզօրացն
8 a սպալ, փխ. սապէս
8 g չիք ի (նախարարացն)
9 վl կնի, փխ. զկնի
9 Աg մաղթանքն
10 Ա. ժողով արարեալ, փխ. ժողովեալ
10 ՏԽ մի անփոյթ զկորստենէ իւրոյ վիճակին առնիցէ [Խ արասցէ]
11 a յիւրոյն / bcdtw իւրոյն
11 Ա. վիճակի
12 Աn մեծին
12 bdef Ներսէսի / c Ներսեսի / n Ներսիսի
13 abdefno բայց ի
14 ՏԽab մեհրուժանայ
14 p չիք և (ի նորին)
14 abefg չիք ի (նորին)
14 abdeftw քեռ առնէն
14 Ա. մամիկոնէի / nop մամիկոնէ
15 ao անյոյսք
15 Ա. չիք ապստամբեալ
15 ԱԽ նախարարքն ամենայն
16 gk ուխտս
17 Խ վարեսցի ուղղութեամբ թագաւորն
17 a չիք և նոքա—միամտութեամբ
18 Ա. չիք բայց / k չիք և (առ)
18 g երթալ
18 Ա. սրբոյն, փխ. մեծին
18 abdef Ներսէսի / c Ներսեսի
19 Ա. զհարկս / de զորդիս
20 de որդւով
21 Չg դառնայ, փխ. դառնալ
21 gk որում և լսող
21 Խ մեծին [Չ մեծի] *թէոդոսոսի զօրավարին [l զօրավարի]
21 Տ զօրավարն / d չիք զօրավար
21 opqrs դառնալ, փխ. դառնայ
22 ԱՏ առ կայսրն / Խ չիք հանդերձ
22 Ա. պատանդօքն հանդերձ
23 Խnpqrs չիք օրինակ

Թուղթ Արշակայ առ Վաղէս։

«Արշակ արքայ Հայոց մեծաց և ամենայն նախարարք Արամեան ազգիս. տեառն մերում Ինքնակալի Վաղեսի Աւգոստոսի և որդւոյ քում Գրատիանոսի խնդալ։

«Մի՛ դիցէ Ինքնակալդ ի մտի, եթէ առ ատել զձեզ նշկահեցաք, կամ իբրև զհզօրս ինչ զմեզ վարկանելով՝ արձակեցաք զունդ հինից յերկիրդ Յունաց. այլ մեծի խռովութեանդ, որ ի ձերում միջի շարժեցաւ, զխտակ եղեալ՝ երկուցեալ ի Շապհոյ, եթէ ոչ ոք թափեսցէ զմեզ ի ձեռաց նորա՝ օգնեցաք նմա դոյզն գնդաւ։ Այլ ոչ ես ինքն Արշակ եկի ընդ նմա, զմիամտութիւն ընդ ձեզ պահելով. վասն որոյ աւերեալ գերեաց զաշխարհս մեր, մինչև զոսկերս անգամ հարցն բերեաց ի գերեզմանաց։ Եւ արդ՝ հաւատացեալ ձեր եղելոցս՝ զառաջին սէրն առ մեզ հաստատուն պահեցէք, և մեք առ ձեզ զմտերիմ հաստուցուք ծառայութիւն»։

Իսկ Վաղէս ոչ զթուղթն ընթերցաւ, և ոչ զմեծն Ներսէս ետես. այլ բացէ ի բաց արտաքսհմանել զնա հրամայէ, և սրոյ զամենայն պատանդսն մատնել։

---

1 f վաղէս կայսր
2 de արամեանն / Խ արամեանս [k ամս]
3 Խ ազգին [Հ ազգի], փխ. ազգիս
3 Ա տեառն իմոյ ինքնակալ վաղեսի օգոստոսի [օգոսափ, f օգոստեայ]
3 Խ աւգուստոս վաղեսի
3 p չիք վաղեսի
4 ԱԿl գրատիանոսի [tw գրացիանոսի] կայսեր խնդալ
5 c առ ատեալ, f ար ատեալ, փխ. առ ատել
5 nopqrs չիք առ
5 n ատեալ / opqrs ատելի
5 o զքեզ, փխ. զձեզ
6 opqrs չիք ինչ
6 Ա չիք զմեզ
6 a չիք արձակեցաք
6 ԱԽԿ^{3} հէն [c հեն], փխ. հինից
7 Ա յերկիր
7 de խռովութեան
7 Հgk չիք ի (ձերում)
7 o ի միջի ձերում
7 Ա շարժեցեալ [c շարժեալ] եղե
8 Խ թէ
8 ԱՏ թափէ
8 prs զձեզ, փխ. զմեզ
9 opqs չիք ես
9 Խ եկի արշակ
10 c զի միամտութիւն
10 Ա չիք ընդ (ձեզ)
10 Խ պահելով ընդ [k չիք ընդ] ձեզ
10 ԱՀl աւարեալ
11 Ա գերեալ
11 e աշխարհս
11 Ա զոսկերսն անգամ զհարցն բերեաց ի գերեզմանացն
12 Տ ձեր՝ մեր
12 ԽՎmx յղելոցս, վ եկելոցս, փխ. եղելոցս
13 p պահեցաք և մեզ առ
13 detw մտերիմն
15 Տ ընթերցեալ
15 k մեծ / l զսուրբն, փխ. զմեծն
15 ԱՏ ոչ ետես զմեծն Ներսէս
16 l բայցէ ի բաց
16 pqrs արտաքսհմանեալ
16 ՏԽ հրամայէ զնա և զամենայն փտարանդիսն սրոյ մատնել
16 Խ փտարանդիսն, փխ. պատանդսն
17 p մատնեալ

Լ

Յաղագս արտասահմանելոյ մեծին Ներսիսի, եւ անկանել պատահել ի կղզին անբնակ. եւ թէ ո՛րպէս կերակրեալ լինէին ի վերին խնամոցն:

Ի ժամանակին յայնմիկ էր յաթոռ եպիսկոպոսութեանն Բիւզանդացւոց հոգեմարտն Մակեդոն: Եւ իբրեւ եղ հրաման յարքունուստ աքսորել զմեծն Ներսէս, որպէս զմի անգամ խաբող և դրժող արքայի՝ մատուցեալ առ նա ոմանց ի հերձուածողաց աղանդոյն Արիոսի, ասեն. «Եթէ դաւանես ընդ մեզ՝ թափէ զքեզ հայրն մեր Մակեդոն»: Որում ոչ հաւանեալ՝ աքսորեցաւ. և ի նաւալիւղն լինել ըստ խստաշունչ օդոյ ձմերայնոյն, ընկեցեալ ի կղզի ինչ անապատ՝ ջարդեաց զնաւն. և նաւորդացն ոչ իշխեցեալ մակուկաւն նաւել, մնային տագնապեալ, ուտելով զարմատս անտառին: Այլ ի տեսչութենէն Աստուծոյ կերակրեալ լինէին ամիսս ութ ի ձկանցն, զոր ծովն ընկենոյր կենդանիս: Բայց Պապայ յանձն առեալ հանդերձ ամենայն պատանդօքն՝ թափեաց Մակեդոն:

ԼԱ

Կոտորել Արշակայ զնախարարսն, եւ յաղագս փառաց Խադայ եպիսկոպոսի:

Ի հեռանալ մեծին Ներսիսի՝ սատեաց Արշակ ամենայն ուխտիցն, զոր եդ ընդ նախարարսն, և խնդրեաց զքէն ձեռակերտին իւրոյ Արշա-

1 k ԼԱ, l ԻԹ, փխ. Լ.
2 Տ յաղագս արտասահմանելոյ զմեծն Ներսէս և արկանել պահել ի կղզին
2 bce արտասահմանն
2 bcdef Ներսէսի
2 f պատահի
3 atw ի կղզի / bcdef ի կղզիս
3 Հgk չիք թէ / Խ չիք լինէին
3 frs չիք վերին
3 f ի խնամոցն Աստուծոյ
4 o չիք ի ժամանակին—եպիսկոպոսութեանն
4 l եպիսկոպոսապետութեանն
4 Տ բիւզանդիոյ
5 Տbcfk հոգէմարտն
5 Խabdef մակեդոնն [k մակոդոնն]
5 c չիք և / ftw արքունուստ
6 etw չիք աքսորել զմեծն Ներսէս
6 cdpqrs դժրող / o զդժրող
7 ՏԽ մատուցեալ ոմանց [Խ ոմանք] առ նա [Խo չիք առ նա] ի հերձուածոյն [o ի հերձուածողացն] արիոսի
8 Խ թէ / abdefgl մակեդոնն
9 Խ չհաւանեալ / o աքսորեցաւ
9 ԱՀվ^{2}gky և [կ^2 չիք և] ի նաւուղիղն
9 Ավ լինելոյ / i խստադոյն
9 a օդւոց / Խկ^2 bde օդոց / c աւդոց / f օդոյն / i օդւոյ
10 abf ձմերայնւոյն / tw ձմերայնոցն / միւսն. ձմերանոյն
11 g իշխեալ / Ագk մնացին
11 d տառապեալ
12 ԱՏ զարմատ
12 c ի տեսչութե՛՛ն / վm ի տեսչութեանցն
12 Հgk չիք Աստուծոյ
13 ԱՏgk ի ձկանց / tw զորս / abdef ծով
14 Ա չիք ամենայն
14 ՏԽ պատանդաւն / Ա թափէ
15 Հbdegl մակեդոնն / f չիք մակեդոն
16 l Լ, փխ. ԼԱ.
17 Ա թէ որպէս կոտորեաց արշակ զամենայն նախարարսն [d զնախարարսն ամենայն, c զնախարարսն զամենայն] և վասն փառուց
17 go կոտորելն / npqrs կոտորեալ
17 Տak խադդայ
17 Հfgknopqrs եպիսկոպոսին
18 abdef ներսէսի / c ներսեսի (միշտ)
18 ԱՏ ուխտին / tw ամենայն նախարարաց ուխտին, զոր եդ ընդ նոսա և
19 Ա եդ ընդ ամենայն նախարարաց նոսա [c նոսայ] և
19 Խ արշակաւանի

կաւանու: Եւ կոտորեաց զբազումս ի նախարարացն, մանաւանդ զազգն Կամսարականաց բառնայր ի միջոյ, չարակնելով ագահեալ յամուրն Արտագերս և ի քաղաք ոստանի նոցա Երուանդաշատ։ Եւ կոչեալ առ ինքն ի լքեալ արքունիսն Արմաւիր իբր զազգականս իւր, ի պատճառս պատուոյ մեծարանաց, միահաղոյն զարս և զկանայս հանդերձ մանկամբք հրամայեաց կոտորել: Եւ ոչ ոք ի նոցանէ ապրեցաւ, բայց Սպանդարատ որդի Արշաւրի. քանզի ունէր կին Արշակունի, որ և բնակեցաւ ի նորին ժառանգութեան ի կողմանս Տարօնոյ և Հաշտենից, իբր որտունջ զհօրեղբօրէն իւրմէ եղեալ զներսեհէ. որոյ աղագաւ և ոչ ի կոտորման նոցա դիպեցաւ: Այլ լուեալ զբօթն՝ հանդերձ որդւովքն Շաւարշաւ և Գաղաւոնիւ և բոլոր ընտանեօքն գնաց փախստական ի Յոյնս։

Բայց ի գնալն մեծին Ներսեսի ի Յոյնս՝ էր ձեռնադրեալ զսարկաւագն Խադ յեպիսկոպոսութիւն Բագրեւանդայ և Արշարունեաց, և հաւատաց ի նա զամենայն գործ վերակացութեան աշխարհիս մինչև ցժամանակ իւրոյ դարձին: Այս Խադ յամենայնի նմանեալ մեծին Ներսեսի, և առաւել ևս ի տեսչութիւն աղքատաց. որոյ և շտեմարանքն իսկ աղբերացան սքանչելապէս իբր առ Եղիայիւ և Եղիսէիւ. և ի յանդիմանել զարքայ՝ անհաւատ և սաստիկ էր և աներկիւղ։ Եւ ոչ եղև ի նմա զամագիւտ սատանայ, բայց առ միոյ նուագի, զի էր պճնող առ հանդերձս և ձիաւէր. զոր պարսաւեալ այպանէին փոխանակարանեալ՝ որք ի նմանէ յանդիմանեալ լինէին: Վասն որոյ թողեալ այնուհետև զպերճազոյն հանդերձսն, խարազնազգեստ եղեալ՝ իշով շրջէր մինչև ցօր մահուան իւրոյ:

1 Ա զբազում [de բազում] նախարարս
1 p չիք ի (նախարարացն)
1 Տ զազգսն [o զազգն, x զազգս]
2 Հk կամսարականն / Ա բառնայ
2 c չիք ագահեալ
3 ef արտագէրս / Խ ոստանոյն
3 p կոչեցեալ / Խ չիք առ ինքն
4 Խ ի լքեալն արքունիս
4 Հ ազգականս / Տ զազգական
5 abefgltw պատուոյ և մեծարանաց
5 a և միահաղոյն / Ա մանկամբքն
7 abcde արշօրի / Հgk արշուրի
7 ԱՏ ունէր երկրորդ կին
8 pqrs ի կողմանէ / a հաշտենից
8 Հgk զորտունջ
9 Ա չիք իւրմէ / Խ չիք եղեալ
9 c զներսեհ / Տ չիք և (ոչ)
9 Խ չիք ի (կոտորման)
9 Տa ի կոտորմանն
10 ՏԽ դիպաւ
10 p լուաւ / abf լսել / c ի լսել / detw լսէ / Խվ լսեալ
11 abd դաղաւոմիւ / k գդաղաւոնիւ
11 ԱՏ ընտանեօք
11 p փախեաւ, փխ. գնաց
12 de մեծի / f չիք մեծին
12 abdef ներսէսի / c ներսեսի
12 Խ և, փխ. էր / l զսարկաւարգն
13 ԱՏ զխադ / ՏԽabc բագրաւանդայ
13 c արշակունեաց / l աշարունեաց
14 Ա ի նա զգործս [c գործս] վերակացութեան ամենայն աշխարհին / Տ աշխարհին
14 ԽՀgl չիք մինչև
15 c ցժամանակս
15 abceftw նմանող եղեալ
16 ԱԽ չիք և (առաւել)
16 Հgk չիք ի (տեսչութիւն)
16 Տa չիք և (շտեմարանքն)
16 Խ շտեմարանք / ՏԽ չիք իսկ
17 f աղբիւրացան / Խ աղբիւրացեալ
17 k իբրև / Խ առ եղիայիւն
18 ԱԽ չիք և (սաստիկ)
18 Ա զամագիւտ ի նմա
19 Խ զամագիտ / pqrs կամագիտ / Վ[3]tw կամագիւտ
19 l բա(յ)ց / n բայց / ՏԽ վասն, փխ. առ
19 a պճնող և ձիաւէր առ հանդերձս
20 Տ փոխանակարանել
21 bcdef յանդիմանեալք
21 Հgk չիք այնուհետև
22 Ա իշաւ / Խ չիք մինչև

ԼԲ

Եթէ ո՛րպէս Արշակ քարշել զերանելին Խադ եւ քարկոծել զնա կամէր սակս յանդիմանութեան իւրոց յանցանաց:

Եւ եղև ի սատակել Արշակայ զազգն Կամսարականաց՝ հրամայեաց զդիակունս նոցա քարշել և ընկենուլ անթաղ, կերակուր լինել շանց. և ինքն որպէս մեծաւ յաղթութեամբ պսակեալ, ի բարեկենդանութեան կատարէր աւուրս, կոչել մթերել յԱրմաւիր զնոցայն հրամայելով զհամբարսն: Զորոց պեղեալ երկուս հորս յոյժ քաջախորս և սաստկապէս լայնս, որ ի շինին Նախճաւանի, բերին սայլովք նոցին աւանի: Իսկ սայլորդացն տեսեալ ոսկերս մարդկան գազանակեր եղելոց, ցրուեալս առ եզերբ փոսոյն, հարցեալ ուստի՝ իւրեանց լինել տերանց. հաւաքեալ ի սայլսն ներքոյ եղեգանն՝ բերեալ թաղեցին ի նոյն հորս: Զոր զգացեալ Արշակայ՝ հրամայէ զսայլորդսն ի վերայ հորոցն կախել զփայտէ:

Բայց Խադայ ոչ պատահեալ յառաջնում նուագին, այսմ ժամանեալ հասանէ. և սկսաւ կշտամբել զարքայ բանիւք յանդիմանութեան: Հրամայեաց Արշակ քարշել զնա և քարկոծել: Եւ քանզի էին դստերաց նորա տայգերք ի մեծ նախարարութեանցն, ի կորովի և ի քաջ ազգէն Ապահունեաց՝ սուսերս հանեալ կիսախողխող զքարշողսն առնէին, և յափշտակեալ զԽադ ի ձեռաց նոցա, և յիւրեանցն զնացին գաւառ: Եւ Արշակայ ոչ ի հակառակս մտեալ՝ զօղէր, զի մի խռովութիւն ամենայն նախարարացն յուզիցի:

2 a քարշել արշակ / tw արշակ հրամայեաց քարշել
2 cf քարշէ / Sw d քարշէր
2 o զխադ / f չիք զնա
3 cdnpqrs յանցանացն / f անցանաց / y չիք յանցանաց
4 b չիք ի (սատակել)
4 w զազգ / n զազգսն
5 Sw չիք և (ընկենուլ)
5 l անթաղս / e լինիլ
6 Ա. չիք ի / c ի բարեկենդանութիւն
7 o զաւուրս / Ա. չիք յարմաւիր
7 Ա. համբարս / g համբաւս / k զհամբաւսն / l զհամբարս
8 Հg զորոյ / abdefstw երկուց
8 Հվ[2]gl հորս / միւսն. խորս
8 c լայն / y բանս, փխ. լայնս
9 p շինէին, փխ. ի շինին
9 deltw Նախճաւանին / o Նախճուանի
9 Հg սայլօք / l սայլաւք
9 Sw աւանին
10 y տուեալ, փխ. տեսեալ
10 cdotw զոսկերս / p գազանակերս
10 gp ցրուեալ / Հk ցրուեալք
11 Ա. փոսին / pqrs գետոյն, փխ. փոսոյն
11 gk չիք ուստի / de լինիլ
11 l տերաց / Հgy տերարք / k տէարք
11 d ի սայլն
12 k եղեգեան / gl զորս
12 Հվ[2]gl հորս / միւսն. խորս
13 Հglo հորոյն / վ[2] հորոցն / միւսն. խորոցն
14 Sg խադդայ / l խադ(դ)այ
14 abde այսս / c յայս / tw այսու / g յայսմ
14 abd ժաման / ctw ժամու / ef ժամայն
15 Ա. սկսեալ
15 acdefstw կշտամբէ / b կշտամբ
16 Ա. քարկոծ առնել
16 Sw էին նորա տայգերք դստերն / Համմ. Փ. Բիւզ. Դ, գլ. ԺԲ, ԺԹ:
17 կ[2]abcde տագերք
17 dors նախարարութեանց / p նախարարութեան
17 gk չիք ի (քաջ)
18 d արշակունեաց, փխ. ապահունեաց
18 Ա. սուսեր / de հանեալ և
18 Հ կիսախողխողս
18 g զքարշողս / Հ չիք զքարշողսն
19 Ա. չիք և (յիւրեանցն)
19 d յիւրեանց / Sw զաւառս
20 g չիք ի (հակառակս)
20 prsy ի հակառակ
20 p խռովութիւնն
21 Ա. յուզեսցի

ԼԳ

Յաղագս թագաւորելոյն Թէոդոսի մեծի, եւ ժողովոյն որ եղեւ վասն հոգեմարտացն:

Բայց Վաղեսի կայսեր ըստ արժանի իւրոց խորհրդոցն զյաւիտենական գեհենին ասուէն բերելով զօրինակ, հրակէզ եղեալ յԱդրիանուպօլիս՝ սատակեցաւ. և առնու զթագն Թէոդոս: Սա քակեաց զմեհեանս կռոցն մինչև յատակս, զփակեալսն միայն ի սրբոյն Կոստանդիանոսէ, զանուանեալն Արեգական և Արտեմեայ և Ափրոդիտեայ ի Բիւզանդիոն. աւերեաց նոյնպէս և զտաճարն Դամասկոսի, և արար եկեղեցի. նոյնպէս և զտաճարն Իլիու քաղաքի, զԼիբանոսի զմեծ և զհռչակաւոր զերեքքարեանն:

Սա դարձոյց զամենայն հարս սուրբս, որք յաղագս ուղղափառութեանն արտասահմանեալ էին ի մեռաղս, ընդ որս և զմեծն Ներսէս ածեալ առ իւր ի Բիւզանդիոն՝ պահէ մեծաւ պատուով, մինչև ճշմարտութեանն ստուգեցաւ հաւատ, որ յաղագս ամբարշտին Մակեդոնի հայհոյութեանցն. զի ոչ Տէր խոստովանէր զՀոգին սուրբ, և ոչ երկրպագելի և ոչ փառաւորելի ընդ Հօր և ընդ Որդւոյ, այլ օտար յԱստուծոյ բնութենէն, և ստացական և ծառայ և պաշտօնեայ, և ազդումն ինչ, և ոչ էութիւն անձնաւոր: Եւ ժողովեալ սուրբ հարքն ի թագաւորեալ քաղաքն Բիւզանդիոն, Դամասիոս Հռոմայ, Նեկտարիոս Կոստանդնուպօլսի, Տիմոթէոս Աղեքսանդրի, Մելիտոս Անտիոքու, Կիւրղոս Երուսաղէմի, Գրիգորիոս Նիւսիայ,

2 oy մեծին թէոդոսի
3 Տա հոգէմարտացն [pqrs հոգեմարտին] / cdtw հոգէմարտին / վ հոգեմարտիցն / միւսն. հոգեմարտին
4 Ա վաղէսի [d վաղէս]
4 Տա չիք կայսեր
4 c չիք արժանի
4 Տա չիք իւրոց
4 Կ²bcdeftw անօրէն [d անօրէնութեան] իւրոց [f չիք իւրոց] խորհրդոց / a խորհրդոց
5 Sk գեհենոյն / gl գեհենւոյն
5 Ավ²ors հրկէզ
5 g յադրիանիպօլիս / վ⁴qrs յանդրիանուպօլիս
7 c զփակեալս / Տա չիք միայն
8 Խվ³noqrs արեգակն
8 abdef ի բիւզանդիոնն / c ի բիւզանդոն
9 Sgl չիք և (զտաճարն դամասկ.)
9 Խվ.m դամասկի / վ³npqrs դամասկի
9 a չիք և (արար)
10 Կ²վabeftw իլիու / cd իլու / միւսն. իլուզ: Հմմտ. Арм. Арш. II, 99:
10 k զլիբիանոսի / p զմեծն
11 opqrs որ / Հgk չիք որք
11 Sl ուղղափառութեանն / d ուղղութեան
12 Ա արտասահմանեալք
12 aef և ի մեռաղս / Հ ընդ որք
12 pqrs չիք զմեծն
12 k ածել
13 abdef ի բիւզանդիոնն / c ի բիւզանդոն
13 y չիք մեծաւ
13 fgk ճշմարտութեան
14 Աglno որք
14 Հabdef մակեդոնին
15 c և երկիր պագել. չիք ոչ
15 Ա և փառաւորեալ. չիք ոչ
16 d յօտար
17 Ա չիք ծառայ / pqrs ծառայ աստուծոյ: Հմմտ. Арм. Арш. II, 99:
18 Ա ի թագաւորեալն բիւզանդիոնն [c բիւզանդոն]
19 abeftw դամասոս / cdx դամասկոս
19 c հռոմայ / l նեկտաւրոս
19 i ի կոստանդինուպօլսէ / lno կոստանդինուպօլսի / aprs կոստանդիանուպօլսի
20 df մեղիտոս / Խվ³npqrs մելիտոն
20 c անտոքու / Հ անտիոքայ
20 c կիւրեղոս / Խվ³n կիւրղիոս / p կիւրեղ
21 Ա գրիգոր
21 c նիւսայ / y նիսյայ / Հ նիւսիոյ

Գեղասիոս Կեսարու, Գրիգորիոս Նաճիանձու, Անփիլոքիոս Իկոնիու, և այլ եպիսկոպոսք, միանգամայն հարիւր և յիսուն հարք, որք նզովեալ մերժեցին զՄակեդոն և զամենայն հոգեմարտս։

ԼԴ

Ակամայ երթ Արշակայ առ Շապուհ, եւ անդարձ լինել։

Դարձեալ պարապ առեալ Շապհոյ ի պատերազմացն՝ առաքէ ի վերայ Արշակայ զԱլանաոզան ոմն պահլաւիկ՝ հզօր գնդաւ, որ էր ազգակից Արշակայ։ Յորմէ խոյս տուեալ Արշակայ, թափուր ի բազմաց մնայր նախարարաց. որոց ձեռն տուեալ յԱլանաոզանն՝ կամաւ երթային առ Շապուհ, տաղտկացեալ յիւրեանց արքայէն Արշակայ. և մեծարեալք ի նմանէ դառնային յաշխարհս մեր։ Ուստի տարակուսեալ Արշակայ՝ յղէ պատգամ առ իշխան զօրուն Պարսից, եթէ «Դու արիւն իմ և հարազատութիւն, ընդէ՞ր այդպիսեաւ վարես զիս ջերմութեամբ. թէպէտ և ակամայ զգալուստ քո գիտեմ, ոչ կարացեալ սայթաքել զհրամանս Շապհոյ՝ գալ ի վերայ քո ազգականիս։ Այլ արդ՝ թուլացո ինձ զօղել ուրեք վայրկեան մի ժամանակի, մինչև ոգի առեալ՝ անցանել կարացից յերկիրն Յունաց. և դու կալցես զաշխարհս, և բազմաց յինէն հանդիպեսցիս բարութեանց, որպէս ի մտերիմ հարազատէ»։

Դարձուցանէ Ալանաոզանն այսպիսի պատասխանիս, և ասէ. «Թէ

1 c բասիլոս / rs գեղամիոս / Ձ գեղասոս / միւսն. բասիլիոս, փխ. գեղասիոս
1 Կ^2 և գրիգորիոս
1 Աս Նազիազու / l (Ն)անձիանձու / վgnyk անձիանձու / Ձ աձիաձու / pqrs Նանձիանձու / վ Նանձիանու
1 abdef անփիւլաքսիոս / c անփիլաքսիոս / tw անֆիւլաքսիոս
2 Աglnopqrs յիկոնիու [c յիկոնիոյ]
2 Ա այլք / abcd հարիւր
3 pqrs որ
3 Ձ հերքեցին, փխ. մերժեցին
3 de զմակեդոնն
3 Տաc հոգէմարտսն / b հոգէմարտս
5 Ապrs երթալ / o երթն / gk երթայ
5 cgk արշակ
5 e լինիլ / o լինիլն / g լինի
6 o շապուհ
7 bf զաղանայոզան / c զաղանաոզան / de զալանայոզան / gknopqrs զալանոզան / վ ալանոզան կամ ալանազան
7 abdeftw պալհաւիկ
8 abcef չիք յորմէ—արշակայ / tw խոկ արշակ, փխ. յորմէ—արշակայ
8 Ձ տուեալք / abcef ի բազմացն
9 p մնաց
9 Տա նախարարաց. որոց ձեռն տուեալ նախարարքն
9 abf աղանայոզանն / detw ալանայոզանն / gopqrs յալանոզանն / y յալանաոզանն
10 dklntw տաղտկացեալք
10 abcefiw տեառնէն, փխ. արքայէն
10 Ձ յարշակայ
11 Ա ի շապհոյ [c շապհու], փխ. ի նմանէ
12 de չիք պարսից
12 y արիւն իմ և հարազատութիւն իմ
13 pqrs այսպիսեաւ
14 opqrs կարացեր
14 abdef զհրաման
15 lrs չիք քո
15 վ^{2}cgopqrs թողացո / f թուղացո / l թողացոյց թողացուս / վ թողուացո
15 Ձվ^{2}kl զօղել
16 e ուրուք / gk չիք մի
16 վ ժամանակ
16 Ա կարացից անցանել
17 abcef հանդիպեսցիս
18 վ բարերարութեանց
18 p որ, փխ. որպէս
18 Ա որպէս արդարև ի մտերիմ
19 Ա ալանայոզան [bf աղանայոզան, c աղաոզան] արշակայ / opqrs ալանոզան
19 Ա չիք և (ասէ)

դու ոչ խնայեցեր յազգայինսն մեր Կամսարականս, որ առաւել քան զիս էին քեզ հարազատագոյնք, դենի ձերոյ մասամբ և աշխարհաւ համարնակաւ, զիա՞րդ յինէն ակն ունիցիս ի քեզ խնայել, հեռացեալ դենիւ և բնակութեամբ. և որո՞վ օրինակաւ ես ի քոյսն յուսալով բարիս, որ անյայտ է թէ առից՝ զգտեալսն յիմմէ թագաւորէն կորուսանիցեմ»։

Ապա այնուհետև յոյժ նեղեալ Արշակ, յոչ կամաց երթայ առ Շապուհ, և ի պահեստի լինի ի նմանէ. և բռնութեամբ հարկաւորեալ գրէ, զի Փառանձեմ կին նորա եկեսցէ ի դուռն։ Եւ Շապուհ հրամայէ ամենայն մեծամեծացն, զի ընդ Փառանձեմայ եկեսցեն։

ԼԵ

Յաղագս չարեացն որ անցին ընդ Հայս ի Շապհոյ, եւ մահն Արշակայ։

Իբրև գիտացին նախարարք Հայոց, այնք, որոց նախ քան զԱրշակ ձեռն տուեալ էր ի Շապուհ արքայ Պարսից, թէ և զնոցա կանայսն խնդրեալ է իբրև զայնց, որք առ Արշակայն էին միամիտք, և զայն ես տեսին, եթէ գնաց Ալանաոզան, և գունդ փոքր է որ վասն այնր է եկեալ՝ միաբանեալ հալածեցին զնոսա. և իւրեանց առեալ զկանայս և զորդիս՝ փախեան յաշխարհն Յունաց։ Նա և ոչ դշխոյն Փառանձեմ գնաց ի կոչ առնն իւրոյ, այլ հանդերձ գանձիւք անկաւ յամուրն Արտագերից. լուր առնելով առ որդին իւր Պապ, յուսայր ապրել ի ձեռաց Շապհոյ։ Ընդ որս զչարեալ Շապուհ կապէ զոտս Արշակայ երկաթեղէն շղթայիւք,

1 *a* չխնայեցեր
1 Ա կամսարականսն / Հ կամսարականքն / *tw* որք
2 Տխ քո, փխ. քեզ
2 *b* զէն հաւատով ձերոյ
2 Տխ ձեր / *de* չիք ձերոյ
3 Ա ունիցիս ակն
3 *f* չիք ի (քեզ)
3 *y* չիք հեռացեալ
3 Ա հեռացեալ յինէն զենիւ
4 Տխ ի քոյն
5 *pqrs* անյոյս, փխ. անյայտ
5 *rs* զգտեալս
6 Ա արշակ [*c* և արշակ] յոյժ նեղեալ
6 Խ արշակայ
6 *c* յոչ կամայ
7 *k* չիք ի (նմանէ)
8 Ա ի դուռն եկեսցէ
11 *abcde* չարեացն հայոց որ անցին / *tw* չարեացն շապհոյ որք անցին ի հայս
11 Տխ ընդ հայք / *f* ի հայս / *abcde* չիք ընդ հայս
11 *f* ի շապհոյ պարսկէ և մահն արշակայ ի պարսս անդ սաւուղաբար
11 Տխ մահ
12 Հ նախարարքն
12 Տխ որ
12 Ա յառաջագոյն, փխ. նախ
13 *bcftw* ձեռս
13 Տխ տուեալ էին
13 Տխ չիք արքայ պարսից
13 *gk* նոցա
13 *d* զկանայս նոցա
13 *abcef* կանայս
14 Տխ խնդրէ
14 Տխ որպէս / *f* իբր
14 Տխ զայնոցիկ որք առ արշակայ միամիտք էին
14 *rs* զայնոսիկ
14 Հ չիք և զայն ես—ալանաոզան (տ. 15)
15 *ade* ալանայոզան / *bcf* ազանայոզան / *oqrs* ալանոզան
15 *bcdeftw* յաղագս, փխ. վասն
15 Ա այնորիկ եկեալ է
18 *gl* առն
18 *d* արտագերոց
19 *rs* առ որդին իւր պապ յուսայր առ որդին ապրել
19 *dl* ապրիլ
19 Ա արքային պարսից, փխ. շապհոյ
20 Տխ ընդ որ / *def* շապհոյ
20 *c* կապանաւք, փխ. շղթայիւք

և տալ տանել յերկիրն Խուժաստանի յԱնուշն կոչեցեալ բերդ։ Եւ բազում զօրս գումարեալ ի ձեռն Մեհրուժանայ Արծրունւոյ և Վահանայ Մամիկոնէի, ուրացողաց զՔրիստոս, արձակէ յաշխարհս Հայոց. որք եկեալ նստան շուրջ զբերդաւն Արտագերից։ Եւ թէպէտ ոչ ինչ կարէին առնել նմա վասն անմատչելի ամրութեանն, բայց զի բարկութիւնն Աստուծոյ էր ի վերայ Արշակայ՝ մարդիկ ամրոցին ոչ անսացին մնալ համբաւուն Պապայ, այլ անձնատուրք եղեն ի կամաց, և ոչ ի բռնութենէ։ Զորս գերեալ հանդերձ գանձիւքն և տիկնաւն Փառանձեմաւ խաղացուցին ի յԱսորեստան. և անդ ընդ սայլի ցից հանեալ՝ սատակեցին։

Ի նմին ժամու եհաս հրաման ի Շապհոյ արքայէ, զի քանդեալ աւերեսցեն զամրութիւն ամենայն քաղաքաց, և զՀրեայսն խաղացուսցեն ի գերութիւն, և զայն Հրեայսն, որ նովին հրէութեամբ օրինօք կային ի Վանն Տոսպայ, զորս ածեալ էր Բարզափրանայ Ռշտունւոյ յաւուրս Տիգրանայ. զորս բնակեցոյց Շապուհ յԱսպահան։ Գերեցին և զայն Հրեայսն որք յԱրտաշատ և ի Վաղարշապատ, զորս ածեալ էր նոյն Տիգրանայ արքայի, որք յաւուրս սրբոյն Գրիգորի և Տրդատայ հաւատացեալ էին ի Քրիստոս. ընդ որս և զԶութիթայ երէց Արտաշատու։ Յայնժամ մատուցեալ առ Շապուհ Մեհրուժան և Վահան չարախօսէին զԶութիթայ երիցուէ Արտաշատու, եթէ յայն սակս եկն ընդ գերութիւնն, զի խրատեսցէ զնոսա պինդ ունել զօրէնս քրիստոնէութեան։ Վասն որոյ Շապուհ հրամայեաց

1 prs տալ
1 abcdetw յանյուշն
2 l բազումս
2 Ա զօր բազում
2 Տաab մերուժանայ
2 abc արծրունոյ
3 Վlmno մամիկոնոյ / pqrs մամիկոնոյ / Հgk մամիկոնայ
3 b արձակ
3 cf յունաց, փխ. հայոց
5 detw չիք նմա
5 Հgr ամրութեան
5 Տա չիք զի
5 Հgl բարկութեան
5 Հk յաստուծոյ
6 abdetw մարդիկք
6 ԱՀl համբաւուն / միւսն. համբաւոյն
7 cd զոր
8 ԱՀg գանձիւք
8 g խաղացին / k խաղաղացին
8 Աgky չիք ի (յասորեստան)
9 Տա ընդ սայլացից
9 ԱՀ հարեալ, փխ. հանեալ
10 Տա հրաման շապհոյ, զի / a չիք ի (շապհոյ) / c շապուհ
10 k քանդի
11 pqrs չիք աւերեսցեն
11 Ա զամենայն ամրութիւն
11 Ա զհրէայսն խաղացուցանել
12 Ա հրէայք / p հրեայս / tw հրէայսս որք
12 Տա նոյն
12 Ա չիք հրէութեան
12 Տա օրինօքն / o օրինօքն հրէութեան
12 Ա ի վան / p ի վանս
13 Տա զոր
13 abdegp բազափրանայ / k բազըրափրանայ / q ի բարզափրանայ
14 gk զոր / q բնակե
14 p և գերեցին զայն
14 c չիք և
14 k զայլ, փխ. զայն
14 abdefiw հրէայս
15 dkoprs զոր / k չիք էր
16 Տա որ / e չիք և
17 gk զութիթայ / d էրէց
17 abdetw և, փխ. յայնժամ
17 f չիք յայնժամ մատուցեալ—արտաշատու (տ. 19)
18 abde մերուժանայ / tw մեհրուժանայ / Տա մերուժան
18 abde չիք և վահան
18 alde չարախօսեաց զզութիթայ երիցու
19 d թէ / b այն
19 Վ²abcdetw ընդ գերեալսն / Հ ընդ գերեալս / gp ընդ գերութիւն / noqrs ընդ գերութիւնս
20 Ա զհաւատս(ն), փխ. զօրէնս
20 Հ հրամայեաց շապուհ

չարչարել զԶուիթայ, զի թողցէ զօրէնս քրիստոնէութեան. որում ոչ հաւանեալ, կատարեցաւ։ Զայս ամենայն աղէտս թշուառութեանց լուեալ Արշակայ՝ սաւուղաբար արար ընդ անձին իւրում. որ թագաւորեաց ամս երեսուն։

ԼԶ

Անցք ընդ մեզ չարեացն որ ի Մեհրուժանայ, եւ թագաւորել Հայոց Պապայ։

Յետ մահուանն Արշակայ գումարեաց Շապուհ զօր բազում ի ձեռն Մեհրուժանայ, և արձակեաց ի Հայս, ի նա հաւատալով զաշխարհս։ Եւ տուեալ նմա կին զքոյր իւր զՈրմզդուխտ, և հրովարտակս բազում շինից և դաստակերտաց ի Պարսից աշխարհին, և խոստացաւ տալ նմա զՀայոց թագաւորութիւնն, միայն թէ զնախարարսն նուաճելով ի դէն մազդեզանց զաշխարհս դարձուսցէ։ Որոյ յանձն առեալ և եկեալ, և զբազումս ի նախարարաց կանանց կալեալ՝ ի բերդս բերդս տայր պահել, զդարձ արանցն յուսալով։ Եւ զամենայն կարգ քրիստոնէութեան ջանայր խափանել։ Զեպիսկոպոսս և զքահանայս հարկաց պատճառաւ կապեալ՝ յերկիրն Պարսից տայր տանել։ Եւ զորս միանգամ գիրս գտանէր՝ այրէր, և հրաման տայր մի՛ ուսանել զդպրութիւն յունարէն, այլ զպարսիկ, և մի՛ ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել. այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենեւին մի՛ լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ, այլ ճշմարիտ՝ խափանել զքրիստոնէութեան ուսումն. զի յայնժամ գիր դպրութեան Հայոց չև ևս էր լեալ, և յունականաւն վարէին եկեղեցւոյ կարգք։

1 Ա չարչարել զզուիթայ հրամայեաց շապուհ
1 a զթողցի. փխ. զի թողցէ
1 Ա զօրէնս / միւսն. զհաւատ
2 Ա թշուառութեան տեսեալ արշակայ
3 Ա սաւուղաբար անձինն [de անձին] արար որ / p ընդ անձին իւրում արար
3 Թ իւրոյ
6 c չարեաց նորին մեհրուժանայ
6 ՏԹe մերուժանայ
6 g չիք և / Ա չիք հայոց
8 c զօր բազում, և առաքեաց ի հայս ի ձեռն մեհրուժանայ
8 վ²l զօրս բազում / gk զօրս բազումս
9 ՏԹ մերուժանայ / abdefiw արձակէ
9 Ա և ի նա հաւատայ
9 opqrs չիք ի հայս—զաշխարհս
10 prs չիք իւր / Ա բազումս
11 վ դաստկերտաց
11 Ա նմա տալ [b տալ նմա] զթագաւորութիւնն հայոց
12 g թագաւորութիւն / abc եթէ
12 Ա նուաճեսցէ և ի դէն [de ի դենի]
13 ՏԹ ի դեն / Ա զաշխարհն
14 Աg չիք և / p ի նախարարացն
14 Ա զբազումս նախարարաց կանայս կալեալ՝ ի բերդս տայր / p կապեալ
16 Ա զեպիսկոպոսունս
16 lnqrs քահանայս / k զքահանայս
16 ՏԹ պատճառաց [Հ պատճառաւ]
17 Կ²abef կապել / c կալեալ, փխ. կապեալ
17 abcdetw զոր
17 k միանգամայն / Հgk գիր
18 s տայ / b մի յուսանել
18 Ա դպրութիւն / o զդպրութիւնս
19 d զպարսիկ / միւսն. պարսիկ
19 Ա մի իշխեսցեն խօսել յոյն
19 Հ խօսիլ կամ թարքմանել
20 a ինն, փխ. ինչ / վ ամենեւիմբ
20 ab հայոյ / Ա ընդ յոյնի
21 d հաղութիւն / Ա բայց, փխ. այլ
22 p չեա, փխ. չև ես
23 Ա կարգք [b կարգ, c կար] եկեղեցւոյ վարէին

Արդ՝ իբրև լուաւ մեծն Ներսէս զչարիսն ամենայն, որ հասին ի վերայ Հայոց, և զմահն Արշակայ՝ աղաչեաց զինքնակալն Թէոդոս, խնդրելով ի նմանէ օգնականութիւն։ Եւ թագաւորեցուցանէ զՊապ որդի Արշակայ. և ընդ նմա գումարեաց զօր բազում ի ձեռն քաջ ստրատելատին Տերենտիանոսի։ Եւ մեծին Ներսիսի առեալ զամենայն նախարարսն, որք կամակից էին ընդ տէրութիւնն Պապայ և որք ոչ, և զապրեալ կամսարականն Սպանդարատ՝ սոցա միաբանութեամբ ածէ զՊապ յաշխարհս Հայոց։ Եւ եկեալ գտանեն զամբարիշտն Մեհրուժան պնտացեալ կալեալ զերկիրս Հայոց. և հալածական արարեալ՝ յինքեանս թափեն զաշխարհս։ Բայց Մեհրուժան հրամայէ պայկացն՝ զբերդիցն պարսպաց կախել զկանայս նախարարացն, մինչև մեռցին. և թողուլ նոյնպէս ի կախաղանին զգլխակոնծն, զի լուծեալ անկցին՝ գէշ կերակուր լինել թռչնոց։

ԼԵ

Յաղագս մեծի պատերազմին՝ որ եղեւ ի Ձիրաւ, եւ սատակման ամբարշտին Մեհրուժանայ։

Ազդ արարեալ Մեհրուժանայ յերկիրն Խորասանայ առ Շապուհ զամենայն օգնականութիւն Թէոդոսի զոր արար առ Պապ՝ ելանէ հրաման ի Շապհոյ՝ ամենայն զօրացն Պարսից երթալ ընդ Մեհրուժանայ ի Հայս ի պատերազմ։ Դոյնպէս ազդեն ինքնակալին Թէոդոսի Պապ և Տերենտիանոս զՇապհոյ, թէ ամենայն զօրացն հրամայեաց ելանել ի

1 Խ զչարիս / Ա չիք ամենայն
3 ԱՀ թագաւորեցուցանել
4 Խ զօրս
4 abcef քաջ / Կ²dtw չիք քաջ
4 d սպարապետին, փխ. ստրատելատին
5 Ա մեծին [a մեծ] տիրէնտիանոսի [abf տէրինտիանոսի, cde տերենտիանոսի] / Վklmn տէրէնտիանոսի / opqrs տէրտիանոսի
5 bcdef ներսէսի
6 Հgk կամակիցք / a չիք ընդ
6 Հfg ընդ տէրութիւն / Կ²adetw ընդ տէրութեանն
6 Ա պարսից, փխ. պապայ
6 a չիք և որք ոչ / Կ²bcdeftw ոչն
6 Ա զապրեալն կամսարական
7 a սրանդարատ / o սպանդարատ կամսարական
7 Ա չիք սոցա / c ածել
8 Տխ մերուժան [Հ մեհրուժանայ]
8 k պնդացեալ կալեալ զերկիրս
9 y զերկիրն / Ա զաշխարհս, փխ. զերկիրս
9 ap հալածականս
10 Ա չիք զաշխարհս
10 Տխ մերուժան [Հ մեհրուժան]
10 Կ²abcr պայկացն / վo պայականացն / d սպայականացն / միւսն. պայակացն
10 Տխ զբերդից պարսպացն
11 y թողլուլ այնպէս ի
12 opqrs անկանիցին / deo լինիլ
15 opqrs մեծ
15 l ի ձի իրաւ / y ի ձի աւիրաւ
15 Ա սատակումն
15 f չիք ամբարշտին
16 Տխ մերուժանայ
17 Տխ մերուժանայ [Հ մեհրուժանայ, l մերժանայ]
17 ly խորասանայ
19 Տխ զօրաց
19 Տխ մերուժանայ [y մերուժան]
20 abdef ի պատերազմ ընդ մեհրուժանայ [a մեհր] ի հայս
20 c ի պատերազմ ի հայս
20 p ի հայս պատերազմել
20 Հ չիք ինքնակալին
21 ab տերենտիանոս / Տխ տէրէնդ [gh տերէնտ, op տերենտ]
21 Ա եթէ

վերայ մեր, բայց ի դրանկացն: Ապա և Աւգոստոսն Թէոդոս հրամայեաց Անգղէի կոմսին մեծի երթալ յօգնականութիւն Պապայ, առնուլ զամենայն զօրս Յունաց, ոչ զոք թողուլ՝ զոր ոչ առցէ. այլ և զհետևակս պահապանս քաղաքացն, որք զմետաքսեայսն ունէին զվիշապս:

Եւ խմբեցաւ պատերազմն ի դաշտին որ կոչի Ձիրաւ, և մատեան ճակատ առ ճակատ: Եւ մանկունք քաջ նախարարացն Հայոց, ինքնակամ նահատակեալք, մտին ի մէջ ճակատուցն, առաջնորդութեամբ սպարապետին իւրեանց Սմբատայ ասպետի, որդւոյ Բագարատայ, որ յազգէն Բագրատունեաց: Ելին և ի զօրացն Պարսից համարիք նոցա, և խաղացին ի մէջ ճակատուցն. և ցիրք ընդ ցիրս լինէին: Եւ ի դառնալ մանկանցն Պարսից, ընդ հուպ դարձեալ մերոցն զհետ նոցա, օրինակ իմն որպէս փոթորիկ յանտառէ տերևաթափ, այնպէս երագ յերիվարացն առեալ նիզակօք, զի ցուրտ յերկիր ընկենուին, ոչ կարելով նոցա յիւրեանց ճակատն մտանել: Իսկ յորժամ պարսիկքն զմերն շրջէին՝ նոքա ի վահանափակն Յունաց իբր յամուր քաղաք մտանէին, առ ոչ ինչ վնասելոյ: Քանզի այնպէս արար Գորգոնոս իշխան հետևակ զօրուն, իբր պարսպաւ պատեաց վահանօք զճակատն Պապայ:

Քանզի զօրքն Յունաց վառեալ էին ի զէնս ոսկւոյ և արծաթոյ, և երիվարք նոցա նոյնպէս զարդու, և էր տեսանել իբրև զպարիսպ ինչ, յորոց յոլովք ի ջղեայ և ի կաշեայ պահպանակաց զգեստուն զկարծրութեան վիմաց բերէին երևոյթս. և ի վերայ նոցա անխալամ զէնք նշանք արձակեալք իբր զաղարթս ինչ հովանաւոր ծառոց: Բայց զվիշապացն մանուածս, ահագին բերանաբացութեամբ ուռուցեալ ի փչմանէ օդոյն,

1 Ա. բաց [cdef բայց] միայն ի / ԽԿ nops բաց ի
1 ՏԽ չիք և
1 abdef օգոստոսն / g օգոստոս / Հ աւգոստոս
2 c ագէի / o չիք ագդէի
2 Ա. կոմսի / Հkl կոսին
2 y օգնութիւն
3 d որ / Ա. առցէ զկնի
3 k ինչ, փխ. ոչ
3 k պահականս
4 Ա. զմետաքսեայս / loprs զմետաքսայսն
5 o մատնեն, փխ. մատեան
6 Վkm մանկունքն
6 abcefr նախարարաց
7 c չիք մտին
7 c ճակատուց / prsy ճակատոցն / o ճակատացն
9 gl չիք և (ի զօրացն)
9 Հc խաղային
10 Հ ճակատոցն
10 ՏԽ ցիր ընդ ցիր լինէր [n ցիրք ընդ ցիրս լինէին]
10 Հg ի դառնալն մանկանց [g մանգանց] / k մանկանց
11 g մերոց
12 Ա. տերևաթափաց
12 Ա. չիք այնպէս
12 bf երիւարացն
13 f չիք զի ցուրտ / վ զիացուրտ
13 bf իւրեանց
14 Հ չիք մտանել
15 bf իբրև
15 b քաղաքն / d քաղաքի
15 Ա. վնաս առնելոյ
16 Ա. գորգիանոս [f գորգիանոս] / Հ գորգոնոս
16 pqrs իշխանն
16 Ա. պարսպօք [c պարսպաւք]
17 c պատահեաց, փխ. պատեաց
17 Ա. վահանօքն
18 k զօրն / abc ի զէն
19 abce երիւարք / bcde իբր
20 a յորովք ի ջլեայ / tw իջլեայ
20 d պահանակաց
20 f զգեստունս / k զգեստուն
21 abcef բերէր / klpqrs բերին
21 Ա. անխալատ զէնք նշանս
22 l յարձակեալք / ՏԽ զաղարթ
22 nopqrs զվիշապաց
23 k բանուածս, փխ. մանուածս
23 k օդոյն

ոչ ինչ ուրեք կարեմ նմանեցուցանել, այլ միայն իբրեւ զլեառն ինչ ադամանդեայ խոնարհիլ ի ծով—բովանդակ ճակատն Յունաց ի պարսկական զօրուն։ Քանզի և զնոսա էր տեսանել իբրեւ զհզօր ինչ գետ առ ի կողմն ի լայն ծաւալեալ. արդարեւ զջրոյ գոյն զրահազգեստացն բերէր տեսութիւն։

Արդ՝ իբրեւ ետես մեծն Ներսէս զայն ամենայն՝ եւ նա ի կատար լերինն Նպատայ. և ամբարձ զձեռս իւր յերկինս, անխոնարհելի պահելով ի խնդրուածս, հանգոյն նախամարգարէին Մովսիսի, մինչեւ պարտեցաւ երկրորդն Ամաղէկ։

Իսկ ի ծագել արեգականն ընդդէմ մերոց զօրացն, ի պղնձապատ վահանացն նշոյլք զլերամբքն փայլատակէին իբրեւ յամպոյ մեծէ, և ի նոցանէ ի դուրս ոստչէին ի մերոց նախարարացն քաջ զրահաւորք՝ որպէս փայլատակմանց ճառագայթք. յորոց միայն ի տեսութենէն զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ և մերն, վասն ոչ կարել հայել ընդդէմ արեգականն ծագմանն։ Իսկ ի բաղխել զմիմեանս՝ եղև ի վերայ հովանի ամպոյ, և հողմ սաստիկ ի մերոցն կուսէ ընդդէմ պարսկականին փչեալ։ Եւ ի խառնակել մարտին՝ պատահէ Կամսարականն Սպանդարատ խմբի մեծի, յորում էր քաջն Շերգիր Ղեկաց արքայ, զգլուխ միջին գնդին պնդութեամբ զտեղի ճակատուն կալեալ։ Եւ յարձակեալ Սպանդարատ, և հերձեալ զխումբն, որպէս զշանթահար յերկիր կործանէր զքաջն, և զխումբն պատուեալ՝ ի փախուստ դարձուցանէր։ Եւ այսպէս ի վերին օգնականութենէն զօրացեալ առ հասարակ զօրքն Յունաց և Հայոց, դիակամբք Թշնամեացն լցին զդաշտն ամենայն, և զմնացորդն ամենայն ի փախուստ շրջեալ հալածեցին։ Ընդ որս և զՈւռնայր Աղուանից արքայ, խոցոտեալ ի Մուշեղայ որդւոյ Վասակայ Մամիկոնենի, հանին ի պատերազմէն։

1 Հgk ուր, փխ. ոչ
1 Հ չիք իբրև / c լեառն
1 bcdefopqrstw անդամանդեայ
2 c խոնարհել
2 p բովանդակ / միւսն. զբովանդակ
3 g իբր / Ա որպէս, փխ. իբրև
3 ap հզօր
3 pqrs չիք առ ի կողմն
4 Հ որ արդարև
4 Ավ ջրագոյն / Վ զջրագայն, փխ. զջրոյ գոյն
4 d զրահազգեստուցն
4 Հ զտեսութիւն / Ա զնմանութիւն, փխ. տեսութիւն
5 c դայս
6 abdeftw զձեռն
6 c յերկինս զձեռս իւր
7 qrs ի խնդրուած / bcdefo Մովսէսի
8 f երկրորդ / a ամաղեկ
9 b ընդ, փխ. ընդդէմ
9 gk մերոյ / p մեր
9 y զօրացն մերոց
10 cg զլերամբք / lpgrs զլերամբն
11 Ա ոստնչէին / f և ի մերոց
11 Ա քաջք զրեհաւորք
12 Կ[2]Հd փայլակացն / l ի փայլատակաց / Կ[1]Վ[3]gnopqrsy ի փայլատակացն
12 Ա ի տեսութենէն միայն
12 p չիք ի (տեսութենէն)
13 y ի պարսկական
14 ab ծագմանն
14 c զբախելն / del ի բախել / tw ի բաղխել / միւսն. ի բախելն
15 agl հողմն / Հ սաստից
15 Հfgk ի մերոց
17 a չիք քաջն
17 a գեշգիր / Վbfkmno շէրգիր
17 Կ[2]abdef զգլուխն / ՏԹ միջի
19 b զգունդն, փխ. զխումբն
19 odqrs չիք որպէս—և զխումբն (s. 20)
19 ՏԹd շանթահար
20 Հ չիք զքաջն
20 abcefiw պատուեալ զխումբն
21 ՏԹ հասարակ
22 ՏԹ Թշնամեաց / f չիք Թշնամեացն
24 o ի մուշեղէ / k վասակայի
24 Ա մամիկոնէի / w չիք որդւոյ—մամիկոնենի

Բայց ամբարշտին Մեհրուժանայ վիրաւորեալ ձին՝ ոչ կարաց երագել ընդ փախստեայսն. որում ածապարեալ հասանէ սպարապետն հայոց Սմբատ, և զորս ընդ նմայն էին կոտորեալ՝ ձերբակալ առնէ զմատչուէրն յեզեր շամբին Կոգայովտի։ Եւ զմտաւ ածեալ, թէ զուցէ թափիցէ զնա մեծն Ներսէս, այնորիկ աղագաւ ոչ ածէ ի բանակն. այլ զտեղւոջն գտանէ պատրաստական առ ի կորուստ ամբարշտին զմանս խորանաւորս հուր լուցեալ, և շամփուր երկաթի՝ միս խորովելոյ. զոր ջեռուցեալ, կրկնեաց բոլորեալ որպէս պսակ, և յոյժ արտաշէկ արարեալ, ասէ. «Պսակեմ զքեզ, Մեհրուժան, քանզի ի խնդիր էիր թագաւորել Հայոց. և ինձ ասպետիս պարտ է զքեզ պսակել ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց»։ Եւ մինչ դեռ տաքն էր իբրև զհուր՝ եդ ի գլուխն Մեհրուժանայ, և այնպէս սատակեցաւ չարն։ Եւ յայնմ հետէ խաղաղեցաւ երկիրն, ընդ ձեռամբ Պապայ նուաճեալ։

ԼԸ

Երէ ո՛րպէս Պապայ դեղ մահու արբուցեալ սրբոյն Ներսիսի՝ եղոյծ ի կենցաղոյս։

Յետ սպառելոյ պատերազմացն և խաղաղանալոյ երկրիս, մեծն Ներսէս գնէր վկայութիւն ի մէջ արքային Պապայ և ի մէջ նախարարացն՝ գնալ յամենայն ճանապարհս արդարութեան, զի վկայեսցեն ըստ հաւատոց քրիստոնէութեան և գործքն. և զի արքայն մի հօրն իւրում նմանեսցի, անիրաւել և զրկել, այլ վարեսցի ուղղութեամբ, հայրաբար խնամովք առ նախարարսն. և նոքա մի ևս յաւելցեն վտարանջել, նշկահելով զնա, այլ ծառայել միամտութեամբ։ Յայնժամ արքայն Պապ դարձեալ ի Կամսարականն Սպանդարատ զամենայն ինչ՝

1 c ամբարիշտն
1 Տխ մերուժանայ [Հ մեհրուժանայ]
2 l ընդ փախստայսն / y ընդ փախստեանսն
3 Տխ կոտորէ / c զմատչուէրն
4 aef կոգաովտի / վԷ կագայովտի / k կագաովտի / Հ կագայովտի
5 c տեղօքն
6 a չիք գտանէ
7 Տխ ի մխս խորովեալ
7 gky ջեռացուցեալ
8 c արտաշէկ
9 Տխ մերուժան
9 վcopqrs չիք ի (խնդիր)
10 ab սպարապետիս, փխ. ասպետիս
10 bcde իշխանութեանն
10 o իմոյ հայրենեաց իշխանութեան
11 Տխ տաք / Տխabcf ի գլուխ
12 Տխ մերուժանայ
12 Ա սատակեաց զչարն
12 Հctw խաղաղացաւ
15 pqs թէ
15 cor պապ / c արբուց
15 cdefors ներսէսի / etw և եղոյց
16 ce ի [c չիք ի] կենաց
17 oprs պատերազմաց
17 Ա երկրին
18 Տխ ի մէջ արքային և նախարարացն
19 Հ չիք զի։ Այստեղ վերջանում է Հ-ի համեմատութիւնը։
20 abcdetw քրիստոնէութեանն
20 k չիք և (գործքն)
20 ԽՏ և զի [Խopqrs չիք զի] արքայի մի հօր իւրում նմանել [Հ նմանիլ]
21 Հgk չիք անիրաւել
21 c վերասցի
22 d հայրենաբար / Տխ խնամով
22 Տխ մի ես յաւելցին
23 Ա վտարանգել [c վտանգել]
23 k չիք նշկահելով զնա, այլ ծառայել
24 Ա արքայն հայոց պապ
24 c զամենայն որ ինչ

զոր յափշտակեալ էր հօր իւրոյ Արշակայ, զգաւառն Շիրակայ և զԱրշարունեաց, որ լեալ էին ազգին Կամսարականաց, ոչ իբրև զանիրաւ ագահութիւն հօր իւրոյ Արշակայ, այլ իբրև պարգևս ընդ վաստակոց քաջին Սպանդարատայ, որ սպան զՂեկաց արքայն։ Այլ և զայլոց նախարարացն դարձոյց զզրկանս, և յոյժ անընչասիրաբար ցուցանէր զիւր ախորժակսն, և առատաբար կեայր։

Բայց զի ամօթալի ախտիւ զաղրագործ էր, և յանդիմանեալ կշտամբէր ի մեծէն Ներսիսէ, ընդ ակամբ հայէր ի նա, խորհելով չարիս, և ոչ իշխէր յինքնակալէն Թէոդոսէ յայտնի ինչ առնել նմա չարիս. դեղ մահու գաղտնի արբուցեալ սրբոյն Ներսիսի՝ եղոյծ ի կենցաղոյս. որ կալաւ զաթոռ եպիսկոպոսութեանն ամս երեսուն և չորս։ Եւ փոխեալ յաշխարհէս երանելւոյն Ներսէսի ի գաւառին Եկեղեաց, ի գեօղն որ կոչի Թախ, բարձեալ զմարմին նորա արքային Պապայ՝ թաղեաց ի Թիլն աւանին, զանխլաբար ունելով զեղեալսն։

ԼԹ

Յաղագս արտաքսմանն Սահակայ, եւ սպանմանն Պապայ ի Թէոդոսէ։

Ապա տեսեալ թագաւորին Պապայ ազգացեալ զամենայն Հայս ի վերայ երանելւոյն Ներսիսի, հարկաւորեալ յուղեաց և եգիտ զոմն յազգէ և ի ժառանգութենէ Աղբիանոսի, որում անուն Սահակ կոչէր, ոչ հեռի ի զօրութենէ. զոր կացոյց փոխանակ Ներսիսի առանց մեծի արքեպիսկոպոսին Կեսարու. որ կալաւ զաթոռն ամս չորս։

Բայց Պապայ լուեալ, եթէ մեծն Թէոդոս եկ ի Բիւզանդիոյ ի Հռոմ կոյս, և մտեալ ի Թեսաղոնիկ հանդերձ սպայիւն, և յաղագս իշխանին եղև խռովութիւն ընդ նա և ընդ քաղաքացիսն, և մարտ խռովութեան,

1 l զաշարունեաց / կ²tw արշարունեաց
2 Sw չիք որ լեալ էին ազգին կամսարականաց / c չիք ազգին
2 de զանիրաւութիւն, փխ. զանիրաւ
3 Sw զագահութիւն
3 Sw որպէս, փխ. իբրև / x պարգև
4 abde էսպան / Sw արքայ
4 Ա. բայց, փխ. այլ
5 opqrs ընչասիրաբար / tw անընչաբար
6 Ա. ախորժակս / Sw կայր
7 abdef ախտի
8 abdeno կշտամբիւր
8 bcef Ներսէսէ
8 Ա. հայէր նմա խորհելով ի չարիս
8 y խորհէր
9 gk չիք ինչ / Ա. չարութիւն
10 Ա. Ներսէսի
11 adefgkpr եպիսկոպոսութեան / l եպիսկոպոսապետութեանն
12 bcdeftw եկեղեց
12 cn ի գիւղն / g ի գեւղն
13 opqrs կախ, փխ. թախ
13 c և բարձեալ / d չիք արքային
13 Ա. ի Թիլս / w ի Թիլդս / g ի Թիւ
15 rs շահապայ / tw խահակայ
15 Աgko սպանման
15 a պապայ թագաւորին
16 b ցեալ, փխ. ազգեցեալ
17 Swc երանելւոյն
17 bdef Ներսէսի / c Ներսեսի
17 y ոմն
18 Sw շահակ [opqrs շահապ]
18 Swabde կոչիւր
19 l կացոյ
19 abdef Ներսէսի / c Ներսեսի
20 d երեք, կ²abetw Գ, փխ. չորս
21 c պատ
21 abf ի բիւզանդիայ / c ի բիւզանդիա
21 Ա. ի հռոմ
22 d ի թեսաղոնիկէ
22 ad իշխաւաց / bcef իշխանաց / կ² իշխաւանաց / g իշխանին / tw իշխանանաց
23 dek ընդ նոսա, փխ. ընդ նա
23 gk և մարտ խռովութիւն

